$t_{гк} = \frac{Q_к}{M_{пг} C_{пг}}$, °С. Где: $M_{пг}$-суммарная масса, кг, а $C_{пг}$ – Суммарная теплоемкость, ккал/кг.град продуктов автогенного термического разложения концентрата [5]. Согласно реакции (2) $M_{пг}$=1827(расплав)+1624(CO_2+SO_2)+2830 (азот). Для 1кг. концентрата $M_{пг}$=1.5 без азота, 2,7 с азотом и $C_{пг}$=0,254 без азота, 0,26 с азотом.

Тогда: $t_{гк}$ = 1030:1,5 · 0,25= 2750 и 1030:2,7 · 0,26 = 1480 °С.

Требуемая рабочая температура автогенного процесса составляет 1450 °С. В условиях использования технического кислорода температура горения концетрата получается выше нормы.

Горение сульфидов протекает в двух стадиях в гетерогенной и гомогенной фазах по реакциям.

$$8Cu_{1,5}Fe_3S_6 + 56.5\,O_2 \longrightarrow 5Cu_2S+Cu_2O+20FeO+2Fe_2O_3+43SO_2 \quad (3)$$

$$2Cu_2S+4Fe_2O_3 \longrightarrow 8FeO+4Cu+2SO_2 \quad (4)$$

$$Cu_2S+2Cu_2O \longrightarrow 6Cu+SO_2 \quad (5)$$

Гетерогенное горение происходит в факеле, лимитируется кинетикой и внутренней диффузией (начальная стадия, реак. 3),

Гомогенное – в расплаве, лимитируется диффузией (завершающая стадия, реак. 4,5)

Данные балансов материалов и тепла для 100 кг. вышеприведенного концетрата.

Баланс материалов (кг):

Масса воздуха – $M_{возд}$ =3,33(Cu+S)=167

Масса продуктов процесса:

Медь - M_{Cu} = 0,365 (Cu+S)=18; шлак $M_{шл}$ = 1,1 [0,58(Cu+S)+R]=55;

Газы – $M_{газ}$ = 3,9 (Cu+S) = 194; в том числе: SO_2-64, и N_2 + CO_2-130.

Где: Cu, S и R -процентное содержание меди, серы и оксидной массы в концентрате.

Баланс тепла в процессе (ккал):

Приход: тепло горения концентрата – 100·1030=103000

Физическое тепло: концентрата - 100·25·0,3=750

воздуха – 167·40·0,23=1550

105300ккал

Уносится: медью – 18·130·0,11=2600

шлаком – 55·1350·0,3=22500

газами – 130·1480·0,25+64·1480·0,18=65000

избыток - - - - - - - - - - - - - - 15200

105300ккал

Температуры воспламенения "$t_{вп}$", горения "$t_{гк}$", теплотворность "$Q_к$", баланс тепла характеризуют концентрат одновременно как теплоносителя и предопределяют возможность его самосжигания и плавления в автогенном режиме.

Ամփոփում

Հետազոտվել է Դրմբոնի (Արցախ) ոսկի-պղինձ-սուլֆիդային խտանյութը, որպես էներգակիր: Որոշված են խտանյութի ջերմատվությունը, բոցավառման ջերմաստիճանը և նրա այրման դիֆուզիոն-կինետիկական մեխանիզմը: Բերված են խտանյութի այրման նյութական և ջերմային հաշվեկշիռները: Ստացված տվյալներով խտանյութը բնութագրվում է, նաև որպես էներգակիր և ցույց է տրված ավտոգեն ռեժիմով նրա ինքնայրման, թերմոդիսոցման հնարավորությունը, առանց դրսից էներգիայի օգտագործման:

Резюме

Исследован золото-медный сульфидный концентрат Дрмьона (Арцах) как энергоноситель. Определены теплотворность, температуры воспламенения, диффузионно-кинетический механизм горения концентрата. Приведены материальные и тепловые балансы процесса горения концентрата. Полученные данные характеризуют концентрат одновременно как теплоноситель и предопределяют возможность его самосжигания и терморазложения в автогенном режиме, без применения энергии извне.

Литература

1. Г.Б.Григорян, Г.Г.Григорян ,Теплотворность сульфидных концентратов Армении , Ж. «Известия» НАНА и ГИУА. N3. 1998,С.382-385.
2. Ванюков В.В. Уткин Н.И., Комплексная переработка медного и никелевого сырья, М., Металлургия, 1988, 400с.
3. Г.Б.Григорян. Г.Г.Григорян, О возможности прямого получения меди из сульфидных концентратов, Ж «Известия» НАНА и ГИУА, N2 ,1999, с. 259-262.
4. Х.К.Аветисян , Металлургия черновой меди, М., Металлургия, 1954, 460с.
5. А.А. Вагин и др., Топливо, огнеупоры и металлургические печи, М.,«Металлургия», 1978, 430с.

УДК 532.7:546.21+546.212+661.185.1

О РАСТВОРИМОСТИ МОЛЕКУЛЯРНОГО КИСЛОРОДА В ВОДНЫХ РАСТВОРАХ ПОВЕРХНОСТНО – АКТИВНЫХ ВЕЩЕСТВ

П.Г.Багдасарян
кафедра химии

Водные растворы поверхностно-активных веществ (ПАВ) широко применяются в различных технологоческих процессах, в частности, в эмульсионной полимеризации [1,2].Эмульсионная полимеризация (ЭП) является важным методом получения синтетических полимеров, так как позволяет получать высокомолекулярные материалы с уникальными эксплуатационными характеристиками.Концентрации ПАВ. применяемые в эмульсионном методе получения полимеров, а также в других технологических процессах, как правило, значительно превышает критическую концентрацию мицеллообразования(ККМ).

Радикальная полимеризация очень чувствительна к наличию кислорода в полимеризационной системе.Влияние кислорода на процесс радиакальной полимеризации носит сложный характер.В большинстве случаев молекулярный кислород является ингибитором радиакального процесса, но в некоторых случаях приводит к увеличению скорости реакции инициирования полимеризационного процесса[2-4].

Учитывая важную роль кислорода в процессе радиакальной полимеризации и то, что в ЭП дисперсионной средой является вода, изучение растворимости молекулярного кислорода в водных растворах ПАВ является весьма актуальным как с научной, так и с практической точки зрения.

Экспериментальная часть

Для количественного определения кислорода в воде и в водных растворах ПАВ был использован полярографический метод анализа[5].Измерения проводили на полярографе марки ПУ-1 в режиме классической полярографии с равномерной разверткой потенциала со скоростью 7мВ/сек.В качестве фонового электролита использовался 0,1м раствор нитрата аммония.Количество исследуемого раствора составляло 5 мл, количество раствора фонового электролита-0,5мл.Анализ проводился к кюветах Новака емкостью~15мл.

В качестве ПАВ использованы анионоактивные соединения-сульфонол(натрий алкилбензолсульфонат $C_nH_{2n+1}C_6H_4SO_3Na$, где n=12÷18) и эмульгатор смешанной природы - С-10, представляющий собой продукт сульфирования ОП-10(моноалкиловый эфир полиэтиленгликоля на основе полимер-дистиллята $C_nH_{2n+1}C_6H_40(C_2H_40)mH$, где m=10÷12, n=8÷10).Из органических соединений использованы винилацетат(ВА), бутилакрилат(БА) и стирол (Ст), которые очищались по стандартным методикам.В качестве инертного газа использован аргон особой чистоты с содержанием кислорода не более0,0005%.

Растворимость кислорода в органических растворителях превышает его растворимость в воде[6].Природа растворителя влияет на величину равновесной растворимости кислорода и достигает максимальных значений для этилового спирта и ацетона.Уменьшение растворимости кислорода в воде может быть обусловлена очень плотной упаковкой молекул воды вследствие образования водородных связей[7].

Учитывая, что молекулы ПАВ содержат достаточно длинную гидрофобную углеводородную цепь, можно предположить увеличение растворимости молекулярного кислорода в водных растворах ПАВ.Кучер с сотр.[8,9] изучая растворимость кислорода в водных растворах ПАВ показал, что в присутствии ПАВ значительно повышается начальная скорость растворения и величина равновесной растворимости кислорода в воде.

Использованные нами водные растворы ПАВ имели концентрацию эмульгатора, значительно превышающую ККМ. Поэтому эмульгатор находится в растворе в виде мицелл сферической формы.Как известно мицеллообразование является самопроизвольным процессом, приводящим к перестройке структуры воды и увеличению энтропии системы [10]. Углеводородная часть молекулы ПАВ составляет ядро мицеллы, которую

можно представить как жидкую углеводородную фазу с очень рыхлой упаковкой молекул.Подобная структура углеводородной фазы должна являться хорошим растворителем кислорода.

Интересно отметить, что повышение температуры практически не влияет на скорость и предельные значения растворимости кислорода в водных растворах ПАВ.

Полярографическое изучение зависимости количества растворенного кислорода от концентрации сульфонола показало(рис.1), что существенного увеличения растворимости кислорода не происходит.По-видимому, это обусловлено особенностями адсорбции молекул ПАВ на поверхности ртутной капли, так как скорость адсорбции молекул ПАВ может превышать скорость образования ртутной капли[5].Экстремальная зависимость в области ККМ указывает на некоторое изменение механизма адсорбции молекул ПАВ на поверхности ртутной капли, связанное с изменением структуры раствора эмульгатора.Дальнейшее уменьшение количества растворенного кислорода, по-видимому, обусловлено тем, что на поверхности ртутной капли адсорбируются как молекулы ПАВ, так и мицеллы.Как видно из табл.1(полярограммы 1,2) адсорбция молекул сульфонола на поверхности ртутной капли приводит к резкому увеличению ½ потенциала восстановления кислорода, что связано с возникновением структурно-механического барьера на диффузионном пути молекул кислорода из раствора к ртутной капле.



Рис. 1

Зависимость количества растворенного в водном растворе сульфонола кислорода от концентрации эмульгатора

Из данных по зависимости количества растворенного кислорода в растворах сульфонола с различной концентрацией (рис.1) вытекает и то важное обстоятельство, что кислород, содержащийся в мицеллах эмульгатора с большим трудом диффундирует из мицелл в водную фазу и, следовательно, не может быть определен полярографически.Наиболее вероятным местом локализации кислорода, по-видимому, является ядро мицелл.

Для определения кислорода, находящегося в мицеллах эмульгатора необходимо либо привести мицеллы в сильно разрыхленное состояние, либо полностью разрушить их. Для разрушения мицелл нами был использован этиловый спирт, вводимый в раствор ПАВ. Выбор этилового спирта определяется тем, что он хорошо растворяется в воде и является хорошим растворителем ПАВ и кислорода.О том, что этиловый спирт приводит к разрушению мицелл свидетельствует незначительное изменение ½ потенциала восстановления кислорода после введения 2-х и более мл спирта к 5мл анализируемого раствора и постоянство определяемого кислорода(табл.2).

Нами был изучен также процесс растворения кислорода в мицеллах ПАВ, с солюбилизированными мономерами. ВА, БА и Ст солюбизировались в водном растворе

сульфонола (Сэ=2,5г/л), после чего насыщались кислородом до состояния равновесной растворимости в течение 12 час.Как видно (табл.1, полярограммы 1,4,6,8) количество растворенного в солюбилизатах мономеров кислорода значительно превышает растворимость его в дистиллированной воде и в растворе сульфонола той же концентрации.Введение этилового спирта приводит к увеличению концентрации определяемого кислорода, причем увеличение количества определяемого кислорода наиболее сильно проявляется для стирола(табл.1, полярограммы 5,7,9).Полученные результаты указывают на то, что солюбилизаты мономеров являются хорошим растворителем молекулярного кислорода, а возможность полярографического определения кислорода, растворенного в солюбилизатах мономеров показывает, что солюбилизация углеводородов сопровождается разрыхлением мицелл.Разрыхление мицелл приводит к облегчению процесса диффузии кислорода из мицелл в водную фазу и обратно.

Из данных(табл.1) видно, что степень разрыхления мицелл зависит от полярности солюбилизированного мономера и может быть разложена в следующей последовательности ВА>БА>Ст. Это приводит к тому, что равновесная концентрация растворенного в солюбилизате молекулярного кислорода является наименьшей для ВА и возрастает с уменьшением полярности мономера.Добавление этилового спирта к солюбилизатам приводит к значительному

Таблица 1

Полярографические параметры и растворимость кислорода в растворах эмульгаторов и солюбилизатах углеводородов

Условия	I волна		Концентрация кислорода, г/л·10²
	-E½, В	I, мм	
1. Дистиллированная вода, насыщенная кислородом, у=2	0,17		4,34
2. –II-. Непосредственно перед анализом добавлен сульфонол(Сэ=1г/л); у=2	0,70	34	4,34
3.Раствор сульфонола(Сэ=2,5г/л), насыщенный кислородом; у=2	0,69	76	9,64
4.Солюбилизат ВА в растворе сульфонола(Сэ=2,5г/л), насыщенный кислородом, у=2	0,80	95	12,13
5.–II-.Добавлено 2мл обескислороженного этилового спирта; у=2	0,81	83	14,41
6.Солюбилизат БА в растворе сульфонола (Сэ=2,5г/л), насыщенный кислородом; у=2	0,95	138	17,62
7.–II-.Добавлено 2мл обескислороженного этилового спирта; у=2	0,77	113	19,62
8.Солюбилизат Ст в растворе сульфонола (Сэ=2,5г/л), насыщенный кислородом; у=2	0,87	128	16,342
9.–II-.Добавлено 2мл обескислороженного этилового спирта; у=2	0,60	100	18,895

Примечание: у-коэффициент усиления по току

Таблица 2

Влияние этилового спирта на определяемую концентрацию кислорода в 3%-ном растворе сульфонола и С-10(1:1)

I волна		Этиловый спирт, мл	Концентрация кислорода, г/л·10²
-E½, В	I, мм		
0,55	50	—	6,3338
0,51	48	1	7,3541
0,48	53	2	9,0675
0,47	47	3	9,0011

разрыхлению или к полному разрушению мицелл, в результате чего определяемая полярографически концентрация кислорода значительно увеличивается и, по-видимому, соответствует величине равновесной растворимости.

Выводы

1. Увеличение растворимости молекулярного кислорода в водных растворах ПАВ обусловлено его локализацией в ядре мицелл.
2. Солюбилизация органических соединений мицеллами эмульгатора приводит к их разрыхлению.При этом степень разрыхления мицелл увеличивается с увеличением полярности органического соединения.
3. Солюбилизаты органических соединений являются хорошим растворителем молекулярного кислорода.

Ամփոփում

Աշխատանքում ուսումնասիրված է ՄԱՆ-երի ջրային լուծույթներում թթվածնի լուծելիությունը: Ցույց է տրված, որ թթվածնի լուծելիությունը էմուլգատորի միցելներում և մոնոմերների սոլյուբիլիզատներում զգալիորեն գերազանցում է ջրում նրա լուծելիությանը: Էմուլգատորի միցելներում թթվածնի այդպիսի տեղայնացումը կարող է լուրջ ազդեցություն ունենալ տարբեր տեխնոլոգիական պրոցեսների վրա, ինչպես օրինակ, ՄԱՆ-երի ջրային լուծույթների օգտագործման ժամանակ էմուլսիոն պոլիմերացման վրա:

Резюме

В работе изучена растворимость молекулярного кислорода в водных растворах ПАВ. Показано, что растворимость кислорода в мицеллах эмульгатора и в солюбилизатах мономеров значительно превышает его растворимость в воде. Подобная локализация кислорода в мицеллах эмульгатора может оказывать серьезное влияние на различные технологические процессы как, например, ЭП при применении водных растворов ПАВ.

Литература

1. А.А. Абрамзон, Л.Е. Боброва, Л.П. Зайченко и др., Поверхностные явления и поверхностно-активные вещества: Справочник./ Под ред. А.А. Абрамзона и Е.Д. Щукина. - Л.: Химия. 1984, - 239 с.
2. В.И. Елисеева, С.С. Иванчев, С.И. Кучанов, А.В. Лебедев, Эмульсионная полимеризация и ее применение в промышленности, М., Химия, 1976, - 239 с.
3. Реакции в полимерных системах./ Под. Ред. С.С. Иванчева., Л., Химия, 1987, 304 с.
4. В.А. Попов, М.М. Опарина, Роль кислорода в радикальных процессах, В сб. „Физико-химические основы синтеза и переработки полимеров", Горький: ГГУ, 1983, с.3-7.
5. А.М. Бонд, Полярографические методы в аналитической химии, М., Химия, 1983, 328 с.
6. Р. Рид, Дж. Праусниц, Т. Шервуд, Свойства газов и жидкостей, Л., Химия, 1982, 592 с.
7. Д.А. Фридрихсберг, Курс коллоидной химии, Л., Химия, 1984, 368 с.
8. Р.В. Кучер, В.И. Карбан, Химические реакции в эмульсиях., Киев, Наукова Думка,1979,142 с.
9. Р.В. Кучер, М.А. Ковбуз, Особенности солюбилизации молекулярного кислорода в растворах ПАВ, Тезисы докладов VIII Всесоюзной конференции по коллоидной химии и физико-химической механик,Часть III. Ташкент, 1983, с.46-47.
10. Мицеллообразование, солюбилизация и микроэмульсии./ Под ред. К. Миттела. – М., Мир, 1980, 598 с.

ՀՏԴ 612.1

ՀԱՋՈՐԴԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ «ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ, ԱՐՅՈՒՆ» ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Գ.Ս.Բաբայան

մաթեմատիկայի և բնագիտական առարկաների դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Հոդվածի հեղինակը երկար տարիներ աշխատել է դպրոցում, դասավանդել է կենսաբանություն, քիմիա ուսումնական առարկաները, ներկայումս աշխատում է ԱրՊՀ մաթեմատիկա և բնագիտական առարկաների դասավանդման մաթոդիկայի ամբիոնում, դասավանդում է «Կենսաբանության դասավանդման մեթոդիկա» առարկան: Այդ առարկայի ուսուցման գործընթացում նկատել է, որ ուսանողները դժվարությամբ են պատասխանում «Օրգանիզմի ներքին միջավայր» թեմայի բովանդակության մեջ մտնող հետևյալ հարցերին:

-Ինչպիսի՞ նմանություն կա բուսական և կենդանական օրգանիզմների ներքին միջավայրի միջև:

-Օրգանիզմում նյութափոխանակության գործընթացներին մասնակցող նյութերի տեղաշարժի և անոթների տեղադրության ինչպիսի՞ համապատասխանություն գոյություն ունի:

-Ինչպիսի՞ գործընթացներ են նպաստում անոթներով նյութերի տեղաշարժմանը:

Իսկ առանց այդ հարցերի իմացության, հնարավոր չէ, այդ թեմայի իմաստը հասկանալ բարձր մակարդակով:

Այդ բացը վերացնելու նպատակով հեղինակը նկել է այն եզրակացության, որ այն կարելի է վերացնել «Հաջորդայնությունը» գիտահետազոտական մեթոդի միջոցով, որը պարունակում է ներառարկայական և միջառարկայական կապերի ապահովումը ուսուցման գործընթացում դպրոցական կենսաբանության կարևոր պահանջներից մեկն է: Նա ապահովում է բնագիտական առարկաների փոխադարձ կապը, ուսուցումը դարձնում է հետևողական, հետաքրքիր, բովանդակալից, զարգացնում է դպրոցականների տրամաբանական մտածողությունը:

Այսպես՝ 8-րդ դասարանում «Օրգանիզմի ներքին միջավայր» թեմայի ուսուցման ժամանակ, աշակերտների մոտ յուրացումը բարձր մակարդակի հասցնելու նպատակով, կարելի է կիրառել հաջորդայնություն գիտահետազոտական մեթոդը՝ ապահովելով ներառարկայական կապերը կենսաբանության տարբեր բաժինների միջև, ինչպես նաև ստեղծել միջառարկայական կապեր ֆիզիկայի և քիմիայի հետ: Օրինակ՝ ուսուցման գործընթացում կարելի է կիրառել հետևյալ միջառարկայական կապ «Բուսաբանություն» և «Մարդ- անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա» առարկաների միջև:

5-րդ դասարանում աշակերտները «Բուսաբանություն» առարկայից ստացած գիտելիքներից հիշում են (հետադարձ կապեր), որ բարձրակարգ բույսերից ծաղկավոր բույսերը հողից վերցնում են ջուր և հանքային աղեր (սննդառություն), իսկ տերևներում տեղի է ունենում ֆոտոսինթեզ և առաջանում են օրգանական նյութեր: Ջուրը, նրա մեջ լուծված հանքային աղերը, սինթեզված օրգանական նյութերը հասնդիսանում են բույսերի ներքին հեղուկ միջավայրը: Իսկ կենդանիներից, որպես բարձրակարգ օրգանիզմ՝ մարդու մոտ, օրգանիզմի ներքին հեղուկ միջավայրը հանդիսանում է արյունը, ավիշը և հյուսվածքային հեղուկը, որոնք նույնպես, իրենց մեջ պարունակում են ջուր, հանքային աղեր, օրգանական նյութեր: Եվ այդ ներքին հեղուկ միջավայրի կայունության հաստատությունից է կախված թե բույսերի և թե կենդանիների օրգանիզմներում տեղի ունեցող ընդհանուր կենսական օրինաչափությունները:

Այսպիսի մոտեցումը ուսուցման գործընթացում երեխաների մոտ ամրապնդում է այն պատկերացումը, որ թե բուսական և թե կենդանական օրգանիզմներն ունեն միանման ֆիզիոլոգիական կենսական օրինաչափություններ, որոնք ապացուցում է օրգանական աշխարհի միասնական ծագման էությունը և որ բուսական և կենդանական օրգանիզմները իրենցից ներկայացնում են բարդ համակարգեր:

Ներառակայական կապ է ստեղծվում նաև այն դեպքում, երբ ուսումնասիրվում է «Մարդու արյունատար համակարգը» թեմայի արյան անոթների դասավորվածությունը և նշանակության հարցերը: Այստեղ ևս ուսուցման գործընթացում կիրառվում է նորից հետադարձ միջառարկայական կապ «Բուսաբանություն» և «Մարդ - անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա» առարկաների միջև: 5-րդ դասարանում աշակերտները բուսաբանության դասընթացից գիտեն, որ բույսերի մոտ անոթները սնամեջ խողովակներ են փայտացած պատերով, գտնվում են բաստիսում, սկսվում են արմատներից՝ ներծծման, փոխադրման, հատված, (բույսի սննդառության) հասնում մինչև տերևները: Ցողունով անցնող անոթներով հողից վերցրած ջուրը ու հանքային աղերը շարժվում են մի ուղությամբ ներքևից դեպի վերև:

Բարձրակարգ բույսերի մոտ գոյություն ունի նաև մաղանման անոթների համակարգ: Այդ համակարգում ուղղահայաց շարքով դասավորված են մաղանման լայնակի միջնաթաղանթներով կենդանի բջիջներ (դրանք հիշեցնում են մարդու երակներին՝ իրենց գրպանիկներով), որոնք գտնվում են կեղևի լուբում (ֆլոեմում) և շարժվում են սկսած տերևներից, անցնում ցողունով և հասնում մինչև արմատը: Այս անոթներով շարժվում են տերևներում սինթեզված օրգանական նյութերը: Այսպիսով՝ բույսերի ցողունի տարբեր մասերով վեր ու վար անցնում են անոթներ, որոնք բջիջներին են հասցնում անհրաժեշտ սննդանյութեր և այնտեղից դուրս են բերում սինթեզված օրգանական նյութերը և կենսագործունեության վերջնական արգասիքները: Բարձրակարգ բույսերի մոտ նման անոթների համակարգը ապահովում է կապն բոլոր օրգանների բջիջների միջև, որի հետևանքով օրգանիզմը գործում է մի ամբողջական համակարգ: Եվ այդպիսի համակարգը այնպիսի առավելություն է հաղորդում կենդանի օրգանիզմին, որ նրանք ցուցաբերում են ճկունություն միջավայրի պայմաններին՝ սեզոնային երևույթներին հարմարվելու գործընթացում: Դասավանդման գործընթացում ծաղկասերմերի այդ առանձնահատկությունների մասին նշվում է նաև 10-րդ դասարանում, երբ ուսումնասիրվում է «Օրգանիզմների հարմարվածությունը միջավայրի պայմաններին» թեման: Այստեղ ապահովում ենք նախնական հետանկարանային ներառարկայական կապը՝ 10-րդ դասարանում ուսումնասիրվելիք նյութը, ծանոթացնում ենք 8-րդ դասարանում և շեշտում՝ ծաղկասերմերի առավելությունները մյուս բուսատեսակների նկատմամբ ընդգծելով, որ հենց այդ առավելության հետևանքով ծաղկասերմերը գերիշխում են Երկիր մոլորակի վրա:

Բուսական աշխարհին բնորոշ կենսաբանական օրինաչափությունները կապում են կենդանական աշխարհի ամենաբարդ կառուցվածք ունեցող օրգանիզմի՝ մարդու օրգանիզմի ներքին միջավայրի՝ արյան շրջանառության հետ: Որպես բարդ համակարգ՝ մարդու օրգանիզմում արյունը և արյան շրջանառությունը նման է բույսերի մոտ ջրի, հանքային աղերի և օրգանական նյութերի տեղաշարժին: Այս դեպքում ևս կիրառվում է ներառարկայական կապ բուսական և կենդանական օրգանիզմների ընդհանուր օրինաչափությունների նմանությունների հաստատման նպատակով:

Էվոլյուցիայի ընթացքում, մարդու մոտ արյունատար անոթների և բույսերի մոտ ջրատար և սննդարար անոթների տեղադրությունը նույնպես համարվում է օրգանիզմների հարմարվածության տեսակետից բնական ընտրության արդյունք:

10-րդ դասարանում «Օրգանիզմների հարմարվածությունը և նրա հարաբերակցությունը» թեման ուսումնասիրելիս, կարելի է անդրադառնալ այս թեմային (հետադարձ միջառարկայական կապ) առաջադրելով հետևյալ հարցադրումները. միաժամանակ ստեղծելով պրոբլեմային իրավիճակ:

-Ինչու՞ ծաղկավոր բույսերի մոտ ջուրը և հանքային աղերը շարժվում են ցողունի ավելի խորը մասերով՝ քնափայտի անոթներով:

-Ինչու՞ մարդկանց մոտ զարկերակները գտնվում են օրգանիզմի ավելի խորը մասերում և որոշ տեղեր են միայն այն դուրս գալիս մակերևույթին մաս (ուսուցիչ, դասատակ, պարանոցի):

-Ինչու՞ մաղանման անոթները բույսերի մոտ, երակները՝ մարդու մոտ, տեղադրված են մաշկի տակ, վերնամաշկի տակ՝ լուրում:

Պատասխան - Այդպիսի դասավորվածությունը ձևավորվել է այն պատճառով, որ արտաքին վնասվածքների դեպքում այդ անոթները անվնաս մնան, որովհետև ավելի խորքում պաշտպանված վիճակում են գտնվում, ուստի դրա առաջին նախապայմանն այն է, որ ֆոտոսինթեզի համար անհրաժեշտ նյութերը պետք է հասնեն տերևներին, որով էլ պայմանավորված է բույսի՝ որպես ամբողջական օրգանիզմի կենսական գոյությունը: Երկրորդ նախապայմանը այն է, որ վնասված մասի վերականգնման համար անհրաժեշտ էներգիան (սննդանյութերը և օրգանական նյութերը) արտաքին մակերևույթի մոտ շարժվելով, ավելի մեծ հնարավորություն են ստեղծում հենց այդ վնասված մասի արագ վերականգնման և վերակառուցման համար:

Նման պարզաբանումները կարող ենք անել նաև մարդու օրգանիզմում անոթների տեղադրության մասին: Մարդու մոտ զարկերակները գտնվում են ավելի խորը մասերում՝ ոսկորների մոտ կամ անցնում են ոսկորների արանքով, բայց որոշ տեղերում նրանք մակերևույթ են դուրս գալիս, որոնց միջոցով հնարավորություն է ստեղծվում շոշափել արյան անոթների տատանումները՝ անոթազարկը: Սա արդեն բնության հրաշք է, կանխամտածված ստեղծագործություն: Բոլորին լավ հայտնի է, որ երբ վնասվում են զարկերակները, շատ դեպքերում անհրաժեշտ է լինում բժշկի միջամտությունը:

Եթե ավելի խորանանք և տանք այդ նմանությունների բուն էությունը, ապա հասկանալի կլինի այն, որ կենդանիների և մարդու օրգանիզմում հեղուկ նյութերի շարժումը պայմանավորված է, սրտի ներծծող ուժի ազդեցությամբ ու անոթներում - սրտում ճնշումների տարբերությամբ:

Բույսերի մոտ հեղուկ նյութերի տեղաշարժը նույնպես կատարվում է ճնշումների տարբերության հետևանքով՝ հողում ջրի ճնշումը ավելի մեծ է, քան բույսի բջիջներում (սրմատամազիկներում), իսկ ներծծող ուժ ունի բույսի սաղարթ՝ ջրի գոլորշիացման շնորհիվ:

Վերոհիշյալ տենդենցները մեծ կիրառություն ունեն բժշկության գյուղատնտեսության ասպարեզում:

Ամփոփում

Այսպիսով ապացուցելով ներառարկայական կապերը կենսաբանության տարբեր բաժինների՝ բուսաբանության և մարդ - անատոմիա, ֆիզիոլոգիա, հիգիենա, ընդհանուր կենսաբանություն առարկաների միջև ու միջառարկայական կապեր հարակից առարկաների՝ քիմիայի, ֆիզիկայի, միջև կարելի է ուսուցման գործընթացում երեխաներին տալ ավելի խորը գիտելիքներ այնպիսի բացառիկ թեմայի մասին, ինչպիսին է «Օրգանիզմի ներքին միջավայր» թեման:

Резюме

Таким образом, доказав межпредметные связи в разных областях биологии, между предметами ботаника, анатомия, физиология, гигиена и общая биология и связь между параллельными предметами химия и физика , можно в процессе обучения дать детям более глубокие знания на такие специфические темы, как тема "Внутренная среда организма".

Գրականություն

1. Ս. Հ. Սիսակյան, Տ. Վ. Թահիրյան, Ա. Մ. Գասպարյան, «Կենսաբանություն-Բույսեր» 5-րդ դաս., Երևան, 1999:
2. Ս. Մինասյան, Ծ. Ադամյան, Հ. Հովհաննիսյան, «Կենսաբանություն-Մարդ» 8-րդ դաս., Երևան, 2005:
3. Յու. Ի. Պոլյանսկի, Ա. Դ. Բրաուն և ուրիշներ, «Ընդհանուր կենսաբանություն» 9-րդ դաս., Երևան, 2005:

ՀՏԴ 616.995.1

ԼՂՀ ՀԱՎԵՐԻ ԵՎ ԱՂԱՎՆԻՆԵՐԻ ՀԵԼՄԻՆԹՈԶՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԵՄ ՏԱՐՎՈՂ ՊԱՅՔԱՐԸ

Ա.Բ.Աղասյան, Ս.Ա.Աղասյան
կենսաբանության ամբիոն

Թռչունների, այդ թվում հավերի և աղավնիների հելմինթոզները, պարազիտ ժապավենաձև, ծծող և կլոր որդերի կողմից առաջացվող, լայնորեն տարածված, հիվանդություններ են: Դրանցից թռչունները կորցնում են իրենց բնականոն կենսակերպը, լավ չեն ուտում կամ էլ բոլորովին հրաժարվում են կերից, նիհարում, կամ էլ հյուծվում են, նշանակալի պակասեցնում են քաշը և ձվատվությունը, իսկ ուժեղ վարակվածության և չբուժելու դեպքերում հաճախ մահանում են:

ԼՂՀ (նախկինում Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ) Ադրբեջանի հանրապետության կազմում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանում (1921-1991թթ) վայրի ֆաունայում ապրող և կոլտնտեսություններում ու սովխոզներում պահվող թռչունների հելմինթոզների ուսումնասիրման, առավել ևս դրանց բնության մեջ շրջապտույտի, բուժման ու նախականխարգելման ուղղությամբ ոչինչ չի կատարվել, չնայած այդ տարիներին շատ տնտեսություններում հաճախ էր լինում հավերի մեծաթիվ մահացություններ:

Արցախի լրիվ ազատագրումից հետո 1994 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության Ազգային Ակադեմիայի Կենդանաբանության ինստիտուտի տնօրեն ակ. Ս. Օ. Մովսիսյանի ղեկավարությամբ գիտաշրջագային խումբը (Գ.Ա. Բոյախչյան, Ն.Ա. Զուբարյան, Վ.Դ. Հակոբյան, Մ.Ա. Նիկողոսյան, Ռ.Ա. Պետրոսյան, Լ.Ա. Հովսեփյան և ուրիշներ) շուրջ 10 տարվա համակողմանի ուսումնասիրության արդյունքներով պարզել են (1), որ այստեղ թռչունների մոտ տարածված են մի շարք հիվանդություններ (ասկարիդոզ, ռայետինոզ, սինգամոզ, սկրյաբինոզ, դավենինոզ, հետոնեկիդոզ, դրեպանենիդոթենիոզ, անոթենիոզ, պրոստոգոմինոզ և այլն), որոնք ժամանակին չէին ախտորոշվում և բուժվում, որի արդյունքում տնտեսությունները և թռչնատերերը կրում էին մեծ վնասներ:

Ելնելով դրանից մենք վերջին տարիներին որոշ ուսումնասիրություններ ենք կատարել հավերի և ընտանի ու վայրի աղավնիների հելմինթոզների (ասկարիդոզ ռայետինոզ, սինգամոզ) ախտորոշման համաճարակաբանության և բուժման արդյունավետության ուսումնասիրության ուղղությամբ:

Ուսումնասիրությունները կատարել ենք 2-8 ամսեկան թռչունների դիակների լրիվ հերձման, աղիների պարունակության ջրով հաջորդական լվացման և կղանքի նմուշում պարազիտ որդերի ձվերի հայտնաբերման եղանակով: Ի դեպ հարկ է նշել, որ վայրի և ընտանի աղավնիների մեծաթիվ դիակների առաջացումը 2006թ. սկզբին կապված է եղել թռչունների շրջանում խոլերա հիվանդության սուր և գերսուր ընթացքի հետ (հիմք հանրապետական անասնաբուժական լաբորատորիայի 2006թ. տված բազմաթիվ օրդերները): Կղանքի նմուշը հելմինթների ձվերի հայտնաբերման համար վերցրել ենք թռչունների ուղիղ աղիքից: Հետազոտությունը կատարել ենք Ֆյուլլեբորնի եղանակով: Վարակվածության չափը (%) ցույց է տրված ստորև բերվող աղյուսակում:

հավ			աղավնի					
			ընտանի			վայրի		
ասկարիդոզ	սինգամոզ	ռայետինոզ	ասկարիդոզ	սինգամոզ	ռայետինոզ	ասկարիդոզ	սինգամոզ	ռայետինոզ
			օնոկոդպիա					
30	15	10	20	4	8	10	1	4
			աղիների պարունակության հաջորդական լվացում					
35	15	15	22	4	10	12	-	6
			աղիների հերձում					
40	25	15	25	15	14	20	2	6

Աղյուսակից երևում է, որ հավերի և աղավնիների մոտ բոլոր դեպքերում ավելի մեծ վարակվածություն եղել է ասկարիդոզից, ընդ որում, դա ընտանի աղավնիների մոտ գրեթե երկու անգամ ավելին է, քան վայրի ֆաունայում ապրողներինն է: Վարակվածության ցուցանիշով երկրորդ տեղում է կանգնած սինգամոզը, երրորդում՝ ռայետինոզը: Տարբեր

հելմինթոզներով վարակվածության ինտենսիվությունը տարբեր է եղել տարբեր դիակներում: Այսպես, ասկարիդների քանակը տարբեր հավերի բարակ աղիքներում եղել է 1-12 սահմաններում, աղավնիների մոտ՝ 1-6 սահմաններում: Սինգամուսների քանակը հավերի շնչափողում և բրոնխներում եղել է 2-8-ի սահմաններում աղավնիների մոտ՝ 2-4 սահմաններում: Ռայետիենոզի որդերի քանակը հավերի բարակ աղիներում եղել է 1-3 սահմաններում, իսկ աղավնիների մոտ դրանք եղել են մեկը կամ երկուսը: Միաժամանակյա վարակման դեպքեր ասկարիդոզից և ռայետինոզից մենք չենք արձանագրել, մինչդեռ 1-5% դեպքերում ասկարիդոզով վարակված թռչունների մոտ նկատվել է նաև սինգոմոզով վարակվածություն:

Հանրապետության տարբեր գոտիների կտրվածքով թռչունների վերը նշված հելմինթոզներով վարակվածության դիտարկումը հիմք է տալիս նշել, որ հանրապետության հարթավայրային, նախալեռնային շրջաններում թռչունների վարակվածությունը ավելի բարձր է եղել քան միջին լեռնային և բարձր լեռնային շրջաններում, որը մեր կարծիքով, պետք է բացատրել հարթավայրային և նախալեռնային գոտում գլխավորապես պարազիտների ձվերի և սաղմների պահպանման ու զարգացման ավելի նպաստավոր պայմաններով (ջերմաստիճան, խոնավություն) և միջնորդ ու պահեստային տերերի առատությամբ: Միջին և բարձր լեռնային գոտում փոքր է. նաև միջնորդ պահեստային տերերի վարակվածության ցուցանիշը: Այստեղ հիմնական սահմանափակող գործոնը հավանաբար ցածր ջերմաստիճանն է:

Հայտնի է, որ վերը նշված և մյուս հելմինթոզների դեմ արդյունավետ բուժում և պայքար կազմակերպելու համար շատ կարևոր է ժամանակին և ճիշտ ճանաչել, ախտորոշել այդ հիվանդությունները, ի հայտ բերելով պարազիտ որդերի զարգացման կենսացիկլերը:

Ելնելով դրանից նշենք, որ հավերի ասկարիդոզի հարուցիչը համարվում է կլոր պարազիտ որդերի խմբին պատկանող Ascaridia galli որդը, որի չափահաս էգերի երկարությունը կազմում է 7-10սմ, արուներինը՝ 3-7սմ(նկ 1):

Դրանք ունեն դեղնասպիտակավուն գույն և ծայրերում սրացած տեսք: Մարմնի առջևի ծայրում գտնվող բերանի շուրջը նրանք ունեն երեք շրթունքներ, որոնցից յուրաքանչյուրի վրա լինում է երկու ատամնաձև թիթեղ(նկ 1):



Նկ. 1. Հավերի ասկարիդի և նրա ձվերի կազմությունը
1- արու, 2- էգ, 3- գլխիկ, 4- արուի պոչի ծայրը, 5- էգի պոչի ծայրը,
6- ոչ թրթռուկակիր ձու, 7- թրթռուկակիր ձու

Արուն հետին ծայրում՝ հետանցքից առաջ ընկած հատվածում ունենում է խոշոր ծծիչ: Էգի և արուի մարմինը արտաքինից պատած է կուտիկուլայով:Նրանք ապրում են գերազանցապես տասներկումատյա աղիքում: Այստեղ նրանց կյանքի տևողությունը 9-14 ամիս է (էգերը արուներից երկար են ապրում): Կենսացիկլը ընթանում է գերազանցապես ուղղակի ճանապարհով (էգի կողմից կդանքի հետ բեղմնավորված ձվեր արտաքին աշխարհի դուրս բերելով): Ձվերի երկարությունը կազմում է 0.07-0.09սմ, լայնությունը՝ 0.04-0.06սմ: Դրանք պատած են ամուր ձվաթաղանթներով, որոնք նրանց տալիս են արտաքին անբարենպաստ պայմաններին լավ դիմակայելու հատկություն: Այդպիսի ձվերում շրջակա միջավայրի անհրաժեշտ ջերմության (15-30°) և հարաբերական խոնավության (48% և ավելին) պայմաններում շուրջ 5-25 օրվա ընթացքում զարգանում են ինվազիոն

(վարակունակ) թրթուրներ: 25-30°c դեպքում դրանք զարգանում են 3-4 օրվա ընթացքում: Այդպիսի թրթուրակիր ձվերը թռչունների օրգանիզմ են ընկնում կերի և ջրի հետ: Վերջիններիս ձվաթաղանթները աղեխոռոչում մարսողական հյութերի ազդեցությամբ բայքայվում են և դրանցից դուրս եկած թրթուրները մի քանի անգամ մաշկափոխվելով 35-38 օրվա ընթացքում դառնում են սնուցիասուն և վերը նշված ճանապարհով սկսում են վարակ տարածել շրջակա միջավայրում: Մատղաշ թռչունների (2-8 ամսական) մոտ պարազիտ թրթուրներից չափահաս վիճակին անցնելը տևում է ավելի կարճ, քան չափահասների մոտ: Ճուների և մատղաշների մոտ ախտահարումները (լորձաթաղանթի բայքայում, արյունազեղումներ, խցանումներ, աղիքի պատի ամբողջականությանը խախտում և այլն) լինում են խորը, և շատ դեպքերում ավարտվում են մահացությամբ:

Բացի վերը նշված ուղղակի վարակման ճանապարհից, որոշ հեղինակներ վերջերս գտնում են, որ թռչունների ասկարիդոզից վարակում հնարավոր է նաև պատեհապային տերերի (անձրևորդեր, գոմաբարդեր և այլ սակավախոզան որդեր) ուտելու միջոցով (2): Ի դեպ, այս դեպքում նրանց զարգացումը իսկական տերերի օրգանիզմում ընթանում է ավելի արագ: Հաշվի առնելով այս հանգամանքը, մենք կարող ենք ենթադրել, որ մեզ մոտ հավերի ազատ պահվածքի պայմաններում վարակման այս ուղին դառնում է ավելի նշանակալի, որը պետք է հաշվի առնել այդ հիվանդների բուժական և նախազգուշական ճիճվահանության (դեհելմինտիզացիա) միջոցառումները կազմակերպելիս:

Հավազգիների, սագազգիների, ճնճղուկազգիների և որոշ այլ թռչունների մոտ հանդիպող սինգամոզը հարուցվում է Syngamus trachea պարազիտ կլոր որդի կողմից:

Չափահաս սինգամուսները տեսակայվում են գլխավորապես շնչառիոցում, իսկ առանձին դեպքերում նաև բրոնխներում: Դրանց չափահաս էգերի երկարությունը կազմում է 5-7մմ, արուներինը՝ 2-4մմ: Ընդ որում, էգը և արուն միշտ լինում են յուրահատուկ երկատված ձևով (նկ.2).



Նկ. 2. սինգամոզի որդի և նրա ձվերի կազմությունը
1- էգ, 2- արու, 3- գլխիկ, 4- պոչ, 5- ոչ թրթուրակիր ձու, 6- թրթուրակիր ձու

Սինգամոզով տառապում են գլխավորապես 2-8 ամսական ճուները և մատղաշ թռչունները: Հիվանդությունը ունի օջախային բնույթ և ավելի մեծ բռնկումներ է առաջացնում գարնան երկրորդ կեսից, աշնան առաջին կեսերին: Չափահաս թռչունների մոտ հիվանդությունը նկատվում է բացառիկ դեպքերում: Թռչունների շնչուղիներում տեղադրված չափահաս որդերը ունենում են վնաս կարմիր գույն, որը պայմանավորված է նրանց աղիներում գտնվող , տերերի լորձաթաղանթի մազանոթներից ծծած արյան գույնով: Այդ պարազիտ որդերի մարմնի առաջնային ծայրում գտնվող բերանային պատիճը լավ է զարգացած՝ մեծ է, ունի գնդաձև տեսք: Դա ունի խիտինային կազմություն, որի հատակին ճառագայթաձև դասավորված են ութ ոչ մեծ ատամիկներ: Վերջիններիս միջոցով նրանք ամրանում են շնչուղիների լորձաթաղանթին և վնասելով մազանոթները սնվում են արյունով: Չափահաս սինգամուսները թռչունի հոգի, փոշտոցի, խորխի հետ արտաքին աշխարհ են արտադրում բերմնավորված ձվեր: Դրանք ունեն օվալ ձև և երկու բնեռում կրում են կափարիչ: Ձվերի երկարությունը կազմում է 0,074-0,096մմ, լայնությունը՝ 0,039-0,044 մմ: Մորուլայի շրջանում գտնվող այդպիսի յուրաքանչյուր ձվում լինում են 8 բլաստոմերներ (նկ.2,3), մի քան, որը բացակայում է ասկարիդների ձվերում: Սինգամուսի այսպիսի ձվերում

անհրաժեշտ ջերմաստիճանի և խոնավության դեպքում զարգանում է ինվազիոն թրթուրը: Այդպիսի ինվազիոն թրթուրակիր ձվերը թռչունները կալ տալուց դրանց ձվապատյանները տիրոջ աղիներում լուծվում են , դրանցից դուրս եկած թրթուրները ծակում են աղիների պատը և աստան հոսքով բերվելով բրոնխներ և շնչափող, շուրջ 14-19օրում դառնում են չափահաս: Սրանք երկար ժամանակ (27-35օր) ապրում են շնչափողում ու սկսում են արտադրել ձվեր: Էգերը ձվադրությունը ավարտելուց 5-7 օրվա ընթացքում մահանում և արտազատվում են արտաքին աշխարհ: Թռչունների սինգամոզով վարակումը կարող է տեղի ունենալ նաև պահնստային տերերին ուտելու ճանապարհով: Այս ճանապարհով վարակված թռչունները սինգամոսի ձվերը դարձյալ արտաքին աշխարհ են արտազատում հազալու կամ փռշտալու ժամանակ: Դրանցում շրջակա միջավայրի բարենպաստ պայմաններում 8-9 օրվա ընթացքում զարգանում են թրթուրներ: Անուղղակի վարակման դեպքում արտաքին աշխարհ ընկած և արդեն ինվազիոն դարձած ձվերը կալ են գնում պահնստային տերերին: Դրանց աղիներում դուրս եկած թրթուրները ծակում են լոքոթաթաղաթի պատը ու արյան ճանապարհով հասնելով մկաններին, այստեղ պատիճավորվում են ու երկար ժամանակ (4 տարի և ավելին)գոյատևում են վարակելու ընդունակությունը: Թռչունները ուտելով այդպիսի պահնստային տերերին դրանց մարսման պրոցեսում ի վերջո այդ պատիճները բացվում են ու նրանցից դուրս եկած թրթուրները աղիքի պատից վերը նշված ճանապարհով հասնում են շնչափող և այդտեղ դառնում են չափահաս որդեր՝ առաջացնելով սինգամոզ հիվանդություն:

Ինչպես երևում է, սինգամոզի պահնստային տերերից վարակումը իր բնույթով էականապես տարբերվում է ասկարիդոզի պահնստային տերերով վարակման ուղուց: Էականապես տարբերվում են նաև սինգամոզի չափահաս որդերը և նրանց արտադրած ձվերը (նկ.2): Մասնավորապես, նկարից պարզ երևում է, որ սինգամոզի որդերի ձվերում պարզորոշ երևում են 8 բլաստոմերներ, մի բան, որը լրիվ բացակայում է ասկարիդների ձվերում, որը պետք է հաշվի առնվի կոնքի լաբորատոր եղանակով հետազոտության ժամանակ:

Ռայնտինոզը հավերի և հավագի մյուս թռչունների մոտ առաջացնում են Raellitina tetragona և R. echinobotrida ժապավենաձև որդերը, որոնց հատվածների (ստրոբիլ) երկարությունը կազմում է 20-25սմ, լայնությունը՝ 1-2մմ: Դրանց արտների գլխիկը (սկոլեքս) կրում է չորս օվալաձև կամ կլոր ծծիչներ և մեկ շարքով դասավորված բազմաթիվ կարթեր. Պարագիտի գլխիկը վզիկին է անցնում աստիճանաբար: Այստեղ պարանոցում միասնո հատվածների երկարությունը կազմում է 0,608—2,9մմ, լայնությունը՝ 0,056-0,420մմ: Դրանց հաջորդող երկսեռ հատվածների լայնությունը գնալագանցում է երկարությանը: Այս բիոհելմինթոզի (ռայնտինոզ) համար միջնորդ տեր են հանդիսանում մրջյունները: Հիվանդությունը մեծ մասամբ դարձյալ ունի օջախային բնույթ և ավելի հաճախ հանդիպում է 2-8 ամսեկան ճտերի և մեծահաս թռչունների շրջանում: Սեռահասուն որդերը տիրոջ 12-մատյա և բարակ աղիներում ապրում և պարբերաբար արտաքին աշխարհ կղանքի հետ արձակում են ձվիկներով լցված հատվածներ: Շրջակա միջավայրի բարենպաստ ջերմաստիճանի և խոնավության պայմաններում ձվիկներում զարգանում են ինվազիոն թրթուրները: Պարագիտի հատվածները քայքայվելուց ձվերը ընկնում են արտաքին աշխարհ: Մրջյունները դրանց կալ տալուց նրանց օրգանիզմում դրանցից դուրս են գալիս շարժուն թրթուրները օնկոսֆերները, որոնք ծակում են տիրոջ աղիքի պատը, ընկնում են մարմնի խոռոչ ու այստեղ դառնում են գիստիցերկոիդ աստիճանի թրթուր: Այս աստիճանի վարակակիր մրջյունները թռչունները ուտելուց նրանց աղեփողում թրթուրները մաշկափոխվում են և դառնում են սեռահասուն ռայնտինաներ (որդեր): Վարակված թռչունների կողմից սեռահասուն հատվածների արտազատումը արտաքին աշխարհ մեծ մասամբ լինում է ձմռանը:

Շատ դեպքերում ձմռանը վարակված թռչունի աղեփողում մնում է միայն պարագիտի գլխիկը: Գարնանը դրանից նորից աճում են անսեռ և սեռահասուն հատվածները ու շուտով հասնում են սահմանային բնանակի: Մինչև աշնան վերջը դրանցից պոկվում և արտաքին աշխարհ է արձակվում միայն ձվիկներով լցված վերջին հատվածը՝ «ձվիկներով լցված արգանդը»: Վերջինս արտաքին աշխարհում քայքայվում է և ձվերը տարածվում են հողում ու ջրում: Մրջյունները ցամաքում ընդունելով այդպիսի ձվեր դառնում են միջնորդ տեր: Դրանց թռչունները ուտելուց շուտով դառնում են ռայնտինոզի սեռահասուն պարագիտների կրողներ՝ վերջնական տեր:

Թռչունների, այդ թվում հավերի և աղավնիների հելմինթոզների բուժման համար ստեղծված են բազմաթիվ դեղեր(3): Այսպես, ասկարիդոզի արդյունավետ բուժման համար հաճախ օգտագործում են սիպերազին, ֆենոտիազին, ատազոլ, բիլերոմ և մի քանի այլ դեղեր: Պիպերազինը կամ նրա ածանցյալները օգտագործում են թռչունների խմբային կերակրման ձևով, կերի հետ խառնելով՝ խառնված կերին կամ աղած հատիկին միանվագ, 2-3 ամսեկան

ճտերին 0,1գ, 4 ամսեկան և բարձր հասակի մատղաշներին 0,25գ: Դեղը պետք է տալ առավոտյան կերակրման ժամանակ: Ֆենոտիազինը տալիս են 1կգ քաշին 1գ: Դա դարձյալ տալիս են կերի հետ, խմբային կերակրման ձևով, առավոտյան ժամերին (6 ժամ քաղցած պահելուց հետո): Առաջին օրը տալիս են նշված դոզայի 2/3-ը, 2-րդ օրը՝ 1/3-ը: Երկու դեպքում էլ դեղը նախապես լավ խառնում են ջրով թացացված կերին կամ ալրաթեփին: Արդյունավետությունը այնքան մեծ է, կազմում է 50-70%: Ընդ որում, թռչուններին և հյուծվածներին երաշխավորվում է դեղը տալ անհատական ձևով, բանի որ ընդհանուր կերակրման դեպքում նրանք վատ են ուտում և չուտելու կապակցությամբ դեղի պահանջվող քանակը չեն ստանում(1):

Առաջացը հավերին միանվագ տալիս են մեկ կիլոգրամ քաշին 20մգ դոզայով անհատական՝ բերանով դեղը տալու եղանակով:

Իլվերմը տալիս են կերի հետ խմբային կերակրման ձևով, մեկ կիլոգրամ քաշին 0.04գ, սակայն այս դեպքում դեղը նախապես լուծում են ջրի մեջ և դրանով թաց ացացնում են խտացրած կերը կամ ալրաթեփը:

Նշված ալրեպարատներով տարվա մեջ 2 անգամ (աշնան կեսերին և գարնան սկզբներին) ձիթվահանության դեպքերում նշանակալի չափով ընկնում է վարակվածությունը ասկարիդոզից:

Գիգրոմիդին B-ն երաշխավորում են տալ խտացրած կերի հետ 1կգ քաշին 70 մգ երկու ամիս շարունակ: Դա թողնում է ինչպես բուժիչ այնպես էլ նոսրակալնախարգելող նշանակություն, քանի որ ոչնչացնում է ինչպես պարազիտ որդերին, այնպես էլ դրանց թրթուրներին:

Ռայնտիոզի բուժման համար 12-16ժ սոված պահած թռչուններին միանվագ տալու համար նշանակում են ֆելիբսան, 1կգ քաշին 0,5գ միանվագ, կամ էլ ֆենասալ 1կգ քաշին 0,2գ, կամ էլ բիտինոլ՝ 1կգ քաշին 0,1-0,5գ , կամ էլ բիտիրազին 1կգ քաշին 0,5գ:

Սինգամոզի բուժման համար կերի հետ միանվագ կերակրման ձևով տալիս են մեբենվիտ՝ 1կգ քաշին 0,1գ, կամ էլ յոդոֆեն՝ 1կգ քաշին 0,1գ: Մինչև 5 ամսեկան ճտերին ներշնչափողային եղանակով (թթանգքներից)տալիս են Լուգոլի լուծույթ՝ 1-1,5մլ, կամ էլ սալիցիլաթթվային նատրիումի 5% լուծույթ, 1գլիտր 1մլ:Մեծ վարակվածություն ունեցող օջախներում հավերի ձիթվահանությունը երաշխավորվում է տարվա մեջ կատարել 2 անգամ՝ գարնան և աշնան ամիսներին:

Բոլոր դեպքերում պահանջվում է ձիթվահանությանը հաջորդող 3-5 օրերին լավ մաքրել թռչնանոցները և թռչունների կերակրման տաշտակները ու հարթակները: Ալբը պետք է այրել կամ ենթարկել կենսաբանական վնասազերծման (խրը թաղել հողում կամ էլ հատուկ անասնագերեզմանոցներում): Շենքերը, կերակրման տաշտակները կամ հարթակները պետք է ախտահանել հատուկ ախտահանիչ նյութերով (կծու նատրիումի 3% լուծույթ, բենզոնավթի 5% լուծույթ, հանգացրած կրաջրի լուծույթ և այլն): Ավելի լավ արդյունք է ստացվում, երբ մեկ մետր քառակուսի մակերեսի համար ծախսվում է ախտահանիչ նյութի մեկ լիտր լուծույթ:

Ամփոփում

Աշխատանքում տեղեկություններ է բերվում ԼՂՀ-ում հավերի և աղավնիների որոշ հելմինթոզներով (ասկարիդոզ, սինգամոզ, ռայնտիոզ) վարակվածության, դրանց ախտորոշման, բուժման ու նախականխարգելման մասին:

Резюме

В работе приведены данные о пораженности кур и голубей некоторыми гельминтозами (аскарилоз, сингамоз, райстиноз). Приводятся некоторые данные о диагностике, лечении и профилактике этих болезней.

Литература

1. Под.ред.ак.НАН.РА. С.О.Мовсисяна, Паразитарные болезни сельскохозяйственых животных Нагорно-Карабахской республики, Степанакерт, 2004.
2. Чуварян Ф.А., Аскарилоз птиц (кн. Паразитарные болезни сельскохозяйственных животных), Степанакерт, 2004.с.-282-288.
3. Г.С. Кузнецов, А.И. Протасов, Справочник по ветеринарии, Ленинград,1988,с.-663-668.

ՀՏԴ 599,4.591,74:596,5

ՄԵՀԵԼԻԻ ՊԱՅՏԱՔԹԻ–RHINOLOPHUS MEHELYI MATSCHIE, 1901, ՏԱՐԱԾՄԱՆ ՆՈՐ ՎԱՅՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ ՖԱՌՈՒՆԱՅՈՒՄ

Վ.Տ. Հայրապետյան
կենսաբանության ամբիոն

Աշխատանքում այարզաբանվում է մեհելիի պայտաքթերի էկոլոգիական առանձնահատկությունները և նրանց տարածման արեալները:

Պոպուլյացիաների կառուցվածքը, բնակեցման դինամիկայի ուսումնասիրումը, էկոլոգիական հետազոտությունները, տեսակի միկրոէվոլյուցիոն վերափոխումները հանդես են գալիս, որպես կենդանաբանների շրջափելի հիմնախնդիրներ, որոնք նպաստում են տեսությունների և մոնիտորինգի մեթոդների ստեղծմանը, կենսաբանական գործընթացների կանխագուշակմանը և ղեկավարմանը, կենսաբազմազանության պահպանմանը (Шварц, 1969; Тимофеев- Ресовский и др., 1973):



Այսօր Լեռնային Ղարաբաղի ֆաունան ընդհանրապես և կաթնասունները մասնավորապես լիարժեք չեն ուսումնասիրված. չկան վերջնագրված տվյալներ նրանց ուղղահայաց գոտիականության տարածման, էկոլոգիայի և կենսաբանության ու մի շարք այլ հարցերի վերաբերյալ: Այս առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև կաթնասունների (Mammalia) դասի ձեռքթևավորների (Chiroptera) կարգը, որն իր տեսակային բազմազանությամբ զիջում է միայն կրծողների կարգին:

Այս պլանագրում որպես հետազոտման օբյեկտ ընտրել ենք նշված կարգին պատկանող տեսակներից մեկը՝ մեհելիի պայտաքիթը- Rhinolophus mehelyi:

Ընդհանրապես գրական տվյալներ մեհելիի պատաքթի էկոլոգիայի վերաբերյալ շատ աղքատ են: Իսկ ԼՂՀ ֆաունայում նշված տեսակի էկոլոգիայի վերաբերյալ տեղեկություններ, որոնք ֆրագմենտար են կամ աղավաղված, կարելի է հանդիպել Այնեկյերովի և Ի. Կ. Ռախմատուլլինայի աշխատություններում (Алекперов, 1966; И К Рахматулина, 1980): Նշված հեղինակների ուշադրության կենտրոնում էին միայն Ագոխի և Շուշիի Մեծ քարանձավները (պատմական անվանումը՝ Ավանա կարան), իսկ տվյալները ունեն մոտ 35-40 տարվա հնություն: Հետևաբար, փորձում ենք ներկայացնել մեր ֆաունայում տարածված այս տեսակի էկոլոգիական առանձնահատկությունները և կենսաբանության որոշ հարցեր, ինչպես նաև նրանց տարածման արեալները (քարտեզ 1): Ինչպես նախկին ԽՍՀՄ-ում, նունպես և ԼՂՀ-ում այս տեսակն առաջին անգամ, 1939թ հունիսի 11-ին Ավանա կարանում, հայտնաբերել է Ա.Պ. Կուզյակինը (Кузякин, 1950):

Նյութը և աշխատանքային մեթոդները: Աշխատանքում ամփոփվում է 1999թ- 2006թ-ը մեր կողմից կատարված աշխատանքի արդյունքները: Նշված ժամանակաշրջանում ուսումնասիրությունները կատարել ենք ԼՂՀ -- ի Հադրութի, Շուշիի և Մարտակերտի շրջաններում: Նյութի հավաքը և դիտարկումները կատարվել են հիմնական ստացիոնարներում, որոնք են Ագոխի քարանձավը, Շուշիի Ավանա կարանը, Հունոտի կարանը, որպես հիմնական և Թարթառի գրոտը, որպես սառուցիչ:

Գադրութում կենդանիների քանակը հաշվարկելու համար օգտվել ենք 1մX1մ շրջանակի մեթոդից, կենդանիներ որսալու համար օգտագործել ենք վարագուրա-թելային եղանակը, միջատաբանական ցանցեր, քարերի ճեղքերից հանելու համար ունելիներ: Բռնված կենդանիներին ենթարկել ենք մորֆոմետրիկ չափումների, կշռման, օղակավորման, որն իրականացրել ենք կենդանաբանության մեջ օգտագործվող դասական մեթոդներով

(Кузякин, 1950; Новиков, 1953; Наумов, 1963; Шварц, 1965; Яврян, 1984): Կենդանիների տենսակային պատկանելությունը հաստատելու համար թեաթեաղանթից հատուկ դակիչ հարմարանքով վերցրել ենք նմուշ ԴՆԹ-ի վերլուծության համար, որն իրականացրել ենք Լեհաստանի ԳԱ կենդանաբանության ինստիտուտի լաբորատորիայում:

Կենդանիների հայտնաբերման համար օգտագործել ենք նաև Pettersson D -200 տիպի դեղեկտորային սարքավորումը: Որպես լուսավորող սարքավորումներ օգտագործել ենք կվարցային լայտերներ:

Մորֆոմետրիկ չափումների մաթեմատիկական մշակումները կատարել ենք կենսաչափության մեջ ընդունված վարիացիոն շարքերի կազմմամբ և կիրառվող բանաձևերով (Плохинский,1969): Օգտագործված են հետևյալ հապավումները՝ ՄԵ-մարմնի երկարություն, ՊԵ- պոչի երկարություն, ԱԵ- ականջի երկարություն,ՊԼ- պայտի լայնություն, ՆԲԵ- նախաբազկի երկարություն, ԳԸԵ- գլխի ընդհանուր երկարություն, ԳԿԵ- գանգի կոնդայլոբազալ երկարություն, ԳԲ- գանգի բարձրություն /խորություն/, ԱԼ- այտի լայնություն, ԳԼԾ- գլխի լայնությունը ծոծրակի հատվածում, ՄԱՏ- միջաչքային տարածք, ԱՎՇԵ- ատամների վերին շարքի երկարություն, ԱՍՇԵ - ատամների ստորին շարքի երկարություն, քաշ- կենդանու կենդանի կշիռը: Բացի նշվածից աղյուսակներում վարիացիոն հուշվարկումների ժամանակ բերվում են հետևյալ ցուցանիշները. min -տողի մինիմալ ցուցանիշ, max –տողի մաքսիմալ ցուցանիշ, M-միջին թվաբանական, m-միջին թվաբանականի միջին սխալ, δ-միջին քառակուսային շեղում, Tet -Ստյուդենտի չափանիշ, Var –վարիացիայի գործակից:

Քարանձավների և գրոտների խոնավությունը որոշել ենք ВИТ-1 խոնավաչափով, իսկ ջեմաստիճանը սպիրտային և սնդիկային ջերմաչափով:

Արդյունքները և քննարկումը: 1999-ից մինչև 2006 թ. մեր կողմից կատարված ուսումնասիրությունների ընթացքում պարզել ենք մեհնիլի պայտաքթի տարածման արեալները (բարտեզ 1). էկոլոգիական առանձնահատկությունները և կենսաբանությունը: Այս կենդանատեսակները, ըստ ուղղահայաց գոտիականության, զբաղեցնում են ծովի մակերևույթից 800- 2000 մ բարձրությունները: Հիմնականում քարանձավաբնակներ են, սակայն բնակություն են հաստատում նաև խոր գրոտներում: Դրանց քնորոշ է զուտ գաղութային կենսակերպը: Գաղութներում այս կենդանատեսակների քանակը փոփոխական է, դա հիմնականում պայմանավորված է թաքստոցի միկրոկլիմայով, տվյալ տարածքի էկոլոգիական գործոններով և մարդածին գործոններով. բոլոր դեպքերում տատանվում է 1000-ից մինչև 25000, առանձին դեպքերում նաև ավելի: Առավել մեծ գաղութներ կազմում են Ազոխի քարանձավում՝ 19000- 25000 առանձնյակ: Գաղութում կենդանիների քանակով երկրորդ տեղը գրավում է Հուսոտի կարանը (12000-13000):

Մինչև 2005թ. այս կենդանիների տարածման արեալը սահմանափակվում էր միայն Հադրութի և Շուշիի շրջանների քարանձավներով: Սակայն մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքում Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղից հարավ-արևմուտք, Թարթառ գետի աջ ափին տեղադրված լանջի գրոտներից մեկում հայտնաբերվեց մեհնիլի պայտաքթերի ոչ մեծ գաղութ՝ մոտ 1200 առանձնյակ, ձագերի հետ միասին:

Գրոտի խորությունը 35 մ է, լայնությունը մուտքի մոտ 3 մ, միջին մասում նեղանում է մինչև 1.5-2 մ, բարձրությունը՝ մուտքի մոտ 2 մ, խորքում՝ 4,5 մ: Գրոտի շրջակայքը անտառածածկ է: Գրոտի խոնավությունը հուլիսի 15-ին եղել է 75%, ջերմաստիճանը՝ +19C, հոկտեմբերի առաջին կեսին նույն գրոտում խոնավությունը եղել է 87%, իսկ ջերմաստիճանը՝ +16C, Ազոխի քարանձավում տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է՝ +14,5C, իսկ խոնավությունը՝ ամառը՝ 87%, գարնան, աշնան և ձմեռային ամիսներին՝ 95-100 %, Ավանում կարանում՝ ամառը՝ +19C, իսկ ձմռանը՝ +13C, համապատասխանաբար՝ 65-88% խոնավությամբ:

Մեհնիլի պայտաքթերի էկոլոգիական առանձնահատկությունները առավել մանրակրկիտ ուսումնասիրել ենք Ազոխի քարանձավի պոպուլյացիայում (Հայրապետյան, 2002, Յավրոյան, Հայրապետյան, 2003, Հայրապետյան, 2004), որն էլ ընտրվել է որպես հիմնական ստացիոնար: Նշված քարայրում այս գազանիկները բնակություն են հաստատում սովորական երկարաթևերի, մեծ պայտաքթերի, սրականջ գիշերաչղջիկների, մոխրագույն ականջեղեների և ասիական լայնականջների հետ հարևանությամբ: Քարայրում նրանք հիմնականում զբաղեցնում են 3-4- դդ սրահների առավել բարձր կամարները, բայց առանձին դեպքերում, մասնավորապես բազմացման շրջանում արուներին կամ ստերջ էգերին կարելի է հանդիպել նաև 1-2 սրահներում, ոչ մեծ խմբերով: Ըստ երևույթին նրանք ոչ թե գաղութից

վտարվածներ են, այլև «պահուկներ», որոնք տագնապի պահին ծորտալով անցնում են ամբողջ գաղութով մեկ և գրում նրանց:

Ինչպես այս, այնպես էլ Հունտի քարանձավում մեհելիի պայտաքթերը ձմռանը ձմեռում են. ամռանը բազմանում, նրանք սերտ կապված են իրենց բնակատեղի հետ, անգամ նույն քարանձավում նրանք տեղափոխություն չեն կատարում: Այդ փաստը պարզվել է օղակավորման տվյալներով: Առանձին դեպքերում նրանց միգրացիան պայմանավորված է սթրեսներով, այսպես օրինակ, 2003թ. հունիսի 5-ին Հունտի կարանում օղակավորված 10 (6♀,4♂) գազանիկներից 5♂-ը 2004 օգոստոսի 23-ին հայտնաբերել ենք Ավանա կարանում, այդ ժամանակաշրջանում նշված քարանձավում զբոսաշրջիկների այցը հաճախակի է եղել:

Մեհելիի պայտաքթերը խաղաղասեր կենդանիներ են, ուսումնասիրությունների ժամանակ կծելու փորձ անգամ չեն կատարում: Այդ հանգամանքը ապացուցվում է նաև այն փաստով, որ ի տարբերություն պայտաքթերի մնացած տեսակների, դրանք ձագերին խնամում են արու և էգը միասին, բայց որոշ գիտնականներ այդ հարցին կասկածով են մոտենում (Рахматулина, 2005):

Լեռնային Ղարաբաղի ֆաունայում այս գազանիկների գուգավորման ժամկետները հյուսիսային և հարավային շրջաններում տատանվում է 15-20 օրվա սահմաններում, դա պայմանավորված է նաև տարվա կլիմայական պայմաններով, այսպես օրինակ, Ագոխի և Հունտի քարանձավում դրանց կոպուլյացիան կատարվում է հոկտեմբերի 20-25-ից հետո, իսկ Թարթառի գրոտում հոկտեմբերի առաջին կեսին արդեն ավարտվում է: Այդ երևույթը պայմանավորված է գոտիականության էկոլոգիական առանձնահատկություններով: Ղարաբաղի հյուսիսային հատվածում այս գազանիկները ավելի շուտ են անցնում ձմեռային քնի, քան հարավում: Այս կենդանիների բունը համեմատաբար խորն է: Քնից արթնացումը պայմանավորված է տարվա կլիմայական պայմանների առանձնահատկություններով, այսպես օրինակ, 2000թ-ին առաջին թռիչքը նկատվել է փետրվարի 26-ին, 2002թ -ին՝ մարտի 29-ին, 2004թ -ին ապրիլի 15-ին:

Սակայն մասսայական թռիչքը հիմնականում կատարվում է մարտի 25-ից հետո. հյուսիսային շրջաններում առաջին թռիչքը կատարվում է հարավայինից 10-15 օր ուշ:

Մեր դիտարկումների արդյունքում պարզվել է, որ մեհելիի պայտաքթի գարնանային դրսևորումը կատարվում է 20-20.35 ժամերին, ամառային՝ 21-21.20, աշնանային՝ 20-20.10: Նրանք որսի են թռչում հիմնականում իրիկնային և ցերեկային ուշ մթնշաղին և վերադառնում թաքստոց, թռիչքի տևողությունը՝ 1,5- 2 ժամ, իսկ գիշերվա կեսից հետո թռիչք չի նկատվել: Երկրորդ թռիչքը նկատվել է առավոտյան ժամերին, գարնանը՝ 6.00, ամռանը՝ 5.00, աշնանը՝ 6-6.30:

Մեհելիի պայտաքթերի հղիության տևողությունը 85-90օր է, ծիրը Ագոխի քարանձավում կատարվում է հունիսի 5-ին, Հունտի կարանում՝ հունիսի 10-ին, Թարթառի գրոտում՝ հունիսի 15-20-ը: Ձագերը ծնվում են մերկ, վարդագույն գույնի, ականջները և թեղաթաղանթը հատկապես անգույն, աչքերը փակ: Պայտի շուրջը առկա են կարճ և հազվագյուտ վիբրիսներ: Թեթևակի նկատելի են կաթնային ատամները, նախաբազուկի երկարությունը՝ 19-20 մմ: Սերնդում հիմնականում ունենում են մեկ ձագ, սակայն հերձված հղի կենդանիների մոտ հայտնաբերել ենք երկու ատաղ, բայց մեզ դեռևս անհայտ պատճառով, երկրորդ ձագը մահանում է: Աճը ընթանում է շատ արագ. 2005 թ. օգոստոսի 12-ին մեր կողմից դիտարկումների ժամանակ ձագուկները արդեն եղել են ինքնուրույն և սնուահատոնների տարբերվել են միայն բաշով և մեռակարպալ ոսկրերի ու մատների ֆալանգների ճաճառային շերտով: Մեհելիի պայտաքթերի մորֆոմետրիկ չափումները ներկայացված են աղյուսակ 1-ում, չափումները կատարվել են սեռահասուն առանձնյակների վրա:

Աղյուսակ 1

Մեհելիի պայտաքթի մարմնի և գանգի չափման տվյալները

ցուցանիշներ	ԼՂՏ n = 68 (♀ և ♂)				
	Min- Max	M ± m	δ	Tet	Var
ՄԵ	54,70-64,20	60,23±0,4	3,61	0,38	-5,53
ՊԵ	26,10-37,70	31,26±3,38	4,12	0,19	6,44
ԱԵ	18,00-24,00	20,46±0,86	2,24	0,00	3,54
ՊԼ	6,90-7,50	7,08±0,14	0,20	0,10	0, 42
ՆԲԵ	50,65-59,30	54,60±2,53	3,11	0,09	4,70
ԳԲԵ	19,00-20,40	19,81±0,24	0,40	-0,31	-0,81
ԿԿԵ	16,40-17,50	17,19±0,27	0,37	-0,16	-0,79
ԳԲ	5,30-6,30	5,91±0,26	0,34	0,01	-0,61
ԱԼ	9,80-11,00	10,35±0,35	0,42	-0,02	0,65
ԳԼԾ	9,30-10,90	10,05±0,44	0,56	0,10	0,85
ՄԱՏ	2,30-3,00	2,68±0,25	0,28	-0,13	-0,38
ԱՎԵԵ	6,30-7,30	6,65±0,28	0,34	-0,47	0,65
ԱՄԵԵ	6,60-7,60	7,05±0,30	0,36	-0,37	0,55
Բաշը	13,8-20,10	16,48±16,3	2,16	-0,06	3,63

Այս գազանիկների բնական թշնամիներից են արիսները, կզաքիսները, թռփառող կառուները, գիշերային գիշատիչ թռչունները, օձերը և այլն, բայց առավել վտանգավոր է մարդածին գործոնը:

Մեհելիի պայտաբթերի կնաբաժինը ընդգրկում է հիմնականում միջատների հետևյալ տեսակները՝ մայիսյան բզեզ, մարմարյա բզեզ, սիրամարգի աչք, բրոնզաբզեզ, գարնանային, նեպուկներ, խավարասերներ, սարդեր և այլն:

Այսպիսով՝ այս կենդանիների կարևորագույն էկոլոգիական առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք սերտ կապվածություն ունեն իրենց բնակատեղի հետ և դա էլ կարող է նրանց ցավալի վախճանի պատճառը դառնալ:

Դրանց մոտ մեծ է գաղութայնության ձգտման երևույթը, որին հիմնականում նպաստում է այս կենդանիների խառաղասերությունը: Դրանք զգայունակ են կլիմայական գործոնների նկատմամբ:

Աղյուսակից երևում է, որ ԼՂՀ ֆաունայում տարածված մեհելիի պայտաբթերը ունեն մեծ չափեր, սակայն Ռախմատուլինայի տվյալներով (Рахматулина, 2005) Ազոյի քարանձավում դրանք ավելի փոքր չափերով են ներկայացված, ինչը և ապացուցում է նրա աշխատանքների ֆրագմենտարությունը:

Քարտեզ 1

Ամփոփում

Աշխատանքում ներկայացվում է մեհելիի պայտաքթի հայտնաբերման նոր վայրը, տարածվածությունը, նրա էկոլոգիական և մորֆոմետրիկ առանձնահատկությունները ԼՂՀ ձեռաթևավորների ֆաունայում:

Резюме

В результате исследований с 1999 по 2006гг. нами была выявлена новая находка подковоноса мегелии (Тертерский грот), распространенность, экологическая особенность и морфометрические данные в хироптерафауне НКР.

Исследования были проведены общепринятыми методами. Для подтверждения вида анализированы ДНК в зоологическом институте Польской АН.

Գրականություն

1. Հայրապետյան Վ. Տ., Ազոխի քարանձավի ֆաունան, ԱրՊՀ գիտ. տեղեկագիր. Ստեփանակերտ, 2002, N 1/5/, էջ 150-153:
2. Հայրապետյան Վ. Տ., Լեռնային Ղարաբաղի ձեռաթևավորները (Chiroptera), թեկ. ատենախոսություն, Երևան, 2004թ., էջ 3-122:
3. Յավրույան Է. Գ., Հայրապետյան Վ. Տ., Ղարաբաղի վայրի կաթնասունները (միջատակերներ, ձեռաթևավորներ, կրծողներ, նապաստակակերպներ), Ստեփ., «Դիզակ պլյուս», 2003, էջ 1-124:
4. Алекперов Х М., Млекопитающие юго- западного Азербайджана, АН Аз. ССР, Баку. 1966, ст. 20-25.
5. Кузякин А .П., Летучие мыши, Совет. наука, Москва, 1950, ст. 1-443.
6. Наумов Н. П.,Экология животных, Совет. наука, Москва,1963, ст.1-618.
7. Новиков Г. А., Полевые исследования по экологии наземных позвоночных, Совет. наука, 1953, ст. 1-503.
8. Плохинский Н. А., Руководство по биометрии для зоотехников, Из. ,,Колос'', 1969, ст. 7-252.
9. Рахматулина И. К., Материалы по экологии: рукокрылые Азыхской пещеры, В кн. Рукокрылые(Chiroptera), Наука, Москва, 1980, ст. 154-179.
10. Рахматулина И. К., Рукокрылые Азербайджана (фауна, экология, зоогеография) Баку, 2005, ст. 3-372.
11. Тимофеев-Ресовский Н. В., Яблоков А. В., Глотов Н. В., Очерк учения о популяции, Москва, 1973, ст. 278.
12. Шварц С.С., Возрастная структура популяций животных и проблемы микроэволюции, Зоол. журн., 1965,10, ст. 1443-1453.
13. Шварц С.С., Эволюционная экология животных, Тр. Ин-та,экол. раст. и живот. Свердловск, 1969, 65, ст 174.
14. Явруян Э. Г., Явление- гибель вызывает рождение, Докл. 47науч. конф. ЕГУ. 1984, ст.144.

УДК 634.0.232

ИНТРОДУКЦИЯ СОСНЫ КРЫМСКОЙ В НКР

И.И.Багунц
кафедра сельского хозяйства

1.Фенологические наблюдения сосны крымской

Сосны составляют самый крупный род среди хвойных древесных растений. Многие из сосен обладают быстрым ростом и относятся к экономически важным породам, поставляющим ценную древесину и продукты подсочки. Весьма важной особенностью сосен является их малая требовательность к почве и засухоустойчивость. В культуре они используются для введения в лесонасаждения, для защиты лесомелиоративных посадок с целью облесения пространств с бедными сухими почвами. Несомненный интерес представляют сосны в зеленом строительстве, обладая рядом ценных качеств необходимых для использования растений в озеленении: декоративность, долговечность, крупные размеры, монументальность ствола, ажурность кроны, высокие санитарно-оздоровительные свойства, благоприятное эмоциональное воздействие на человека и многие другие.

Не касаясь вопроса о том большом значении, которое имеет сосна обыкновенная в народном хозяйстве, следует отметить, что интродукция некоторых видов из рода Сосна в настоящее время находит распространение во многих республиках СНГ. Учитывая вышеизложенное, несомненный интерес в интродукции представляет сосна крымская или Палласа. (Pinus Pallasiana).

Сосна крымская – дерево высотой 20-30 м. с широко-яйцевидной кроной, которая у старых деревьев становится плоской и зонтиковидной. Кора у нее толстая серовато-черная или темно-бурая, в верхней части ствола красноватая, глубоко – трещеноватая. Побеги охряно-желтые или почти оранжевые. Хвоя по 2 в пучке, 8-15 см. длиной, сохраняется 4-5 и более лет, плотная, жесткая, несколько изогнутая, остропильчатая и заостренная с устьичными линиями на обеих поверхностях., смоляные ходы паренхиматические, влагалища до 25мм., светло-серые по краю, у вершины –бахромчатые.

Шишки яйцевидно – конические, одиночные или по 2-4 вместе, на коротком черешке или полностью сидячие, длиной 8-10 см. и шириной 4-6 см., буровато-охряные, лоснящиеся. Щитки спереди широко закрученные, почти ромбические, прорезанные шестью более или менее различными радиальными реврышками, из которых два образуют остро выступающий поперечный киль, пупок округленный, выдающийся, красно – коричневый. [1,4,5]

Семеноношение ежегодное, с полнозернистостью 40-52%. Семена у сосны крымской 5-7мм. длиной, неправильно овальные, с бледными, прозрачными крылышками длиной 27мм., буровато-серые или почти черные. [3,6]

Родина сосны крымской – Средиземноморье, точнее Новороссийский анклав этой флористической области. Сосна крымская или Палласа, как самостоятельный вид, выделена из вида Сосна черная (Pinus nigra) и признается в таком ранге в основном учеными России. Она растет на южном берегу Крыма, от Бахчисарая до Судака и склон Эчки-Дач в долине Отуз.

На Кавказе она естественно произрастает только в поселке Архипо-Осиповка на Черноморском побережье Краснодарского края [1,4,5,7].

Являясь более северным представителем средиземноморских хвойных лесов, она получила широкое распространение за пределами своего ареала.

Первые посадки сосен в НКР были проведены в 1929-30 гг. Последние зарегистрированы в80-ые годы прошлого века в Мардакертском, Степанакертском лесхозах, а также на одном из участков Лысагорского перевала. В послевоенные годы массовые посадки были осуществлены и в городе Степанакерте.

Фенологические наблюдения приуроченные к высотному диапазону (350-1800м. над у.м.), который включает 3 растительных пояса: предгорный пояс (350-650м.над у.м.) – Мардакертский лесхоз; среднегорный пояс (650-1000м.над у.м.) – Степанакертский лесхоз; горный пояс (1000-1800м.над у.м.) – Лысагорский перевал.

Климат является менее континентальным и относится к умеренному типу, с ярко выраженным температурным градиентом по мере повышения высоты местности над уровнем моря. Среднегодовая температура по области составляет +10^{0}С.

По вертикальным поясам климат значительно меняется: в степной и предгорной зонах он умеренно теплый, в нижнегорной и среднегорной – умеренно холодный, в высокогорной – холодный влажный со среднегодовой температурой +5,9^{0}С. Максимальная температура в августе в степной зоне равна +39^{0}С, в предгорной - +37^{0}С, в нижнегорной - +35^{0}С, среднегорной - +32^{0}С, а в высокогорной - +28^{0}С, минимальная в январе – соответственно – 13,9^{0}С; --15,1^{0}С; - -16,8 ^{0}С; -19,1^{0}С; -20,0^{0}С.

Количество атмосферных осадков повышается с юго-востока на северо-запад по мере увеличения абсолютной высоты местности. Наименьшее среднегодовое количество осадков (430-465мм) выпадает в нижнегорной части республики, в предгорьях –465-500мм, в среднем и верхнем горных поясах –500-700 мм и более. Максимум осадков приходится на весенние месяцы [2].

Таблица 1

Основные фазы развития сосны крымской в НКР

Фазы развития	Дата наступления фазы
Предгорный пояс	
Начало роста хвои	16.05
Начало цветения	18.05
Разъединение хвоинок	13.06
Среднегорный пояс	
Начало роста хвои	20.05
Начало цветения	22.05
Разъединение хвоинок	21.05
Горный пояс	
Начало роста хвои	5.06
Начало цветения	7.06
Разъединение хвоинок	12.07

Результаты фенологических наблюдений показали, что фазы развития сосны крымской варьируют в зависимости от высоты местности.

Начало роста хвои в предгорном поясе приходится на середину мая, в среднегорном – на последнюю его декаду, в горном – на середину июня. Амплитуда в наступлении этой фазы составляет календарный месяц.

Цветение на высоте 500 м. продолжалось с 18-30 мая, 1800 м. – с 7-16 июня. Здесь разница не только во времени наступления фазы, но и в ее продолжительности. В предгорном поясе фаза цветения длилась 12 дней, в горном – 9 дней. Необходимо учесть, что на адаптационные свойства растений большое влияние оказывает сумма положительных (выше 0^{0}С) и эффективных (выше +5^{0}С) температур.

В посадках естественного возобновления не отмечено или оно встречается единично. В результате опада хвои под пологом древостоев создается мощный слой лесной подстилки (до 5 см.), препятствующий внедрению трав, поэтому сосняки здесь в основном мертвопокровны. Возможно это обстоятельство является одной из причин отсутствия естественного возобновления. Выпавшие семена могут попросту не достигать почвы. На освещенных и открытых местах сосна крымская дала удовлетворительный самосев.

Определение запаса зеленой фитомассы проводилось на 5 пробных площадях: на 3-х из которых произрастают культуры сосны крымской, на 2-х - сосны обыкновенной.

До высоты 1200м.над у.м. хвоя сосны крымской держится на ветвях 5 лет. С дальнейшим увеличением высоты местности период жизни хвои сокращается и на высоте 1500м. составляет 4 года. С высотой меняется и длина хвои, чем выше уровень местности, тем короче хвоя. Запас зеленой фитомассы в большей степени определяется размерами крон.

Заметна тенденция снижения запаса фитомассы с повышением местности. Это согласуется с выводами о сокращении длины и сроков жизни с высотой местности. Масса хвои сосны крымской в насаждениях почти вдвое превышает таковую в насаждениях сосны обыкновенной.

Исследования строения корневых систем позволили выявить высокую приспособляемость сосны крымской к условиям местопроизрастания. На тяжелых глинистых почвах, наряду со стержневым корнем, глубина проникновения которого лимитируется залеганием водоупорных глинистых пластов, выделяются мощные и довольно длинные боковые корни, располагающиеся в верхнем 50-сантиметровом слое и несколько выходящие за пределы проекции кроны.

На бедных каменистых почвах Лысагорского перевала формируется поверхностный тип корневой системы, при котором отсутствие стержневого корня компенсируется длинными и мощными боковыми корнями, большая часть которых заканчивается мочкой. Площадь распространения боковых корней иногда в 3-4 раза превышает пределы проекции крон. На пологих склонах (до 6-7градусов) корни, идущие вниз по склону на 20% длиннее остальных, на крутых (15 градусов и выше) склонах корни, идущие вверх на 15% длиннее остальных, что имеет определенное почвоукрепляющее значение.

Изучение семеноношения сосны крымской в НКР позволило установить, что оно начинает плодоносить в 12-14 лет (Степанакертский лесхоз), причем ежегодного плодоношения не наблюдается, хотя отмечены случаи, когда на одних и тех же деревьях семеноношение повторяется несколько лет подряд. Годы обильного урожая сменяются годами слабого и полного неурожая. С повышением местности семеноношение наступает в более поздние сроки, где выражена и его периодичность.

Вес 1000 штук семян колеблется от 17 - 20 граммов. Наибольший вес имеют семена, собранные в районе Исабулага (Шушинское лесничество, квартал N 4). Семена из этого участка обладают и наилучшей всхожестью (87.7%) (с. Кесалар, посев 2004г.). Минимальная всхожесть оказалась у семян собранных на высоте 1500м. (54.7%) (Лысагорский перевал). Здесь же отмечена и самая низкая масса - 1000 штук семян имеют вес 15 граммов (норма – 1000штук семян-22-26граммов).

Цвет семян варьирует от светлого до черного. Известно, что светлая окраска у семян сосны крымской является свидетельством их некондиционности (Шичко,1961г.). На высоте 1500 м. светлоокрашенные семена составили 70%, что согласуется с самой низкой всхожестью. Семена, собранные на высоте 1000м.над у.м., обладают наилучшей всхожестью (светлоокрашенные семена составили 15%). Здесь отмечены также наиболее крупные шишки и семена.

Фенологические наблюдения проводились в городе Степанакерте.

Таблица2

Даты опыления , созревания шишек и роста побегов сосны крымской

Порода	Годы наблюдения	Опыление		Созревание		Рост побегов	
		начало	конец	начало	конец	начало	конец
Сосна крымская	2004 2005	3.05	10.05	-	18.10	15.05	17.07

Параллельно осуществлялись наблюдения за процессом роста боковых ветвей в предгорном и среднегорном поясе. Анализ данных показывает, что в предгорном поясе рост побегов начинается в первой декаде апреля и достигает своей кульминации в последней декаде мая. Далее происходит затухание роста и к середине июня прекращается. В среднегорном поясе рост побегов начинается во второй декаде апреля. В первых числах июня прирост достигает наибольших значений, затем идет спад и к началу третьей декады он прекращается. В горном поясе рост побегов продолжается с 10-22 июня. Величина прироста за сезон в предгорном поясе составила 14 см., в среднегорном – 15.2 см., в горном – 11.8 см.

Сопоставляя эти данные, приходим к выводу, что даты начала роста побегов у сосны крымской почти не различаются, однако продолжительность периода роста побегов значительно дольше.

Фенологические наблюдения в совокупности с изучением прироста растений являются одним из самых эффективных методов изучения интродуцируемых пород. Эти исследования позволяют не только установить сроки прохождения различных фаз развития, но и оценить стойкость, продуктивность, декоративность растений, а также определить изменения в ритме жизненных процессов растений, что особенно важно для успешного введения растений в культуру.

Ամփոփում

Կատարված հետազոտությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ ղրիմյան սոճու կուլտուրաները Շուշիի անտառտնտեսությունում պատկանում են բարձր բոնիտետ տնկումներին:

Ծառույթներում նշված է կողքային ընձյուղների բավարար աճը:

Տեղանքի ծովի մակերևույթից բարձրանալով նկատվում է աճի ինտենսիվության իջեցում: Տեղական պայմաններում սոճի ղրիմյանը ապացուցել է արմատային համակարգի բարձր հարմարվողականությունը հողային պայմաններին: Տեղանքի բարձրության հետ սերմնաբերումը սկսվում է ավելի մեծ հասակում, որտեղ արտահայտվում է դրա պարբերականությունը:

Ղրիմյան սոճու զարգացման փուլերը նույնպես տարատեսակվում են կախված բարձրությունից, բայց նա իր ամբողջ զարգացման ցիկլը անցնում է վեգետացիոն շրջանում: Ճյուղերի վրա փշատերևների պահման ժամկետը բարձրության հետ կրճատվում է, իսկ երկարությունը կարճանում:

Резюме

Проведенные исследования позволили сделать вывод, что культура сосны крымской в Шушинском лесничестве относится к высокобонитетным насаждениям. В древостоях отмечен удовлетворительный рост боковых побегов. С повышением местности над уровнем моря наблюдается ослабление в интенсивности роста. В местных условиях сосна крымская подтвердила высокую степень приспособляемости корневой системы к почвенным условиям. С высотой местности семеноношение наступает в более позднем возрасте, где выражена ее периодичность. Фазы развития сосны крымской также варьируют в зависимости от высоты, но она проходит весь цикл своего развития за вегетационный период. Сроки держания хвои на ветвях с высотой местности сокращаются , длина хвои также с высотой уменьшается.

Литература

1. Атрохин В.Г., К.К.Кануцкий, Ф.Г. Тюриков, Древесные породы мира, том 3,с.237.
2. Арушанян Р.И., Биологические основы повышения продуктивности лесов НКАО. Автореферат, Б.73г,с.6.
3. ГОСТ [14161 – 69]. Семена хвойных пород, Посевные качества, М., 1969г.,с.6.
4. Козанкин А.П., Выращивание сосны крымской, М., 1972г., с.42.
5. Колесников А.И., Декоративная дендрология, М., 1974г., с.117.
6. Спутник лесника, Справочник, М., 1990г., с.416.
7. Шатерникова А.И., Сосна крымская, Л., 1956г.,с.53.

ՀՏԴ 330.1

ԳԻՏԵԼԻՔԱՀԵՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ

Կ.Ա. Ներսիսյան
տնտեսագիտության ամբիոն

20-րդ դարի վերջերից սկսած գլոբալացումն ու տնտեսական ինտեգրումը կանխորոշելով բոլոր երկրների տնտեսությունների զարգացման տեմպերն ու օրինաչափությունները առաջադրում են իրենց խնդիրները:

Գլոբալացմամբ պայմանավորված ամենակարևոր մարտահրավերներից է հանդիսանում մրցակցության աննախադեպ ուժեղացումը միջազգային շուկաներում, այդ թվում կապիտալի և աշխատուժի շուկաներում: Երկրորդ մարտահրավերը դա գլոբալ տնտեսության զարգացման օրինաչափություններին և առանձնահատկություններին համապատասխան պետական ու մասնավոր հատվածի ձևավորումն ու կայացումն է թե մակրո, թե միկրոմակարդակներում:

Միանգամայն հասկանալի է, որ վերոհիշյալ խնդիրների լուծումը պահանջում է առաջին հերթին կառավարման նոր հայեցակարգի մշակում ու ընդունում և համապատասխան մասնագետների պատրաստում:

Այն երկրները, որոնք չեն կարողանում ապահովել բնակչության կրթության, գիտության և տեղեկատվական միջավայրի որակի զարգացման անհրաժեշտ մակարդակ, ավելի են կախված դրության մեջ ընկնում արտաքին ֆինանսական և տեղեկատվական կենտրոններից և դառնում են հիմնականում բնական ու մարդկային ռեսուրսների աղբյուր գլոբալ մտավոր ներուժը կենտրոնացնող զարգացած երկրների և վերազգային կորպորացիաների համար: Հետևաբար գլոբալացման հարուցած մարտահրավերներին դիմակայելու համար պետք է բարձրացնել երկրի մրցունակությունը գիտելիքների ու տեխնոլոգիական առաջընթացի վրա հիմնված տնտեսության ձևավորման աշխատանքների մակարդակը:

21-րդ դարի մարտահրավերները հասկանալու համար պետք է կարողանալ կանխագուշակել ապագան: Իսկ գուշակելու համար պետք է ընկալել նոր ստեղծված գիտելիքները և առանց արդի աշխարհի մասին պատկերացումները փոխելու, զարգացումն անհնար է: «Եվրոպական և ամերիկյան տնտեսագետները նոր տնտեսության համար վարքագծի նոր կանոններ են ձևավորում և փորձում են իրականացնել անցումը նոր համակարգին, որը էությունն այն է, որ ժամանակակից տնտեսության կորիզը գիտելիքների և այդ գիտելիքների արտադրությունն ապահովելու ենթակառուցվածքների ստեղծումն է»:[1]

Իր հերթին նոր տնտեսության կառուցվածքային տարրերի առաջացումը կարելի է ներկայացնել 4 խմբերում ներառված հետևյալ 13 հատկանիշներով.

1.տեղեկատվական տեխնոլոգիական հեղափոխությունը.
ա) ամենուր միկրոչիպերի լայնորեն տարածումը,
բ) տվյալների փոխանցման ծախսերի կտրուկ նվազելը,
գ) հաշվողական ծախսերի կտրուկ նվազելը,
2.արդյունաբերական և մասնագիտական փոփոխությունը,
ա) գրասենյակներում գիտելիքահենք աշխատողների թվաքանակի աննախադեպ աճը,
բ) բարձր վարձատրվող, բարձրահմուտ աշխատողների թվաքանակի աճը,
3.դինամիզմը և մրցունակությունը.
ա) ձեռնարկատիրական կոշտ մրցակցությունը,
բ) համագործակցությունը մրցակիցների միջև,
գ) նոր տնտեսության մշտական «իրարանցումը»,
դ) սպառողների ընտրությունների ժայթքումը,
ե) նոր տնտեսակարգի արագության ստանդարտ դառնալը,
4.գլոբալացումը.
ա) տնտեսության մեջ առևտրի մասնաբաժնի ավելացումը,
բ) ամբողջ աշխարհում ՕՌԻՆ-երի մեծացումը:[2]

Ընդհանրապես գոյություն ունեն «գիտելիքահենք տնտեսության» բազմաթիվ սահմանումներ, որոնք շեշտադրում են կատարում տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների վրա: Դրանցից ամենաընդգրկունը և հատուկը կարող է համարվել Համաշխարհային բանկինը «Տնտեսություն, որն իր տնտեսական և սոցիալական զարգացման համար ստեղծում, ձեռք է բերում հարմարեցնում և արդյունավետ է օգտագործում գիտելիքը»:[3]

Ավանդական և գիտելիքահենք տնտեսությունները համեմատական կարգով կարելի է ներկայացնել հետևյալ բնութագրիչներով.

		Ավանդական	Գիտելիքահենք
Ծավալ	Հիմնական առանձնահատկությունը	Հաստատուն, դանդաղ զարգացող	Արագ, շարունակաբար զարգացող
	Մրցակցային հնարավորությունները	Ներքին	Գլոբալ
	Գերիշխող ֆիրմաները	Մեծ, արդյունաբերական ֆիրմաներ	Ինովացիոն, գիտելիքավար ֆիրմաներ
Առանձնահատկություններ	Ռազմավարությունը	Ստատիկ, աուաքելություն/նպատակավար	Դինամիկ, հնարավորությունավար
	Բիզնեսի շեշտադրումները	Կայունություն	Փոփոխության կառավարում
	Տեխնոլոգիական դիրքը	Ավտոմատացում	ՏՀՏ
	Շուկայի կիզակետը	Զանգվածային մարքեթինգ	Տարբերակում
	Կազմակերպչական կառուցվածքը	Հիերարխիկ	Ցանցավորված
	Հիմնական ռեսուրսը	Ֆինանսական կապիտալը	Մարդկային կապիտալ

Գիտելիքահենք տնտեսության գնահատման համար կիրառվում է web կայքի վրա հիմնված (http://info.worldbank.org/etools/kam2005) Համաշխարհային բանկի ինստիտուտի մշակված Գիտելիքի գնահատման մեթոդաբանությունը (Knowledge Assestment Methodology-KAM):

Ցուցանիշների ցանկը հնարավորություն է տալիս նույնականացնել գիտելիքահենք տնտեսությանն անցում կատարող երկրի առջև կանգնած հիմնախնդիրները և հնարավորությունները, նպաստնշել քաղաքականության և ներդրումների այն ուղղությունները, որոնց վրա պետք է կենտրոնացվի ուշադրությունը:

Գիտելիքահենք տնտեսության գնահատման մեթոդաբանությունը կազմված է 80 կառուցվածքային և որակական փոփոխականների հավաքածուից, որը հնարավորություն է տալիս էտալոնային թեստավորման (benchmark) ենթարկել երկրի տնտեսությունը, համեմատելով ավելի բան հարյուր երկրների հետ: Այդ 80 փոփոխականների հավաքածուն ներկայացնում է գիտելիքի տնտեսության զարգացման համար վճռորոշ 4 հիմնասյուները.

- Տնտեսական և ինստիտուցիոնալ ռեժիմ, որը խթանում է գոյություն ունեցող և նոր գիտելիքի արդյունավետ օգտագործումն ու ձեռնարկատիրության բարգավաճումը,
- կրթված և հմտություններով օժտված քաղաքացիություն, որը կարող է ստեղծել, տալ և լավ օգտագործել գիտելիքը,
- դինամիկ տեղեկատվական ենթակառուցվածքը, որը կարող է դյուրացնել արդյունավետ հաղորդակցությունը, տարածել և մշակել տեղեկատվությունը,
- ֆիրմաների, հետազոտական կենտրոնների, համալսարանների, խորհրդատվական և այլ կազմակերպությունների արդյունավետ նորաստեղծական համակարգ, որը կարող է մուտք գործել գլոբալ գիտելիքի աճող հիմնապաշարի մեջ, յուրացնել և հարմարեցնել տեղական կարիքների համար ստեղծել տեխնոլոգիա:

Որպեսզի հնարավոր լինի սահմանազատել գիտելիքահենք տնտեսությանն անցման ռազմավարությունները, համաշխարհային բանկի K4D ծրագիրը սահմանել է գիտելիքի տնտեսության այդ շրջանակը:

Հիմնական ցուցանիշների ցանկում օգտագործվում են երեքական փոփոխականներ նկարագրելու համար գիտելիքի չորս հիմնասյուներից յուրաքանչյուրը. տնտեսական խթանները և ինստիտուցիոնալ ռեժիմը, նորաստեղծությունը և տեղեկատվական ենթակառուցվածքը, գումարած, տնտեսական և սոցիալական գործունեությունը նկարագրող երկու փոփոխականները:

Ըստ K4D գլոբալ ատոմիաճանաչարգման աշխարհի 128 երկրների շարքում ՀՀ-ը գրավում է 53-րդ տեղը.

		KEI	KI	Տնտ. խթան	Ինով.	Կրթ.	Տնտ. ենթ.
1.	Շվեդիա	9.17	3.54	8.05	9.68	9.19	9.76
2.	Ֆինլանդիա	9.02	9.22	8.44	9.73	9.21	8.71
3.	Դանիա	9.00	9.23	8.31	9.36	8.87	9.46
9.	Նոր Զելանդ.	8.58	8.65	8.36	8.32	9.00	8.64
10	Նորվեգիա	8.56	8.73	8.08	8.89	8.95	8.34
11	ԱՄՆ	8.50	8.80	7.61	9.43	8.22	8.74
53	Հայաստան	5.10	5.16	4.9	5.72	6.00	3.77

Համաձայն «ատոմի նոր տեսության», որը 1980-ականներին մշակեցին Պոլ Ռոմերը և նրա հետևորդները գիտելիքների աճն ունի էնդոգեն բնույթ և կապված է տնտեսական այնպիսի գործոնների հետ, ինչպես շահույթի ստացման հնարավորությունների կատարելագործումը կամ կրթության որակի բարելավումը:

Արդի ժամանակաշրջանում շատ պետությունների գերակայությունները արտադրության ավանդական գործոններից (աշխատուժ և կապիտալ) տեղաշարժվում են դեպի գիտելիքներ և տեղեկատվություն: Այս առումով կարևորվում է այն փաստը, որ այսօր հիմնական միջոցները գտնվում են ոչ այնքան նյութական արտադրության, որքան տեղեկատվական-ֆինանսական ոլորտներում:

Ներկայումս որ տնտեսության բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի Հանրապետությունում գործում են շուրջ 120 ընկերություններ, որոնց ներդրումը տնտեսության մեջ գնահատվում է շուրջ 50 մլն ԱՄՆ դոլար և զբոսաշրջության հետ մեկտեղ դիտվում է որպես ՀՀ տնտեսական զարգացման գերակա ուղղություն: 2005 թ. հունվարի դրությամբ գրանցված գյուտերի և օգտակար մոդելների թիվը կազմել է 1491: Իսկ 100 հազար բնակչի հաշվով տարեկան արտոնագրված գյուտերի քանակով 2,5 ՀՀ գերազանցում է այնպիսի երկրների, ինչպիսիք են՝ Իտալիան (2,1), Իռլանդիան (1,7), Հունկոնգը (1,5), Իսպանիան (0,4): Սակայն ՀՀ-ում բավական ցածր է գրանցված գյուտերի առևտրայնացման ցուցանիշը[4]:

Թեև տնտեսական ակտիվ բնակչության մեջ գիտահետազոտական ոլորտում աշխատատեղերի տեսակարար կշռի (0,45 %) և ՀՆԱ-ում ԳՏՀ աշխատանքների արժեքի տեսակարար կշռի (0,3 %) ցուցանիշներով ՀՀ-ում նկատվում է անկում, այնուամենայնիվ համարվում է, որ ունեցածը բավարար է գիտարար գյուտերը ոտքի կանգնեցնելու և հետագայում դրանք տնտեսության շարժիչ ուժը դարձնելու համար:[5]

Մյուս կողմից գիտության ոլորտում ֆինանսավորման միջոցների սահմանափակությունը, գիտական ուղղությունների անհատական բազմազանությունը չեն նպաստում գիտական ներուժի արդյունավետ օգտագործմանը: Նշված ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ դեռևս շատ ցածր են և կազմում են 0,28 %: Իսկ Եվրոմիության կողմից փոքր երկրներում անցկացված հետազոտությունների արդյունքում նշվում է, որ եթե երկիրը գիտության համար հատկացնում է ՀՆԱ-ի մեկ տոկոս, ապա այդպիսի գիտությունը չի կարող ազդեցություն ունենալ տնտեսության վրա:[6]

Ինչ վերաբերում է գիտության և տնտեսության փոխառնչությունների վիճակը բնութագրող վերոհիշյալ ԼՂՀ ցուցանիշներին, ապա պետք է նշել, որ ԼՂՀ-ում համապատասխան վիճակագրական հաշվառում չի վարվում ինչպես գիտահետազոտական աշխատանքների թվաքանակի, գյուտերի և նորարարությունների գրանցման, այնպես ոլորտի սուբյեկտների կողմից կատարած աշխատանքների ծավալի վերաբերյալ: Ուստի հնարավորություն չի ընձեռվում քանակապես գնահատել ոլորտում ձեռք բերված մակարդակը: Միայն ընդգծենք, որ այն չափազանց թույլ ներգործություն ունի տնտեսական

ակտիվության և տնտեսական աճի ապահովման վրա: Նման իրավիճակի պատճառները կարելի է համարել ինչպես պետական համակարգված բաղաքականության բացակայությունը ոլորտում, այնպես էլ գիտական պոտենցիալի չկայացվածությունը: Նման հետևությանը կարելի է հանգել այն սուղ ֆինանսական օժանդակության ծավալով, որը հատկացվում է պետբյուջեից: Վերջին հինգ տարում դրանց չափերը տարեկան կազմել են 13-15 մլն դրամ, որը կազմում է ՀՆԱ-ի 0,05 տոկոսը և ավելի քան 20 անգամ պակաս է ընդունելի մակարդակից:

Ամփոփում

21-րդ դարում ավելի ու ավելի է կարևորվում գիտելիքների վրա հիմնված տնտեսության ստեղծումը և զարգացումը, որի կառուցվածքային տարրերի առաջացումը ներկայացվում է այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են տեղեկատվական տեխնոլոգիական հեղափոխությունը, արդյունաբերական և մասնագիտական փոփոխությունը, դինամիզմը և մրցունակությունը, ինչպես նաև գլոբալացումը: Տրվում են ավանդական և գիտելիքահենք տնտեսության համեմատական բնութագրերը, վերջիններիս գնահատման մեթոդաբանությունը, որը մշակվել է Համաշխարհային բանկի կողմից: Քննարկվում են ՀՀ-ում և ԼՂՀ-ում ոլորտին առնչվող առանձին ցուցանիշներ և նշվում գիտելիքի տնտեսության կայացման համար պետական համակարգված բաղաքականության իրականացման անհրաժեշտությունը:

Резюме

В 21 веке еще более важное значение приобретает созданис и развитие экономики, основанной на знаниях, образование структурных элементов которых представляется такими признаками, как информационно-технологическая революция, промышленные и профессиональные изменения, динамизм, конкурентность и глобализация. Приводятся сравнительные характеристики традиционной экономики и экономики, основанной на знаниях. Обсуждаются некоторые показатели, косающиеся этой отрасли в РА и НКР и подчеркивается необходимость проведения систематизированной государственной политики в этом направлении.

Գրականություն

1. Ա. Սարգսյան, «XXI դարի մարտահրավերները»: «Challeges Facing Armenia. Internal and Extermal Problems», 7-10 Dektember, 2005 Tsakhadzar.
2. The New Economy Index, progressive Policy Institute. http://www,neweconomyindex,org/sceetion1_untro,html,
3. Համաշխարհային բանկ «Համաշխարհային զարգացման զեկույց գիտելիքը զարգացման համար 1988/99»:
4. «Վենչուրային համակարգը Հայաստանում: Ներդրումային հայեցակարգ», Եր. 2005
5. Կ. Մակարյան «Ինովացիոն տնտեսության զարգացումը որպես համաշխարհային տնտեսության ինտեգրման նախապայման» (ՀՀ սոցիալ-տնտեսական արդի հիմնախնդիրները: Գիտական հոդվածների ժողովածու-5, էջ 342:
6. Деловой экспресс, Экономическая газета 17 ноября 2006 г, N43 (700)

ՀՏԴ 338

ԼԻԶԻՆԳԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մ. Ն. Սաֆարյան
ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

Լիզինգային գործառնությունները հատկապես մեծ նշանակություն ունեն անցումային տնտեսությամբ երկրների՝ այդ թվում ՀՀ համար:

Մինչ այսօր լիզինգի վերաբերյալ միասնական կարծիք գոյություն չունի: Սակայն ոլորտի մասնագետների մեծամասնությունը համաձայն է, որ լիզինգը գործընկերների գույքային հարաբերությունների յուրահատուկ տեսակ է, որն առաջանում է լիզինգատուի կողմից որպես սեփականություն գույքը ձեռք բերելու և այդ գույքը լիզինգառուին որոշակի փոխհատուցման դիմաց ժամանակավոր օգտագործման հանձնելու հետևանքով:

Իսկ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվում է, որ ֆինանսական վարձակալության (լիզինգի) այդմանագրով վարձատուն պարտավորվում է վարձակալի նշած գույքը սեփականության իրավունքով ձեռք բերել վարձակալի կողմից որոշած վաճառողից և վճարի դիմաց հանձնել վարձակալի ժամանակավոր տիրապետմանը ձեռնարկատիրական նպատակներով օգտագործելու համար: Այդ դեպքում վարձատուն պատասխանատվություն չի կրում վարձակալության առարկայի և վաճառողի ընտրության համար: Սակայն լինում են դեպքեր, երբ թե վաճառողի, թե գույքի ընտրությունը մնում է լիզինգատուին, այդ դեպքում ընտրության պատասխանատվությունը դրվում է լիզինգատուի վրա:

Ընդհանրապես լիզինգային գործարքներին բացի արտադրողից, լիզինգատուից և լիզինգառուից մասնակցում են նաև մի շարք այլ սուբյեկտներ՝ բանկեր, ապահովագրական ընկերություններ և այլն: Դրանց միջև առաջացող հարաբերությունները կարելի է ներկայացնել հետևյալ գծապատկերի միջոցով:



Գծապատկեր 1. Լիզինգի ժամանակ մասնակիցների միջև առաջացող կապերը

Համաշխարհային պրակտիկայում լիզինգային գործարքներն ընդունված է դասակարգել մի քանի հայտանիշներով.

1. Ելնելով շուկայի հատվածից, որտեղ իրականացվում են գործարքները.
   - ներքին, երբ բոլոր սուբյեկտները գտնվում են մեկ երկրի տարածքում
   - արտաքին (միջազգային), երբ լիզինգի սուբյեկտներից գոնե մեկը գտնվում է այլ երկրի տարածքում:

Իր հերթին միջազգային լիզինգը բաժանվում է.

- արտահանման (экспортный), երբ լիզինգառուն գտնվում է այլ պետության տարածքում.

- ներմուծման (импортный), երբ ուրիշ երկրի տարածքում գտնվում է լիզինգատուն:

2. Ըստ լիզինգային գործարքի սուբյեկտների կազմի

- ուղղակի, երբ գույքի սեփականատերն (արտադրողը) ինքնուրույն, առանց միջնորդի, գույքը փոխանցում է վարձակալության.
- անուղղակի, երբ գույքի փոխանցումը կատարվում է միջնորդի օգնությամբ (մասնագիտացված լիզինգային ընկերությունը, բանկի լիզինգային բաժինը և այլն).

3. Ըստ գույքի փոխհատուցվելիության աստիճանի և ամորտիզացիայի պայմանների

- լրիվ ետգնմամբ, այսինքն պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունենում գույքի լրիվ արժեքի վճարում.
- ոչ լրիվ ետգնմամբ՝ պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունենում գույքի արժեքի մասնակի վճարում.
- լրիվ ամորտիզացիայով՝ պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունենում օբյեկտի արժեքի լրիվ մարում.
- ոչ լրիվ ամորտիզացիայով՝ պայմանագրի գործողության ընթացքում տեղի է ունենում օբյեկտի արժեքի մասնակի մարում:

Լրիվ ետգնմամբ և լրիվ ամորտիզացիայով լիզինգը կոչվում է ֆինանսական լիզինգ, իսկ ոչ լրիվ ետգնմամբ և ոչ լրիվ ամորտիզացիայով լիզինգը՝ օպերատիվ լիզինգ:

4. Լիզինգային վճարումներից ելնելով.

- դրամական վճարումներով.
- փոխհատուցմամբ, այսինքն լիզինգառուն կամ մատակարարում է, ապրանքներ, կամ ծառայություններ է մատուցում.
- խառը վճարումով, սա վերոնշյալ երկուսի համադրությունն է:

Ներկայումս համաշխարհային պրակտիկայում լիզինգի լայն տարածումը պայմանավորված է լիզինգի առավելություններով վարկի համեմատությամբ:

1. Լիզինգը ենթադրում է 100%-անոց վարկավորում, իսկ վճարումները սկսվում են գույքը լիզինգառուին մատուցվարարելուց հետո կամ ավելի ուշ: Վարկի օգտագործման դեպքում գույքի ձեռք բերմանն ուղղված ծախսերի մի մասը կազմակերպությունը պետք է ֆինանսավորի սեփական միջոցների հաշվին:

2. Միջին և փոքր կազմակերպություններին ավելի հեշտ է գույքը լիզինգով ձեռք բերել, քան վարկ ստանալ դրա ձեռք բերման համար: Որոշ լիզինգային ընկերություններ կամ բանկերի լիզինգային բաժինները հաճախորդից վարկի ապահովություն չեն պահանջում, որովհետև ենթադրվում է, որ գործարքի համար գրավ հանդիսանում է հենց ձեռք բերված գույքը:

3. Լիզինգը ենթադրում է վարկավորման առավել ճկուն համակարգ: Այն դեպքում, երբ վարկը ենթադրում է հստակ սահմանված այսպիսանները (ժամկետ, տոկոսադրույք, վճարումներ), լիզինգը հնարավորություն է տալիս վարկավորման պայմանները հնարավորինս հարմարեցնել հաճախորդի պահանջներին՝ մարումները կարող են լինել ամսեկան, եռամսյակային կամ տարեկան, իսկ տոկոսադրույքն՝ ինչպես հաստատագրված, այնպես էլ լողացող:

4. Լիզինգի դեպքում սարքավորման բարոյական մաշվածքի ռիսկը կրում է լիզինգատուն, իսկ լիզինգառուն հնարավորություն ունի ժամանակ առ ժամանակ նորացնել իր սարքավորումները:

5. Լիզինգի դեպքում սահմանվում են նաև որոշակի հարկային արտոնություններ:

Այս առավելությունների հետ մեկտեղ լիզինգն ունի որոշ թերություններ.

1. Լիզինգի դեպքում վճարումները շարունակվում են անկախ այն բանից, արտադրանքը պահանջարկ վայելում է, թե ոչ: Սրանով պայմանավորված կազմակերպությունը պետք է առկա պահանջարկի համակարգման ուսումնասիրություն իրականացնի պայմանագիրը կնքելուց առաջ:

2. Լիզինգային գործարքի կազմակերպումը կապված է բազմաթիվ դժվարությունների հետ: Լիզինգային վճարումների ընդհանուր գումարը միշտ գերազանցում է գույքի գնման համար անհրաժեշտ վարկի մեծությունը: Սրանով պայմանավորված յուրաքանչյուր առանձին դեպքում անհրաժեշտ է համադրել այդ երկու տարբերակների արժեքները:

Առկա թերությունների հետ մեկտեղ լիզինգի վերոնշյալ առավելությունները նպաստել են լիզինգի լայն տարածմանը: Հնարավոր այն հանգամանքին, որ արտասահմանյան պրակտիկայում լիզինգն օգտագործվում է արդեն վաղուց, հայաստանում այն դեռ նոր երևույթ է:

Լիզինգը հատկապես մեծ նշանակություն ունի հանրապետության զարգացման համար, քանի որ կարող է հնարավորություն տալ փոքր և միջին կազմակերպություններին արտադրական գործընթացի մեջ ներգրավել բարձրարժեք ապրանքներ, որը տվյալ կազմակերպությունը չի կարող միանգամից գնել: Լիզինգն ամբողջ աշխարհում օգտագործվում է որպես արտադրական միջոցների նորացման կարևորագույն աղբյուր: Լիզինգից օգտվում են ինչպես փոքր և միջին, այնպես էլ խոշոր կազմակերպությունները:

Հայաստանյան պայմաններում առավել մեծ նշանակություն է ձեռք բերում միջազգային լիզինգը՝ հատկապես ներմուծման (импортный) լիզինգը: Սա հնարավորություն կտա կազմակերպություններին արտասահմանից ներմուծել նորագույն տեխնոլոգիաներ և փորձ: Դրա արդյունքում նրանց արտադրանքը կդառնա առավել մրցունակ արտաքին շուկայում: Ցավոք սրտի ներկայումս Հայաստանյան շուկայում լիզինգային գործառնությունները լայն տարածում չեն գտել: Իսկ իրականացվող գործարքների մեծամասնությունն իրականացվում է գյուղատնտեսության բնագավառում: Մեր կարծիքով, տվյալ իրավիճակը պայմանավորված է գործարար շրջանակների թիչ տեղեկացվածությամբ, վարկային կազմակերպությունների նկատմամբ վստահության բացակայությամբ, իսկ գլխավոր պատճառը հենց վարկային կազմակերպությունների կողմից առաջարկվող պայմաններն են: Օրինակ որոշ դեպքերում կանխավճարի անհրաժեշտությունը, կամ 100% ֆինանսավորման անհնարինությունը և այլն:

Չնայած այս ամենին, կարծես թե, լիզինգային շուկան սկսում է ակտիվանալ:

Ներկայումս ՀՀ-ում գործող վարկային կազմակերպություններից մի քանիսն են միայն իրականացնում լիզինգային գործառնություններ: Այդ կազմակերպություններն անվանումները և առաջարկվող պայմաններն արտացոլված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 1

ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից իրականացվող լիզինգային գործառնությունները

(մլն դրամ)

Կազմակերպությունը	Գումարը	Ժամկետը	Տարեկան տոկոսադրույքը
ԱԳԲԱ-լիզինգ	մինչև 185	6 ամսից մինչև 5 տարի	8,9-13,5% տարեկան թանկացում
Ագրոլիզինգ	-	6 ամսից մինչև 3 տարի	10-16%
«Կասկադ Կրեդիտ» ՈՒՎԿ	0.5 -100	մինչև 5 տարի	16%

Բերված աղյուսակից երևում է, որ թե տարեկան տոկոսադրույքը (միջին 13%), թե ժամկետները թույլ չեն տալիս լիզինգային վարկերի շուկան բնութագրել որպես էժան վարկավորման աղբյուր:

Ստեղծված իրավիճակի հաղթահարման ուղի կարող է դիտվել մասնագիտացված վարկային կազմակերպությունների ստեղծումը, որոնք կզբաղվեն լիզինգային գործառնություններով:

Ամփոփում

Բացահայտվում են լիզինգային գործառնությունների էությունը, տեսակները, առավելությունները, ինչպես նաև թերությունները: Վեր են լուծվում լիզինգային ընկերությունների ձևավորման գործընթացը և այդ շուկան բնութագրող գուցանիշները ՀՀ-ում: Արվում են առաջարկություններ լիզինգային ընկերությունների ստեղծման և գործունեության պայմանների բարելավման ուղղությամբ:

Резюме

Раскрываются суть, виды, преимущества, а также недостатки лизинговых компаний. Анализируются процесс формирования лизинговых компаний и показатели, характеризующие этот рынок в РА. Делаются предложения по созданию и улучшению условий их деятельности.

Գրականություն

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1998թ., հոդված 677:
2. Աղբյուրը BANKS.am ինտերնետային կայք:

УДК 796.51

РАЗВИТИЕ ТУРИЗМА В НКР В КОНТЕКСТЕ СОХРАНЕНИЯ, РЕСТАВРАЦИИ И ИСПОЛЬЗОВАНИЯ КУЛЬТУРНО-ИСТОРИЧЕСКОГО НАСЛЕДИЯ

С.С.Саркисян
кафедра экономики

Охрана культурного и природного наследия перед лицом постоянно растущего потребительского спроса требует нового взгляда на задачи консервации и тщательно продуманной политики, упреждающей нанесение ущерба.

Ведущую роль в координации и стандартизации мировой культурной и туристской деятельности играют ЮНЕСКО и ВТО. В рамках Всемирной конференции, определившей мировую политику в области культуры, приняты рекомендации о путях развития туризма на основе охраны и использования культурного, исторического и природного наследия. Принципы сотрудничества в областях культуры и туризма нашли свое отражение в декларациях, принятых в Маниле (1980 г.) и Мехико (1981 г.).

Памятники истории, культуры и природы являются национальным достоянием нашей республики. Освоение территории для туристских целей требует бережного подхода по принципу: «Сохрани - восстанови - не навреди».

НКР богат такими уникальными историческими территориями, историческими постройками, историко-культурными памятниками и др.Они не должны оставаться застывшими образованиями. Для реставрации памятников архитектуры и культуры бюджетом НКР 2005-2006 г.г. было выделено порядка 200 млн. драм. Из них:

1. Гтчаванк – 15 млн. др. - на полное восстановление главной церкви XIII века.
2. Чанахчи – Аветанараноц – 70 млн. др. – на реставрацию обоих сооружений израсходовано 5 млн. др., на следующий год планируется 20 млн. др.
3. Верхний Норагюх – 3 млн. др. – на ремонт крыши церкви.
4. Шуши – 23 млн. др. - на благоустройство кладбищ.
5. Туми – 500 тыс. др. – на реставрацию исторического моста.
6. Шош – 500 тыс. др. – на реставрацию исторического моста.
7. Амарас-монастырь – 40 млн. др.
8. Улубаб – 2 млн. др. на реставрацию и благоустройство церкви Иткесберк.
9. Гиши – 680 тыс. др. – на ремонт родника.

При организации уникальных территорий следует сочетать традиционные формы деятельности, исторически сформировавшие эти территории, с инновационными видами, к числу которых относится и туризм. Причем новые виды деятельности должны дополнять, а не подавлять сложившиеся хозяйственные, социокультурные и природные процессы.

При развитии туристской инфраструктуры важно не нарушать исторический облик территории. Каждый вновь создаваемый туристский центр (объект) должен соответствовать национальным особенностям и традициям нашего народа и одновременно иметь свой неповторимый облик. Компания "Сиркап Армения" строит несколько современных гостиниц в НКР на общую сумму свыше 1.5 млн. долларов. Фирма "Аспар" осуществляет проект по созданию в Степанакерте крупного туристического центра. На эти цели инвесторы уже предоставили 350 тыс. долларов.

Создание природно-исторических парков должно содействовать спасению ценнейших памятников культуры и истории как целостных архитектурно-ландшафтных и культурных комплексов. Необходимо в НКР осуществлять охрану и восстановление памятников культуры и истории рукотворного, природного и традиционного ландшафтов, которые также рассматриваются как непреходящие исторические ценности, национальное достояние.

Благодаря стараниям фонда "Национальное наследие" создан и открыт дом-музей Никола Думана в деревне Гшлаг, на туристическом маршруте Степанакерт-Гандзасар.

При возрождении культурно-исторических комплексов можно применять ансамблевый принцип и индивидуальное проектирование объектов.

Неотъемлемой частью процесса постепенного утверждения новой концепции развития культуры и туризма должно стать создание новых форм культурного туризма в НКР. Это обусловливает необходимость трансформирования уже известных форм туризма по мере того, как его роль в жизни нашего общества становится все более значимой. Трансформация туризма включает в себя изменение предложения и спроса. Экономическое, социальное и культурное развитие НКР влияет на туристический спрос (увеличение числа деловых поездок и выходных дней, экскурсий). В настоящее время в республике работают две туристические фирмы – "Степанакерт-тур" и "Аспар".

По официальным данным, число приезжающих в республику туристов ежегодно увеличивается примерно на 30-40%. Среди посещающих Нагорный Карабах наибольший процент составляют граждане США, Франции, Канады, России, Германии, а также жители Великобритании, Австралии, Сирии, Израиля и Японии. В 2005 году Карабах посетили около 5 тысяч туристов из 60 стран мира.

Примером нового подхода к развитию традиционных форм туризма являются рекомендации относительно повышения уровня культурного содержания тура путем включения в его программу знакомства с местными достопримечательностями, даже если речь идет об организации краткосрочной экскурсии или специализированном туре. Для лучшего ознакомления с нашими историческими памятниками можно организовать следующие туры:

1. Степанакерт – Дом-музей Никола Думана – Гандзасар
2. Степанакерт – Дом-музей Никола Думана – Дадиванк – Карвачар (Горячий источник)
3. Степанакерт – Шуши – Кашатаг
4. Степанакерт – 2000-летний платан – Красный Базар – Азох - Гтчаванк

Каждый район НКР обладает уникальным наследием. Для определения базы, необходимой для развития адекватного туризма в регионе, следует ответить на вопросы: «Какими ресурсами (наследием) уникальна конкретная местность?» и «Каким образом ресурсы (наследие) конкретной местности могут быть использованы в целях туризма?».

Чистота наших родников, рек, горного воздуха очень нравится туристам, посещающим НКР. Они поражаются нетронутостью нашей природы.

Туризм не только приносит доходы региону, но дает местному населению основание гордиться своим уникальным наследием и предоставляет возможности делиться им с туристами. Если общество будет это учитывать, то сможет создать систему рационального использования уникальных ресурсов для туризма в НКР. По оценкам специалистов, имеются достаточно хорошие возможности для развития беспрецедентного для НКР горнолыжного спорта. Это отроги горы Кирс в Шушинском районе и Мрав в Мартакертском районе. Организация баз для горнолыжного спорта в Гадрутском районе. Однако здесь нужны большие инвестиции.

Успешное развитие туризма, следовательно, массовое привлечение потенциальных туристов зависит от действий, направленных на сохранение культурных, исторических и природных ресурсов местности. Реализация программы по использованию историко-культурного и природного потенциала региона в целях туризма решит одну из важнейших его проблем - проблему сезонного колебания спроса - путем предложения разнообразных форм межсезонного туризма, которые предполагают использование элементов культуры.

Пробудив интерес общественности к охране памятников, не стоит полагаться только на отзывчивость и щедрость общественности, чтобы раздобыть огромные средства, необходимые для спасения исторического достояния НКР.

Нужно изыскивать другие, более надежные пути. Так родилась самая настоящая политика культурного туризма. Возникает вопрос: возможно ли придавать историческим памятникам, независимо от их культурного содержания, некую экономическую ценность? Ответ такой: да, но при условии, что меры по охране памятников станут составной частью экономического развития. В самом деле, способствуя развитию туризма, памятники представляют скрытую экономическую ценность, только ее нужно надлежащим образом эксплуатировать. Речь идет о том, чтобы вызвать цепную реакцию по спирали: памятники привлекают туристов; туристы приносят деньги; часть прибыли вкладывается в консервацию, реставрацию и освоение памятников с тем, чтобы они привлекали еще больше туристов, и т.д.

Только в прошлом году туризм обеспечил Нагорному Карабаху приток не менее одного миллиона долларов. Активно продаются турпакеты, в основном рассчитанные на 2-5 дней.

Стоимость обслуживания – от 50 до 100 долларов в сутки в зависимости от набора услуг. По словам туристов, посещавших Нагорный Карабах уже несколько раз, уровень обслуживания с каждым годом улучшается. Однако, имеется много нерешенных проблем. К примеру, недостаточно пока кемпингов, автопроката, мотелей. Поэтому в Карабах приезжают в основном для того, чтобы ознакомиться с историческими достопримечательностями.

Никто не станет отрицать, что международный туризм - одно из важнейших явлений нашего времени; и дело не только в его экономическом эффекте, хотя, надо отметить, в ряде стран доходы от туризма достигают 50 и даже 60 процентов всех валютных поступлений. Способствуя «обмену» путешественниками, туризм благоприятствует лучшему познанию и пониманию людьми внешнего мира. Расстояния уже не являются непреодолимым препятствием. Средства транспорта постоянно модернизируются, стоимость авиационных билетов, хотя и возросла из-за вздорожания нефтепродуктов, все еще остается доступной, расширяются льготы, предоставляемые при групповых поездках и чартерных рейсах.

Широта и разнообразие сфер деятельности туристической индустрии, стимулируемой освоением памятников и памятных мест, требует все большего увеличения персонала. Потребность в рабочей силе по большей части удовлетворяется за счет местного населения.

Второй лик туризма. «Освоение памятников и комплексов действительно содействует увеличению числа туристов, но нельзя закрывать глаза на тот факт, что вопрос развития туризма, и в особенности международного, не так прост, как кажется поначалу. Ныне пересматривается вопрос о расширении его вклада в дело экономического и социального развития НКР. Хотя уже доказано, что международный туризм приносит доходы и создает рабочие места, мы должны вместе с тем констатировать, что он грозит оказать вредное воздействие на социально-культурные ценности НКР.

Сегодня главное внимание все чаще уделяется культурному туризму, который предстает в более благоприятном свете, нежели туризм массовый. Однако, если не будут разработаны последовательная политика, нацеленная на «примирение» туризма и исторического наследия, и методы ее осуществления, его последствия могут также оказаться губительными'.

Некоторые направления дальнейшего обсуждения характера намечаемых усилий, направленных на достижение справедливого равновесия между потребностями туризма, законными интересами правительства, связанными с его стремлением максимально использовать объекты наследия для получения ощутимой экономической выгоды, прерогативами индустрии туризма и, наконец, задачами сохранения наследия в широком смысле этого слова - другими словами, всех физических и нематериальных объектов, содержащих в себе память прошлого. Реализация концепции устойчивого туризма — еще один модный термин — немыслима без активизации соответствующих программ по консервации объектов наследия, поскольку наследие является важным фактором регионального, социального, экономического и культурного развития нашей страны.

Консервация и реставрация культурного наследия ведут к созданию новых, рабочих мест. Чтобы понять и оценить наследие, его необходимо восстанавливать и содержать в надлежащих условиях.

Растущий спрос на все новые туристические объекты ведет к расширению объема реставрационных работ в нашей республике. С одной стороны, это отрадное явление, поскольку таким образом появляется возможность уберечь исторические здания от разрушения и радикальных переделок.

Забота о наследии обходится государствам в копеечку, поэтому приходится всегда думать о дополнительных средствах. И тем не менее имеющиеся в наличии средства слишком малы. В финансовом обеспечении работ по консервации объектов должна также принять участие индустрия туризма, извлекающая прямую выгоду из художественных объектов и памятников, которые привлекают посетителей своим богатством. Определенный процент доходов, получаемых туристическими компаниями, должен возвращаться на нужды консервации. Необходимо выделять больше государственных средств для сохранения наследия, обеспечивающего существование туризма в долгосрочной перспективе и, таким образом, представляющего собой значительный экономический ресурс.

Часто произведения искусства подвергаются порче ради пустой забавы. Многие памятники истории обезображены сегодня любителями настенных росписей, причем чаще страдают наиболее важные здания. Это социальное явление разрушает культурную среду. Существует опасность его расширения в долгосрочной перспективе и усугубления таким образом проблемы консервации. Опять же остановить этот процесс можно только с помощью просвещения местных общин и, особенно, молодежи. Нанесение на поверхность стен специального защитного лака не только требует дополнительных финансовых затрат, но и, что самое главное, видоизменяет первоначальный облик и окраску предметов, скульптур и архитектурных объектов.

В заключение можно сказать, что при условии реализации изложенных выше соображений можно достичь более гармоничных отношений между туризмом и наследием. Следует помнить о четырех главных задачах: создание истинных альтернатив массовому туризму; более рациональное использование человеческого потенциала и современной технологии с целью развития понимания природы наследия и его консервации и реставрации; поиск источников средств в свете растущего туристского спроса на объекты наследия и поощрение развития культурного туризма в новом направлении (помочь народу увидеть и оценить свое культурное наследие).

Мы убеждены в том, что разные люди, имеющие отношение к туризму (из экономических, академических и культурных побуждений), могут внести свой вклад в изменение общественных установок и подходов за счет хорошо продуманной организации туризма. Если это произойдет, то люди однажды сами почувствуют свою ответственность и испытают счастье от того, что могут быть причастными к охране окружающей их культурной среды. А она самым настоятельным образом требует принятия мер по сохранению силами людей и для людей, потому что «наше наследие не только отражает прошлое, но и указывает путь в будущее».

Опыт показал, что план развития туризма, включающий освоение памятников прошлого, способствует созданию инфраструктуры, включающей дороги, гостиницы, рестораны и т.п. В результате, при умелой организации, такие «освоенные» памятники гарантируют прирост потока туристов в нашу страну. Примером этому может стать развитая инфраструктура и хорошие дороги, ведущие в Гандзасарский монастырь и исторический центр – город Шуши.

Ամփոփում

Տուրիզմի զարգացումը ենթադրում է հուշարձանների պահպանման, վերականգնման, յուրացման մշտական գործընթաց, ինչպես նաև ճանապարհներ, հյուրանոցներ, ռեստորաններ և այլն ներառող զարգացած ենթակառուցվածքների ստեղծում:

Տուրիստական ինդուստրիայի գործունեության ոլորտների բազմազանությունը անխուսափելիորեն բերում է սպասարկող անձնակազմի աճի, հետևաբար նոր աշխատատեղեր:

Резюме

Развитие туризма предполагает перманентный процесс консервации, реставрации и освоения памятников, а также создание развитой инфраструктуры, включающей дороги, гостиницы, рестораны и т.д.

Разнообразие сфер деятельности туристической индустрии неизбежно приводит к увеличению числа обслуживающего персонала, а следовательно, созданию новых рабочих мест.

Литература

1. Катлин Перье-Д'Итерен, Туризм и сохранение исторического наследия: стремление к гармонии.
2. "Зеленая книга" по вопросам культуры, культурной индустрии и занятости, Европейская комиссия, 1997 г.
3. Сапсопе В., Культурный туризм.
4. Квартальнов В. А., Охрана и использование культурно-исторического наследия в туризме.

ՀՏԴ 371.31

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ «ՌՈՒՍ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺՆՈՒՄ

Կ.Ա. Հակոբյան

հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն

Հայոց լեզվի ուսուցումը լայն հնարավորություններ է ընձեռում այլ բաժիններում սովորող ուսանողների համար՝ յուրացնելու բազմադարյան փորձությունների միջով անցած ու թյուրեղացած մեր փառահեղ հայերենը: Կենսականորեն հաստատված ճշմարտություն է՝ մայրենի լեզուն լավ իմացողը միայն կարող է շատ լեզուների տիրապետել: Ինչ մասնագիտություն էլ նրանք ընտրեն, որ բնագավառում էլ աշխատեն, նրանց բարոյական ու հոգեկան կերտվածքը պետք է լուսավորվի մայրենի լեզվի խոր իմացությամբ: Պետք է ուսումնասիրեն ու յուրացնեն իրենց ճոխ, հարուստ բառագանձը եւ ձեռք բերեն դրանք ճիշտ ու նպատակամետ կիրառելու հմտություններ՝ պահպանելով յուրաքանչյուր բառի, դարձվածի համն ու հոտը:

Դարձվածների ուսուցումը ուսանողների համար անծանոթ երեւույթ չէ: Դրանց հետ նրանց ծանոթացումը սկսվում է տարրական դասարաններից: Ընթերցանության ժամին բացատրվում են տարբեր իմաստային հատկանիշներ, կառուցվածքային ու կիրառական առանձնահատկություններ ունեցող արտահայտություններ (դարձված, ասացվածք, առած, թեւավոր խոսքեր եւ այլն): Թեմայի տեսական ուսուցումը ուսումնական ծրագրով նախատեսված է 9-րդ դասարանում: Դպրոցում ստացած գիտելիքները չեն բավարարում, որ ուսանողները հստակ պատկերացում ունենան դարձվածային միավորների կառուցվածքի, իմաստարանական հատկանիշների, ձեւաբանական առանձնահատկությունների մասին: Հաճախ խոսքային իրադրության մեջ չեն կարողանում ճիշտ որոշել դրանց սահմանները, տարբերակել ազատ, կայուն բառակապակցություններից ու սովորական հարադրություններից:

Քննության առնենք դրանց ուսուցման յուրահատկություններն ու դժվարությունները «Ռուսաց լեզու եւ գրականություն» մասնագիտության խմբերում. պարապմունքները գործնական են, բայց նպատակահարմար է հարդրել որոշ տեսական գիտելիքներ:

Մեր կարծիքով, ռուսական բաժնում լեզվական երեւույթների խոր ու գիտակցական ընկալումը ավելի արդյունավետ ու մատչելի է դառնում՝ ուսումնասիրվող հարցերն ու իրողությունները հայերենում մատուցելու ժամանակ հնարավորության սահմաններում զուգորդելով ռուսերենի հետ:

Դասի մուտքը սկսվում է բառակապակցության տեսակների ուսուցմամբ: Գրատախտակին գրվում են հետեւյալ օրինակները:

Բարձր շենք	Высокое здание
գեղեցիկ աշխարհ	прекрасный мир

Ուսանողներից պահանջվում է գրված բառակապակցությունների հատկանիշներն արտահայտել այլ բառերով (նորակառույց, հարմարավետ, բարձրահարկ, չքնաղ, մանկական, կենդանական, комфортабельное, современное, многоэтажное, детский, звездный, животный):

Ուսանողների միջոցով մեկնաբանվում եւ ընդհանրացվում է, որ միենույն առարկաները բնութագրվում են տարբեր տեսակետներից՝ խոսելու պահին անհրաժեշտ իմաստն արտահայտելու համար, ինչպես՝ նորակառույց շենք, հարմարավետ շենք, բարձրահարկ շենք, комфортабельное здание, современное здание, многоэтажное здание եւ այլն: Ազատ բառակապակցություններ են եւ անհրաժեշտության դեպքում կարող ենք գործածել նրանցից յուրաքանչյուրը:

Այդ երեւույթի ընդհանուր բնութագրումից հետո ուսանողների ուշադրությունը հրավիրվում է կայուն բառակապակցությունների վրա:

Գրատախտակին գրվում են՝

Մարաթոնյան վազք	марафонский бег
մագնիսական դաշտ	магнитное поле
պատվո տախտակ	почетная доска
օլիմպիական խաղեր	олимпийские игры
ուսանողական տոմս	студенческий билет

Ուսանողները նկատում են, որ նշված կառույցներում հատկանիշների փոփոխությունը առաջ է բերում իմաստի փոփոխություն: Հիմնավորում են, որ կառույցների իմաստները բխում են բաղադրիչների բառային իմաստներից եւ գործածվում իրենց բուն նշանակությամբ: Ի տարբերություն նախորդի՝ սրանք կայուն բառակապակցություններ են:

Այնուհետեւ անցնում ենք դարձվածային միավորների ուսուցմանը: Նախապես հայտնվում է՝ դարձվածը կառուցվածքով կայուն, իմաստով ամբողջական, վերաիմաստավորված այնպիսի կապակցություն է, որ խոսքում վերարտադրվում է իբրեւ լեզվական պատրաստի միավոր: Օրինակ՝

Արջի ծառայություն	медвежья услуга
կաշին փրկել	спасти шкуру
ոսկե ձկնիկ	золотая рыбка
կրակի հետ խաղալ	играть с огнем

Պահանջվում է որոշել նշված դարձվածների արտահայտած իմաստները եւ ասել, թե իմաստային ինչ տարբերություններ են երեւան գալիս նախորդ կառույցների հետ համեմատած:

Ընդգծվում է, որ ամեն տեսակի բառակապակցություն դարձված չի համարվում: Դարձվածը իր քերականական եւ իմաստային կառուցվածքով չի նույնանում ոչ կայուն, ոչ ազատ բառակապակցություններին, շեշտվում են դրանց ինքնահատկություններն ու տարբերությունները:

Դարձվածների ուսուցման ժամանակ անդրադառնում ենք նաեւ հարադիր բայերով կազմված կառույցների բնութագրմանը, քանի որ սովորողները հաճախ դժվարանում են սահմանազատել դարձվածային արժեք ունեցող հարադրությունները ուղղակի իմաստ ունեցող հարադրություններից: Բերվում են հետեւյալ օրինակները:

Լաց լինել-լացել	ձեռք քաշել – հրաժարվել, ստորացրել
վազ տալ-վազել	աչքից ընկնել- չսիրվել, չհարգվել
պար գալ-պարել	հաց կտրել - բարեկամանալ

Հարադրությունները, թեեւ արտահայտության ձեւով նույնն են, բայց բովանդակությամբ իրարից բոլորովին տարբեր են: Զույգ մասի հարադրությունները բարդ բառեր են, նրանց իմաստը գոյանում է բաղադրիչ բառերի բառային իմաստներից: Աջ մասի հարադրությունները պատկերավոր են եւ արտահայտում են փոխաբերական իմաստ, որոնք չեն բխում դարձվածը կազմող բառերի բառային առանձին իմաստներից: Դրանք այլ խոսքային միջավայրում կարող են հանդես գալ որպես սովորական կապակցություններ՝ առանց փոխաբերական նշանակության:

Ուսանողներից անմիջապես պահանջվում է դարձվածային արժեք ունեցողները խոսքային միջավայրում գործածել սովորական կապակցությունների ձեւով, ինչպես՝

Աղջիկը մոր ձեռքը բաշնց գլխից:

Տատիկը հացը կտրեց ու տվեց թոռնիկին:

Երեխայի աչքից արցունքի մի կաթիլ ընկավ:

Այսպիսով՝ լեզվական իրակությունների պարզ ու մատչելի մեկնաբանումն ու բացահայտումը հատակ են դարձնում լեզվական երեւույթների ընկալումն ու արժեվորումը:

Դարձվածի ուսուցման ընթացքում կարեւոր է հաշվի առնել նրա էությունը պարզաբանող որոշ առանձնահատկություններ՝ դիտարկելով հետեւյալ հաջորդականությամբ:

1. Դարձվածային սերտաճում (фразеологические сращения)

Սերտաճումները անվանում են օբյեկտիվ իրականության բազմագան իրողությունները՝ անկախ բաղադրիչ բառերի ինքնուրույն իմաստներից: Դարձվածաբանական իմաստը անդամների առանձին իմաստների սոսկ մեխանիկական գումար չէ եւ չի ձեւավորվում դրանց ուղղակի համադրումով: Դարձվածը ձեռք է բերում նոր իմաստ, որը որեւէ կապ չունի առանձին բաղադրիչների իմաստային արժեքների հետ եւ չի բխում դրանցից, ինչպես՝

Աչքի փուշ-ատելի	Бить баклуши-безделничать
ապուշի գլուխ-հիմար, տխմար	с бухты-барахты-необдуманно
ասեղ կուլ տված-սաստիկ նիհար	спустя рукава-небрежно

2. Դարձվածային միասնություն (фразеологические единства)

Այս խմբի դարձվածների իմաստը որոշ չափով պատճառաբանված է բաղադրիչ բառերի առանձին եւ փոխաբերական իմաստներով: Իմաստաբանորեն սերտաճումների նման ամբողջական են եւ միաձույլ: Այս կարգի շատ դարձվածների բաղադրիչ բառերը կարող են գործածվել նաեւ իրենց ուղղակի, իմաստներով: Փոխաբերական կիրառությունն իսկ վերածվում է դարձվածի, օրինակ՝

Գլխին տալ-հնազանդում գոչալ, ճաշը նիհել-մեկին պատժել, լեզուն կծել-լռել, ильнть по лечению-приспосабливаться, адаптироваться, закидывать удочку-памекать на что-либо, прикусить язык-замолчать, зайти в тупик-оказаться в затруднительном положении.

Դարձվածային իմաստի պարզաբանման ու բացահայտման համար կարեւոր հանգամանք է հատուկտիպությունը եւ դրան նպաստող այն իրադրությունը, որի պատճառաբանությունն է տվյալ դարձվածային միավորը:

Ուսանողներին հանձնարարվում է վերցնել որեւէ բառակապակցություն, այն նախադասության մեջ գործածել ուղիղ եւ փոխաբերական իմաստներով: Օրինակ՝

Աղջիկը միրգ ուտելիս լեզուն կծեց: Խոսակցին լսելուց հետո նա լեզուն կծեց:

Мальчику, оказавшемуся в трудном положении, не оставалось ничего, как прикусить язык.

Ребенок во время еды нечаянно прикусил язык.

Դարձվածային սերտաճումը եւ դարձվածային միասնությունը կոչվում են իդիոմներ (առանձնարառույթներ) կամ իդիոմատիկ արտահայտություններ:

Իդիոմատիկ միավորների իմաստային արժեքի բացահայտմանը նպաստող դժվարություններն ու խոչընդոտները հիմնավորվում են ոչ միայն դարձվածային միավորների իմաստային առանձնահատկություններով, այլեւ յուրաքանչյուր ուսանողի մտածողության յուրահատուկ բնույթով: Ուսանողների որոշ մասի մոտ մտածողության կոնկրետությունը խանգարում է արագ կողմնորոշվել եւ դյուրին մենկնաբանել արտաքին կառույցի տակ թաքնված ընդհանրական-փոխաբերական իմաստը: Ավելի ակտիվ ու մտավարժ ուսանողները, ովքեր աչքի են ընկնում զարգացած վերացական ըմբռնումներով, տրամաբանական ու պատկերավոր մտածողությամբ, դարձվածային իմաստը ընկալում են արագ ու հեշտ:

Դարձվածային միավորների ուսուցման արդյունավետությունը ապահովելու, նրանց իմաստաբանական բարդ համակարգի առանձնահատկությունների խոր, կայուն յուրացման ու համակողմանի բնութագրման համար պատշաճ դեր ունեն մարդու գործունեության ամենատարբեր բնագավառների, մարդու եւ բնության տարբեր մասերի եւ երեւույթների հետ կապված դարձվածների առավել կարեւոր խմբերի, նրանց իմաստային դրսեւորումների (մենիմաստ, բազմիմաստ), ձեւաիմաստային տեսակների, դրանց տարբերակների, համանիշների ու դարձվածին հատուկ բառերի դիտարկումն ու համադրումը:

3. Առանձնակի կարեւորություն ունի դարձվածային կապակցությունները (фразеологические сочетания) եւ դարձվածային արտահայտությունները (фразеологические выражения) իդիոմներից տարբերակելու հարցը, որը սովորողների համար անհրաժեշտ նախապայման է՝ դարձվածը լայն իմաստով ըմբռնելու, չսահմանելու ու խուսափելու լեզվաբանության մեջ գոյություն ունեցող իրարամերժ կարծիքներից ու բախումներից: Հաղորդվում է, որ դրանք իմաստաբանորեն տարբերելի են եւ տարբերվում են իդիոմներից: Դարձվածային ընդհանուր իմաստը թխում է դարձվածի բաղադրիչ բառերի բառային իմաստից: Դարձվածային կապակցություններում բաղադրիչներից մեկը գործածվում է փոխաբերական իմաստով եւ հաճախ փոխարինվում հոմանիշ բառերով. Օրինակ՝

Քիթը ջարդել-քիթը տրորել, հոնքերը կիտել-նութերը կիտել, берет страх-берет ужас, сгорать от стыда-сгорать от позора եւ այլն:

Դարձվածային արտահայտությունների շարքն են դասվում թեւավոր խոսքերը, ասույթները, անեծքները, մտքերանքները, օրհնանքները, առածները ու ասացվածքները: Փաստական նյութի միջոցով բացահայտվում են դրանց իմաստային ու քերականական փոխհարաբերությունները եւ լուրջ վերլուծության ենթարկվում այլ կառույցների հետ ունեցած տարբերությունները՝ սովորողների մոտ համոզիչ դարձնելով ուսուցանվող նյութի յուրացման հետ կապված եզրահանգումները:

4. Հանգամանորեն մենկնաբանվում են դարձվածային միավորների (իդիոմների) անթարգմանելիության հարցը:

Իդիոմները խորապես ազգային մտածողության ինքնատիպ ու բնորոշ լեզվական դրսևորումներ են, առաջացել են տվյալ ժողովրդի պատմական կյանքի ընթացքում, իմաստավորվել նրա դարավոր փորձով: Ի դեպ՝ որպես վերոհիշյալի վկայություն, տեղին է մեջբերել ռուս լեզվաբան Ա. Բաբկինի հետևյալ տեսակետը. «Իդիոմատիկան ազգային լեզուների սրբության սրբոցն է, հենց իդիոմում են արտահայտվում որևէ ազգի ոգին ու առանձնահատկությունները, այն անկրկնելի է»:

Իրոք, անկրկնելիության պատճառով դարձվածի թարգմանությունը միշտ չէ, որ հաջող է ստացվում: Լինելով տվյալ ժողովրդի լեզվամտածողության, հոգեբանության ու ազգային ինքնատիպության արտահայտություն, դրանք դժվարությամբ՝ ենթակայվում այլ ժողովուրդների կողմից: Թարգմանության արդյունքում հաճախ առաջանում են անհեթեթ ու ծիծաղաշարժ բառակապակցություններ. ինչպես՝ աչքը ջուր կտրել-вола глаза режет, արևդ ապրի-пусть твое солнце будет жить, սրտիդ ջուր խմել-пить воду из сердца, աչքդ լույս-глазам свет, море по колено-ծովը մինչև ծնկները է գալիս, молчать как убитый-լռել ինչպես մեռած, птица высокого полета-թռչուն թռիչքի թռչուն, собака на сене-շունը դեզի վրա, брать голыми руками-մերկ ձեռքերով վերցնել եւ այլն:

Արտահայտության այսպիսի եղանակը խորթ է երկուստեք ժողովուրդների լեզվամտածողությանը եւ որևէ չափով չեն արտացոլում բնօրինակի բովանդակությունը:

Ուստի իդիոմների բառացի թարգմանությունը խրախուսելի չէ: Սրանք սովորաբար թարգմանվում են նկարագրական եղանակով, երբեմն էլ դարձվածին համարժեք մեկ բառով. օրինակ՝ երես տալ-баловать, գլխի ընկնել-понять, поле зрения-տեսադաշտ, искра божья-շնորհ, ձիրք, Филькина грамота-անգրագետ գրված փաստաթուղթ, արևիդ մեռնեմ-я за тебя жизнь отдам եւ այլն:

Այնուհանդերձ, ինչպես այլ լեզուներում, այնպես էլ հայերենում կան տարբեր լեզուներից, այդ թվում ռուսերենից թարգմանված դարձվածային միավորներ, որոնք կիրառվում են գործառական տարբեր ոճերում: Օրինակ՝ голубь мира-խաղաղության աղավնի, за кулисами-կուլիսների հետեւում, холодная война-սառը պատերազմ, найти общий язык-ընդհանուր լեզու գտնել, называть вещи своими именами-իրերը իրենց անուններով կոչել եւ այլն:

Թարգմանությամբ են անցել մեր լեզվին հունական դիցաբանության հետ կապված մի շարք դարձվածներ, որոնք մեծ մասամբ միջազգային բնույթ են կրում. ինչպես՝ աքիլլեսյան գարշապար-ахиллесова пята, ավգյան ախոռներ-авгиевы конюшни, սիզիֆյան աշխատանք-сизифов труд, հոմերական քրքիջ-гомерический хохот, տրոյական ձի-троянский конь եւ այլն:

Փաստերը ցույց են տալիս, որ տարբեր լեզուներում կան միատեսակ շատ դարձվածներ, որոնք ստեղծվել են անկախաբար, մարդկային մտածողության ընդհանրությունների շնորհիվ: Օրինակ՝ սրտին մոտ ընդունել-принимать близко к сердцу, մուկ ու կատու խաղալ-играть в кошки-мышки, յոթերորդ երկնքում-на седьмом небе եւ այլն:

5. Թեմայի համակողմանի յուրացման համար կարեւոր է նաեւ դարձվածների խոսքիմասային արժեքի մասին տեղեկությունների հաղորդումը: Դարձվածները ըստ իրենց իմաստային, քերականական եւ գործառական հատկանիշների ենթարկվում են ձեւաբանական հետեւյալ դասակարգման՝ գոյականական, ածականական, բայական, մակբայական եւ եղանակավորող, որոնք կարող են ունենալ երկանդամ, եռանդամ, որոշ դեպքերում բառանդամ կառույցներ: Կոնկրետ օրինակների միջոցով պետք է պարզել յուրաքանչյուր խոսքի մասին հետաքրքրական կարգերը եւ բացահայտել տարբեր ձեւաբանական հատկանիշներ ունեցող դարձվածների կիրառական առանձնահատկությունները:

6. Ուսումնասիրվող լեզվական միավորի էությունը իր արտահայտության ամենատարբեր դրսևորումներով ճիշտ ընկալելու համար կարեւոր է նաեւ տեսադաշտից դուրս չթողնել նրա ոճական առանձնահատկությունների բացահայտումը:

Դարձվածը խոսքը դարձնում է պատկերավոր, արտահայտիչ, մտերմիկ ու անմիջական, հաղորդում նրան ժողովրդական ոգի եւ հուզարտահայտչական երանգներ: Այդ առումով անհրաժեշտ է ուսանողներին ներկայացնել դարձվածների կիրառական առանձնահատկություններն ու ոճական նկարագիրը, որի իմացությունը կօգնի խոսքն ավելի գեղեցիկ, դիպուկ ու սեղմ արտահայտելու եւ տեղին գործածելու, քանի որ յուրաքանչյուր դարձված ոճական կիրառության իր ոլորտն ունի եւ սխալ օգտագործումը կաղավաղի խոսքը:

Դարձվածի ոճաբանական դասակարգումը ըստ գործածության ոլորտի կատարվում է՝ երևելով խոսքի տարբերակային ձևերից: Օրինակ՝ հոգու հատող, գերության շղթա, լուսատու աստղ (բանաստեղծական), երկնքից աստղեր վայր բերել, ջերմ արձագանք գտնել, անարգանքի սյունին գամել (գրքային), տունը բանդվել, խոսքը կտուրը գցել, ոտքը ոտքի առաջ չդնել (խոսակցական):

Դարձվածի ոճական արժեքը պայմանավորվում է նաև ամենաբազմազան մնրաբերմունքների արտահայտմամբ. օրինակ՝ փորը ծխով լցնել (թշնմ.), շուն կտրել, ռեխը բան գցել (գռհգբ.), աստի արջ, թոկից փախած (անրգ.), խնամու նզան գյուղացի, մատս չկծես (ծղր.), մազերից մարդ կկտխվի, հավի հիշողություն ունենալ (հգն.), երկինք հանել (գվս.), խեղճ ու կրակ (կրկց.), շուն խաղացնող, գիրք կրծող (ապիմրհ.), մատ թափի տալ (սպզն.) եւ այլն:

Հանձնարարվում է դուրս գրել բնագրային օրինակներ եւ որոշել դարձվածի արտահայտության ձևերը:

Դարձվածների ուսուցման ընթացքում ուսանողները ձեռք են բերում ոչ միայն ընդհանրական գիտելիքներ, այլեւ դրանք միջոց դարձնելով՝ հմտանում պատկերավոր խոսք կառուցելու գաղտնիքների մեջ, կատարում բառերի, կայուն բառակապակցությունների ու դարձվածների ճշգրիտ, հաջող ընտրություն, տիրապետում դրանց կախարդական հատկություններին, յուրացնում ամեն մեկի եզակի նրբերանգները: Դարձվածների բազմակողմանի իմացությունը լավ լեզու իմանալու, բանավոր եւ գրավոր գեղեցիկ խոսքին վարժվելու ունակությունների զարգացման կարեւոր նրաշխիքներից մեկն է: Օտարազգի նրախտավորներից մեկն ասել է. «Հաջող բառը հաճախ բավական է նեղ կանգնեցնելու փախուստի մատնված զորքին, պարտությունը վերածելու հաղթանակի եւ փրկելու երկիրը»:

Ավելի խորը զգալու յուրաքանչյուր բառի, դարձվածի նրբիմաստային տարբերություններն, անսահման հմայքն ու ներգործելու ուժը՝ մշտապես պետք է հարստացնել բառապաշարը, կարդալով կառուցել գեղեցիկ, դիպուկ ու տպավորիչ խոսք: Հենց սրանք էլ ուսանողների մտավոր աճի խոսուն ցուցանիշների վկայությունն են:

Ամփոփում

Դարձվածային միավորների ուսուցումը ռուս բանասիրության բաժնում մատուցվում է՝ հնարավորության սահմաններում զուգադրելով ռուսերենի հետ: Հստակ ու հիմնավորված ներկայացվում են դարձվածի և բառակապակցության, հարադրության, իդիոմների և իդիոմատիկ արտահայտությունների, դարձվածային կապակցության և դարձվածային արտահայտության տարբերությունները ու ընդհանրությունները, բացահայտվում կիրառական ու ոճական առանձնահատկությունները:

Резюме

Обучение фразеологическим единицам, как правило, протекает в аспекте сопоставления с русским языком.

Различия и сходные черты фразеологизмов и словосочетаний, идиом и идиоматических выражений, фразеологических сочетаний и фразеологических выражений даются автором обоснованно и ясно, разъясняются их прикладные и стилистические особенности.

Գրականություն

1. Խ.Գ. Բաղիլյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երեւան, 1986թ.:
2. Պ.Մ. Պողոսյան, Խոսքի մշակույթի եւ ոճագիտության հիմունքներ, հ. I, Երեւան, 1990թ.:
3. Ա.Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երեւան, 1989թ.:
4. Ա.Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Երեւան, 1990թ.:
5. Н.С Валгина, Д.Э. Розенталь, М.И. Фомина, Современный русский язык, Москва, 2002г.

ՀՏԴ 82.09

Ե. ՉԱՐԵՆՑԸ՝ ՄԱՆԿԱՎԱՐԺ ԵՎ ՏԵՍԱԲԱՆ

Ա.Մ.Աթայան
գրականության և ժողովրդական ստեղծագործության ամբիոն

Որքան մեծ է գրողի կողմից կյանքն ուսումնասիրելու, այն խորապես զգալու վարպետությունը, այնքան խորն է նրա տեսական իմացությունը:

Այս առումով Ե. Չարենցը մի անմար կիզակետ է, որ իր մեջ խտացրել է մեր դասական մանկական գրականության տեսությունն ու մանկավարժության լավագույն ավանդույթները:

Մանկական գրականությանը ներկայացվող նրա պահանջները, հայոց լեզվի եւ գրականության ուսուցման մասին նրա հայացքները, դասագրքերի ստեղծման նրա մեթոդները ամփոփված են բանաստեղծի գրականագիտական հոդվածներում, դասագրքերի բացատրականներում, արխիվային բազմաբնույթ փաստաթղթերում, որոնք բանաստեղծ-մանկավարժի խոր ու բազմակողմանի զարգացածությունն են ապացուցում:

Ե.Չարենցը մանկավարժի բնածին խառնվածք ուներ: Ուսուցման ու դաստիարակության հարցերը, ժամանակակից դպրոցի պահանջները, նրա զարգացման հեռանկարները ճիշտ պատկերացնելու շնորհիվ մեծ բանաստեղծն ու մանկավարժը ստեղծել է հայ դպրոցի ու մանկավարժության համար կարեւոր արժեք ներկայացնող ձեռնարկներ, քրեստոմատիաներ, բազմիցս բնութագրել ժամանակի մանկական գրականության վիճակը, նրա դերը երեխաների դաստիարակության գործում:

Քաջ գիտակցելով, որ մանկական գրականությունը ընդհանուր գրականության ամենապատասխանատու բնագավառն է, Չարենցն իր ելույթներում, հոդվածներում, նամակներում տվեց մանկական գրականության տեսությունը, որը թե ավանդական է, թե արդիական եւ ուսանելի շատ բան ունի գրականության տեսաբանների, մանկավարժների ու քննադատների համար:

-Ինքս ոչինչ չեմ գրել ու չեմ գրում մանուկների համար, որովհետեւ դա համարում եմ լուրջ գործ, որ պահանջում է հատուկ աշխատանք եւ ժամանակ: Եթե երբեւիցե ազատ լինեմ ընթացիկ աշխատանքներից, ապա կփորձեմ գրել՝,- խոստովանել է Չարենցը՝ համեստորեն խուսափելով ընդգծել իր երկերի կրթադաստիարակչական նշանակությունը, որի շնորհիվ էլ նրա ստեղծագործությունների մեծ մասը մտնում է մանկապատանեկան գրականության մեջ: Զարդարելով մեր դասագրքերը, դառնալով հայրենասիրության, մարդասիրության, մարդկային լավագույն հատկությունների դաստիարակության գեղեցիկ օրինակներ:

Մանկագրությունը լուրջ ու պատասխանատու գործ համարող Չարենցը հրաշալի գիտեր դպրոցը, երեխայի հոգեբանությունը, ծանոթ էր հայ, ռուս, եվրոպական առաջավոր մանկավարժության լավագույն ավանդույթներին: Այս ամենին նպաստել է այն հանգամանքը, որ 1919-20թթ. Ե. Չարենցը որպես ուսուցիչ աշխատել է Կարսի գյուղերից մեկում՝ Բալկադիկլարում, ապա ոչբանոցում՝ որպես դաստիարակ: Այդ դաժան ու դառնությամբ հագեցած տարիները, մեծ լարում ու զրկանք պահանջելով Չարենցից, իրենց անջնջելի կնիքն են դրել նրա հոգում:

Գրականագետ Հր. Թամրազյանը, իր «Եղիշե Չարենց» գրքում շարադրելով բանաստեղծի կենսագրությունը, առանձնակի շեշտում եւ կարեւորություն է տալիս Ե. Չարենցի եւ Գ. Աբովի համատեղ գործունեությանը: Վկայակոչելով Կարինե Քոթանջյանի պատմածները՝ Թամրազյանը նկարագրում է այն տառապանքներն ու մարտահրավերները, որոնք, ի վերջո, երկու երիտասարդներին հասցնում են հեռավոր այդ գյուղը:

«Արդեն 6 գրքի հեղինակ Ե. Չարենցը Կարսի խուլ գյուղերից մեկում՝ Բալկադիկլարում՝ հայրենիքի մի տանջահար անկյունում, հասարակ ուսուցիչ է դառնում իր նման թուրքական ճակատից դարձած մեկ ուրիշ նրիտասարդ քանաստեղծի՝ Գեորգ Աբովյանի հետ:

Չարենցն այս անգամ մանուկների մեջ էր, ապրում էր երկրի վաղվա օրվա ծանր տագնապը, անմիջապես զգում իր ժողովրդի աներեւակայելի մարտահրավերը: Հոմի. Թումանյանի պես՝ ամեն օր, ամեն պահ սրտին ընդունում էր բախտի դաժան հարվածները... Եվ այդ

հարվածներն իջնում էին ամենաբնաբուշ ու անպաշտպան արարածների՝ երեխաների վրա»,- գրում է Հր. Թամրազյանը:

Ե. Զարենցի այդ տարիների մասին պատմող հուշերը վկայում են, որ ծանր օրեր է ապրել Զարենցը. անընդհատ սովից մահանում էին դպրոցի երեխաները: Նրանց դալուկ դեմքերն ամբողջ կյանքում չեռնացան բանաստեղծի մտապատկերից: Իսկ ամեն օր դասամատյաններում աշակերտների անունները պակասելուց Զարենցը ապրսպիելի լարված, շիկացած, հակասական վիճակի մեջ էր ընկնում: Այդ ծանր օրերին անգամ բանաստեղծ-մանկավարժին մտահոգում էր դպրոցական ծրագրերի ու դասագրքերի վիճակը, որը նա ստիպում է պայքարել ուսուցման մատչելիության, մասնագիտացման նպատակայնության, երկի միջոցով բարոյական, գեղագիտական նպատակների իրագործման համար:

Այն համոզմունքով, որ միշտ էլ մեր ավանդական ընթերցարանները հարուստ նյութ են տվել մանկական գրականությանը, որ Ծնորհալու «Խրատ ուսումնականաց մանկանցը», Աբովյանի «Նախաշավիղ կրթությանը», Աղայանի «Ուսումն մայրենի լեզվի» գրքերը նաև մանկական գրականության լավագույն գրքեր են եղել, Զարենցը 1920թ. միջին դասարանների համար կազմում է «Գրականության դասընթաց», իսկ 30-ական թվականների սկզբին հայոց լեզվի եւ գրականության դասագրքեր:

Զարենցի հուշագիր Արշադույս Զանիկյանը պատմում է, որ ինքը բախտ է ունեցել Զարենցի հետ ուսուցիչ լինել, »նրա հետ ապրել 1920թ. խստաշունչ, ողբերգական օրերը:

«Դպրոցը կազմակերպված Երեւանի հիվանդ երեխաների ամբիկյան մանկատունը կից, բաղկացած էր երեք դասարանից, հետ մնացող ուսուցչական կազմով, 3-րդ դասարանի դաստիարակ-ուսուցիչ Եղիշե Զարենց, 2-րդ դասարանի ուսուցչուհի Արփիկ Աստվածատրյան (հետագայում՝ Զարենց), 1-ին դասարանում՝ ես»,- գրում է Ա. Զանիկյանը:[3] Ըստ հուշագրի՝ Զարենցը դարձել էր ուսուցիչ եւ որքանոցի երեխաներին հայոց լեզու, թվաբանություն էր սովորեցնում՝ սնվելով մանկատան խղճուկ սնունդով եւ միշտ հոգոզված, որ դա ժամանակավոր երեւույթ է: Այստեղ են ծնվել նրա շատ բանաստեղծությունները, որոնք նախ կարդացել է ուսուցիչների համար: Հատկապես սիրում էր արտասանել Ենրյանի բանաստեղծությունները՝ սիրով, զգացմունքով: Զարենցին այցելում էին արվեստագետներ, գրողներ: Նա առավոտները դաս էր տալիս, իսկ դասամիջոցներին՝ դպրոցի բակում շուրջպար բռնում երեխաների հետ՝ ցանկանալով գոնե մի քիչ ուրախացնել դժբախտ որբերին:

Զարենցը շատ էր մտահոգված երեխաների վիճակով: Նա չէր սիրում, երբ երեխաներն իրենց նվաղում հայացքները հառում էին գետնին, սաստում էր, որ վեր նայեն, հպարտ մնան, նայեն երկնքին, ծառերին...

Զարենցը մտահոգված էր հատկապես երեխաների հագուստի, սննդի հարցով:

- Քաղցած են երեխաները, մերկ են, բայց ալիտի սովորեն հայոց լեզուն,- ասում էր նա: Իսկ երբ բողոքում էին ուսուցիչները, որ երեխաները չեն սովորում, Զարենցն ասում էր.

- Թողեք ազատ, երեխաները ուժ չունեն, հետո կսովորեն, կգա ժամանակը կսովորեն:

Զարենցը երեխաների հետ նկարում էր, երգում, սովորեցնում հայկական ժողովրդական, ինչպես նաեւ Սեյլաթ Նովայի եւ Կոմիտասի երգերից: Զարենցի մասին գրված բազմաթիվ հուշերում մենք տեսնում ենք բանաստեղծի բարոյական կերպարը, նրա սերը մարդու, հատկապես երեխաների հանդեպ, նվիրվածությունն ու մտահոգությունը նրանց ապագայի նկատմամբ:

Մանկատան երեխաներին Զարենցը պատմում էր Բալդակդիկլարի մասին՝ որպես քաղցր ու անմոռաց հուշ: Նա միշտ ակնածանքով էր հիշում մորը, հաճախակի էր արտասանում նրան նվիրված գագեր՝ դրանով երեխաների մեջ սեր արթնացնելով դեպի ծնողը, հայրենիքը: Զարենցի ժամանակակիցները վկայում են բանաստեղծի մանկավարժական տաղանդի, երեխաների հանդեպ անսահման հոգատարության, նրանց խորհուրդներով օգնելու, մխիթարելու վարպետության մասին: Մեկը մյուսից սրտառուչ հուշեր կան այն մասին, որ բանաստեղծը խոր մարդասիրությամբ, անհուն երեխայասիրությամբ օժտված մանկավարժ էր: »Անօգնական երեխաների միջավայրում ամեն օր, ամեն ժամ վերապրելով հարազատ ժողովրդի թշվառությունը բանաստեղծը նորից ու նորից դառնում էր «Դանթեական դժոխքի» հարցումներին: Ո՞վ հնարեց պատերազմը, ո՞վ դարձրեց կյանքը «թարախակալ նրագ», ո՞վ հնարեց այս որբերին, ո՞վ, ո՞վ...

Հարցումների շարանը վերջ չուներ, եւ սակայն, անմխիթար խորհրդով, նա կլանում էր շարունակում էր եռանդով մխիթարել անօգնականներին, մի դեպքում շուրջպատում, երկրորդ դեպքում՝ հուսադրող խոսքերով, երրորդ առիթով՝ սրախոսությամբ,՝ որի դառնությամբ մտաբերողն այս անգամ արդեն հինգերորդ որբանոցի որբ Գուրգեն Մահուրին է: Մահուրին վերհիշում է. «...հետո նայեց իմ որբանոցային շտեներին, սիթաին, շորերին եւ ձեռքը խփեց ձեռքին.

- Այ տղա, էս որբերին ո՞վ հնարեց:

- Ո՞վ հնարեց... ».- կարդում ենք Ա. Զարեւարյանի «Հուշեր եւ արձագանքներ» գրքում:

Հավանաբար, Զարենցի մանկավարժական կարճ, բայց արդյունավոր գործունեությունից ծնվեցին նրա ընթերցարաններն ու բրնստոմատիաները: Փաստերը վկայում են, որ 1928-30թթ. միջնակարգ դպրոցների համար Զարենցը կազմել ու հրատարակել է 10-ից ավելի դասագրքեր եւ ուսումնական ձեռնարկներ:

Գրականագետ Գ. Հակոբյանը ուսումնասիրել է Զարենցի բոլոր դասագրքերը եւ մեկ հավաքածուի մեջ ամփոփել այն բոլոր նյութերը, տեքստերը, հարցերն ու առաջադրանքները, որոնք պատկանում են բանաստեղծի գրչին: Այդ նյութերում ի հայտ են գալիս Զարենցի նախասիրություններն ու հետաքրքրությունները մի նոր ընդգավառում՝ մանկավարժության մեջ, երեւում են լեզվի եւ գրականության դասավանդման ճիշտ մեթոդիկա մշակելու գործում նրա մտահոգությունները, կարողություններն ու հմտությունը: Զարենցն աշխատել է գեղարվեստական գրվածքը ճիշտ հասկանալու եւ վերլուծելու կարողություն զարգացնել աշակերտի մեջ, եւ նրա հարցադրումներն այսօր էլ կարող են օգտակար լինել մանկավարժների համար,- կարդում ենք »Ե. Զարենց, Անտիպ եւ չհավաքած երկեր« (1983թ.) գրքում (էջ 687): Նույն հատորման մեջ տրված է Զարենցի կազմած 12 գրքերի ցուցակը, որոնցից մեկը կազմել է Ակ. Բակունցի հետ (1933թ., Հայ գրականության քրեստոմատիա).՝

«Գրականության դասընթացի» առթիվ դասատուներին ուղղված խոսքում Զարենցը նշում է, որ մայրենի լեզվի նկատմամբ բարձր տիպի (5-7-րդ) դպրոցի նպատակներն են բացի զուտ լեզվական ունակությունների (գրավոր եւ բանավոր) զարգացումից տեղեկություններ տալ աշակերտներին 19-րդ եւ 20-րդ դարերի գրականության մասին՝ տվյալ ժամանակշրջանի հեղինակների այնպիսի գրվածքների միջոցով, որոնք ա) մատչելի են տվյալ տարիքին, բ) զուրկ չեն գեղարվեստական արժեքից, գ) բնորոշում են տվյալ հեղինակի սոցիալական դեմքը եւ գրական առանձնահատկությունները:՝ Ըստ Զարենցի գրականության դասագիրքը պետք է լինի եւ *իբրեւ աշխատանքի գիրք, եւ գրականության քրեստոմատիա:* Սա հնարավորություն է տալիս տեսականը կապել գործնականի հետ, երկը յուրացնել եւ գաղափարական առումով, եւ գեղարվեստական:

Զարենցի դասագրքերն ընդգրկում են թեմաներ, որոնք մատչելի են երեխաների համար, բարձր են գեղարվեստական արժեքով: Գնալով պարզից բարդը սկզբունքով նա ուսուցման առաջին փուլում հանձնարարում է միմիայն համառոտ, ոչ սիստեմատիկ, ընդհանուր տեղեկություններ, երկրորդում՝ բարձր դասարաններում նախատեսում է գրականության զարգացման սիստեմատիկ դասընթաց, բարձրագույն դպրոցում՝ լիակատար դասընթաց:

Այս ամենը վկայում է, որ Զարենցը մեթոդական մեծ ավանդ ունի գրականության դասավանդման մեջ: Նրա կազմած դասագրքերում երեւում են Զարենց մանկավարժը, մանկագիրն ու մանկական գրականության տեսաբանը, մեթոդական մտքի գիտակը:

Ե. Զարենցը մանկական գրականության հետ կապվում է, նախ եւ առաջ, մանկավարժության, գրականության դասավանդման հարցերում առաջ քաշած նորություններով: Նրա *ասույթներից* հատակ զգացվում է, որ մանկական գրականությունը իր ձեւավորման օրից կապված է եղել մանկավարժության հետ: Նա գնահատում էր այն հանգամանքը, որ մեր դասական մանկագիրներից շատերը եղել են հայտնի մանկավարժներ, նրանց դասագրքերը՝ մանկական գրականության լավագույն տեսական հիմնավորումներ: Վաղուց ի վեր մանկական գրականությունը երեխաներին մատուցվել է նաեւ ընթերցարանների, քրեստոմատիաների միջոցով: Զարենցը դասագրքեր է կազմել այն խորին համոզմունքով, որ երեխային անհրաժեշտ է տալ այնպիսի գրականություն, որը նրան սովորեցնում ու դաստիարակում է կենդանիների ճշմարտացիությամբ ու գեղեցկությամբ, հոգեպես հարստացնում նրան, ընդլայնում նրա մտահորիզոնը: Սրանք նաեւ մանկական

գրականությանը ներկայացվող պահանջներից են: Զարենցը անհատականություն էր, գիտեր ժամանակակից կյանքի պահանջները: Նրա կազմած քրեստոմատիաներն ու դասագրքերն այսօր էլ կարող են օգնել՝ գրականության ուսուցումը կազմակերպելու բովանդակության ու ձևի միասնությամբ, տպիչային առանձնահատկությունների հաշվառմամբ, սիստեմատիկության ու հաջորդականության, գիտակցականության, ուսուցման գործնականության եւ գեղագիտական ու մանկավարժական այլ սկզբունքների հիմունքներով:

Զարենցի դասագրքերն ընդգրկում են նաեւ նյութեր համաշխարհային գրականությունից: Հեղինակների եւ ստեղծագործությունների ընտրությունը չափազանց խնամքով է կատարված: Մեծ բանաստեղծի դասագրքերը սովորեցնում են երկն ինքնուրույն վերլուծելու ունակություններ: Դրանք բխում են ազգային դպրոցի, ազգային մանկավարժության դարերով սրբագործված ավանդույթներից:

Ե. Զարենցը բազմիցս երույթներ է ունեցել մանկական գրականության տեսության շուրջ, բանավիճել է մանկական գրականության արժեքը, նրա կրթադաստիարակչական նշանակությունը անտեսողների հետ, բարձր է գնահատել մանկական պարբերական մամուլի դերը, նրա մանկական գրականության մասսայականացման հրաշալի միջոց լինելը:

«Մանկական գրականությունը պետք է դրվի իր կոչման բարձրության վրա» հոդվածում՝ Ե. Զարենցը ցավում է, որ մեր մանկական գրքերի մեծ մասը թարգմանական է: Ինքնուրույն գրականությունը մեծ մասամբ իր վրա է կրում «Հասկերի», «Ադրբուր-տարազի» կնիքը: Սրա ամենապավ ապացույցը »Հոկտեմբերիկի« 1930-31 թվականների համարներն են, որոնցից յուրաքանչյուրը լիքն է նախահեղափոխական մանկագրության անգերազանցելի նմուշներով: «Հասկերի» ոգին մինչեւ օրս սավառնում է «Հոկտեմբերիկի» էջերում»,- գրում է Զարենցը: Գնահատելով մեր դասական մանկագրությունը՝ նա գտնում է, որ ժամանակակից մանկագրությունը պետք է բայի նոր կյանքի հետ եւս, ժամանակակից կյանքը նույնպես պետք է արտացոլվի մանկական երկերում:

«Բացակայում է լույս տեսնող մանկական գրականության ամենօրյա, սիստեմատիկ քննադատությունը: Զարմանալի է, որ մինչեւ օրս ոչ «Պիոներ կանչը» եւ ոչ էլ «Հոկտեմբերիկը» չունեն մշտական քննադատական բաժիններ»:

- Պետք է արտահայտվել կարողանալ լույս տեսած գրքերի մասին,- գրում է Զարենցը նշված հոդվածում:

Զարենցը խոսում է այն մասին, որ չեն կազմակերպվում մանուկ ընթերցողների կոնֆերանսներ, այնինչ՝ դա պետք է լիներ լույս տեսնող մանկական գրականության հիմնական առօրյա ձեւերից մեկը: Շատ քիչ բան է անում մանկական գրականության սիստեմատիկ քննադատության ասպարեզում նաեւ «Ավանգարդը» որն այս գործում պետք է կատարեր ղեկավար դեր[*] (էջ 213):

Նույն զեկուցման մեջ Զարենցը մտահոգված է այն բանով, որ մանկական գրականությունը քիչ է կարդացվում:

Զարենցը բազմիցս խոսել է մանկական գրքի գեղարվեստական որակի, նկարազարդման, լեզվի մաքրության, մատչելիության, գրքի ձեւավորման խնդիրների շուրջ: Նա քննադատում է մանկական գրականության լեզուն՝ գտնելով, որ չեն պահպանվում բերականական տարբերական օրենքները: Նա քննադատում է «Հոկտեմբերիկ» ամսագիրը, որի համարներում գետնդված նյութերը լիքն են գռեհկաբառություններով, ոճական խալտուրայով, բերականական տարբերական սխալներով եւ այլն:

«Մանկական գրականությունը պետք է դրվի իր կոչման բարձրության վրա» հոդվածում՝ (էջ 214) Զարենցը նշում է, որ ահռելի պայոյր են մեր մանկական գրականության նկարները եւ, ընդհանրապես, թե՛ «Հոկտեմբերիկի» եւ թե՛ առանձին գրքույկների արտաքին ձեւավորումը:

Մի բանի անգամ Զարենցը քանավեճ է մղել մի շարք գրականագետների հետ՝ մատնանշելով մեր մանկագրության եւ ձեռքբերումները, եւ թերությունները, գտնելով, որ մեր մանկական գրականությունը երեխաներին առողջ դաստիարակություն է տալիս: Եվ ունենք

գրողներ, որոնք բավական մեծ գործ են կատարում՝ օժանդակելով պլուտիրատի մանկական գրականության բաժնին:

1928-35թթ. պլուտիրատի գեղարվեստական բաժինը ղեկավարող Զարենցն անչափ պահանջկոտ էր մանկական գրականությանը ներկայացվող պահանջների հանդեպ: Պետք է (ըստ Զարենցի) փոփոխություններ կատարվեն մանկական գրականության նպատակների, թեմատիկայի, ժանրային նկարագրի մեջ: Բազմաթիվ բանավեճերում Զարենցը խոր, առողջ, սթափ դատողություններ է արել հասարակական կյանքում մանկական գրականության տեղի ու դերի վերաբերյալ: Մեծ արժեք ունի 1933թ. հունվարի 30-ին մանկական գրականության մասին գրողների տանը Զարենցի կարդացած դասախոսությունը: Խորհրդակցությանը մասնակցում էին գրողներ, նկարիչներ, մանկավարժներ:

Այժմ արդեն Զարենցն ուրախությամբ նշում է, որ վերջին երկու տարում զգալի նվաճում է նկատվում մանկական գրականության բնագավառում: Նրա առանցքը դարձել է արդիականությունը, ինքնուրույն մանկագրությունը գերազանցում է թարգմանականին: Զարենցը բարձր գնահատեց Ալազանի, Ստ. Զորյանի, Վ. Նորենցի, Մ. Արմենի դերը: Այս անգամ էլ Զարենցը գրողների ուշադրությունը հրավիրեց մանկական գրքի գեղարվեստական որակի, լեզվի մաքրության, մատչելիության, նկարագարդման, ձևավորման վրա: Զարենցը ամենագարգացած, ամենաբարձրաճաշակ գրողներից է, որը հրատարակչական գործի նախանձելի կազմակերպիչ էր եւ գրականության արվեստի լավագույն գիտակ: Դեռեւս 1930թ նա զեկուցում է կարդացել «Գրքի կուլտուրայի մասին» թեմայով: Նա միշտ պահանջկոտ է եղել գրքի ձեւավորման հարցում: Հակոբ Կոջոյանն իր հուշերում գրում է, որ «Գիրք ճանապարհի» գրքի ձեւավորման ու պատկերագարդման ընթացքում Զարենցը վերցնում էր մատիտը եւ իր մտքերն արտահայտում նկարչական մոտավոր գծերով: «Այդպիսի դեպքերում ինձ թվում էր, որ իմ դեմ նկարիչ Զարենցն է նստած»,- ասում է նա:[10]

«Զարենցը մոլի գրասեր էր ու գիրքը լավ էր հասկանում: Զարմանալի նուրբ դիտողություններ կաներ ձեւավորողին, տեխնիկական խմբագրին, կազմարարին, կարճ ասած՝ բոլորին, ովքեր կապ ունեն գրքի ստեղծման հետ:

- Այն, ինչ կոչվում է «գրքի էսթետիկա», Զարենցի համար, ասես, մասնագիտություն լիներ[11],- կարդում ենք Մ. Սարյանի «Զարենցի հետ» հուշագրության մեջ:

Նա մնջբերում է Զարենցի խոսքերը.

- Լավ, ճաշակով գիրք տալը քիչ է: Պետք է ստեղծենք ժամանակակից գիրք: Տեսնո՞ւմ եք գերմանացիները, Մոսկվայի մեր «Ակադեմիա» հրատարակչությունը ինչ գրքեր են ստեղծում: Մենք պետք է հասնենք նրանց, բայց մի՛ր, հայկակա՛նը ստեղծելով: Պետք է գիրքը վերցնես ձեռքդ եւ անմիջապես զգաս, որ հայկական է: Մեր նախնիները ոսկի ձեռագրեր են թողել մեզ: Չի՞ կարելի նրանցից սովորել: Իհարկե, կարելի է: Գրվածքի ծավալին ու բովանդակությանը համապատասխան նկատի են առել գրքի չափը, հաստությունը, էջի մակերեսի ու «շարվածքի» կապ են որոնել, տեքստն ու նկարագարդումները ներդաշնակելու մասին են մտածել: Ա՛յ, պետք է գտնենք, թե ինչը ոնց են արել: Եթե լուրջ մոտենանք, լավ նայենք, վերցնելու շատ բան կգտնենք նրանց մոտ»:[12]

Բազմիցս բանավիճելով մանկական գրականությանը ներկայացվող պահանջներն անտեսողների հետ՝ Զարենցը գտնում է, որ մանկական երկի բարձր որակն ապահովելու համար այն պետք է քննության դնել մանկավարժների, մանկագիրների առջեւ: Գտնելով, որ մանկական գրականությունն ավանդապահ երեւույթ է, Զարենցը բարձր է դասել Թումանյանին, Աղայանին: Խոսելով Թումանյանի մասին՝ նա գրում է.

- Կարծես կախարդ լիներ այդ լոռեցի Հովհաննեսը... Մեկ-մեկ էլ նա մանկանում էր կարծես եւ գրում էր պարզ ու անսնթեւնթ երգեր, առակներ ու պոեմներ մանուկների համար, եւ այդ երգերում նաս հինն էր, նահապետականը, կախարդականը»:

Մի հոդվածում Ե. Զարենցը նշում է. «Մի՞թե կարելի է ասել, թե ինչու է մարդ սիրում մանկությունը,- մանկությունը, որքան էլ մութ լինի ու դժվար, նման է գերերկրային երաժշտության...»:

Ահա թե ինչու Զարենցը մեծ նշանակություն է տվել դասական մանկագրությանը, որից սնվում է նոր ժամանակների մանկագրությունը:

Չարենցի ամբողջ ստեղծագործությունը մոդովրդի պատմությունն է: Այն կյանքի դպրոց էյուրաքանչյուր մարդու, յուրաքանչյուր նիրտասարդի համար:

Այն գեղեցկության ու հրապույրի մի աշխարհ է, որին մեծ թե փոքր մոտենում են երկյուղածությամբ ու հավատով կյանքի, աշխարհի, մարդու նկատմամբ:

Չարենցը մանկական գրականության տեսաբան ու քննադատ է: Ամենդակարևոր ու նորը միահյուսված են նրա տեսական հոդվածներում: Իսկ դա մանկական գրականությանը ներկայացվող առաջին ու կարևոր պահանջներից է:

Ամփոփում

Ե. Չարենցը անմար կիզակետ էր, որ իր մեջ խտացրել է մեր դասական մանկական գրականության տեսությունն ու մանկավարժության լավագույն ավանդույթները:

Մանկական գրականությանը ներկայացվող նրա պահանջները, հայոց լեզվի ու գրականության ուսուցման մասին նրա տեսակետները, դասագրքերի ստեղծման մեթոդները ամփոփված են գրողի բազմաթիվ հոդվածներում, իր իսկ դասագրքերի բացատրականներում, արձիվային բազմաբնույթ փաստաթղթերում, որոնք բանաստեղծ-մանկավարժի խոր ու բազմակողմանի զարգացածությունն են ապացուցում:

Այն համոզմունքով, որ մանկական գրականությունը ընդհանուր գրականության ամենապատասխանատու բնագավառն է, Չարենցն իր ելույթներում, հոդվածներում, նամակներում տվեց մանկական գրականության տեսությունը, որը թե ավանդական է, թե արդիական, ուսանելի շատ բան ունի գրականության տեսաբանների, մանկավարժների ու քննադատների համար:

Резюме

Егише Чаренц - немеркнущая вершина, вобравшая в себя теорию нашей детской классической литературы и лучшие традиции педагогики.

Его требования к детской литературе, его воззрения на обучение армянскому языку и литературе, его методы создания учебников встречаются во многих статьях писателя, в комментариях к его же учебникам, в различных архивных документах, свидетельствующих о высоком уровне развития поэта - педагога.

Будучи убежден, что детская литература - наиболее ответственный раздел литературы, в целом Чаренц в своих выступлениях, статьях, письмах отразил теорию детской литературы, которая являясь и традиционной, и современной, содержит в себе много поучительного для теоретиков, педагогов и критиков литературы.

Մատենագրություն

1.Ե. Չարենց, հ. 6, Երևան, 1967թ., էջ 214:
2.Հ. Թամրազյան, Եղիշե Չարենց, Երևան, 1987, էջ 53:
3. Հուշեր Եղիշե Չարենցի մասին, էջ 112, Երևան, 1986:
4. Ա. Զաքարյան, Հուշեր ու արձագանքներ, Երևան, 1985թ., էջ 151:
5. Ե. Չարենց, Անտիպ ու չհավաքած երկեր, Երևան, 1983թ., էջ 687:
6. Ե. Չարենց, հատ. 6, էջ 205:
7. Ե. Չարենց, հատ. 6, էջ 212:
8. Ե. Չարենց, հատ. 6, էջ 213:
9. Նույն տեղում, էջ 214:
10. Հիշողություններ Եղիշե Չարենցի մասին, Երևան, 1961թ., էջ 305:
11. «Հուշեր Եղիշե Չարենցի մասին», Երևան, 1986թ., էջ 182-183:
12. Նույն տեղում, էջ 183:

УДК 801.4

ВВОДНЫЕ И ВСТАВНЫЕ КОНСТРУКЦИИ И ИХ СТИЛИСТИЧЕСКОЕ ИСПОЛЬЗОВАНИЕ

Л.Р.Бегларян
кафедра русского языка и литературы

Статья посвящается одной из важнейших проблем – осложнению простого предложения вводными и вставными конструкциями, а также их стилистическому использованию.

Простое предложение может быть осложнено словами и конструкциями, которые не являются членами предложения и грамматически не связаны с членами предложения. К ним относятся вводные слова, сочетания слов, предложения и вставные конструкции. Вводными могут быть слова, сочетания слов и предложения, которые выражают отношение говорящего к высказанному, а также указывают на источник сообщения, связь с контекстом.

1.Они могут иметь модальное значение уверенности, неуверенности, сомнения, возможности, предположения и.т.п.

Так, например, несомненно, конечно, возможно, вероятно, правда, в сущности, очевидно, известно, может быть, должно быть, в самом деле…

2.Вводные слова могут указать на источник сообщения: по-моему, по слухам, по сообщениям, по мнению…

3.Вводные слова могут указать и на связь мыслей, последовательность изложения: итак, значит, в общем, кстати, в конце концов, кроме того.

կարելի է ասել, որ Քելբաջարի գործողության համար բավականին կարճուկ բողոք հայտնվեց Իրանում ՀՀ դեսպանին, որին իրանական իշխանությունները հասկացրեցին, թե հայկական ուժերի հետագա հարձակողական գործողությունների դեպքում Իրանը վճռական շայլերի կդիմի[4].

Տարածաշրջանում տեղի ունեցած փոփոխություններին արձագանքեց նաեւ ՄԱԿ-ը: Ապրիլի 30-ին ՄԱԿ-ի Ասխ-ն արտահերթ նիստում ընդունեց դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման վերաբերյալ N 822-ը բանաձեւը պահանջելով անմիջապես դադարեցնել բոլոր տեսակի թշնամանքները ու թշնամական գործողությունները, տեսական զինադադար հաստատել, ինչպես նաեւ դուրս բերել բոլոր տեսակի «զավթիչ» ուժերը Քելբաջարից եւ Ադրբեջանի վերջերս գրավված այլ շրջաններից: Բանաձեւը կոչ էր անում բոլոր կողմերին վերսկսել բանակցությունները հակամարտության կարգավորման ուղղությամբ ԵԱՀԽ Մինսկի խմբի խաղաղության գործընթացի շրջանակներում եւ հետո կանգնել խնդրի խաղաղ լուծմանը խոչընդոտող որեւէ բայից: Այն կողմերից պահանջում էր հարգել միջազգային մարդասիրական օրենքները ու կանոնները, ինչպես նաեւ թույլատրել մարդասիրական օժանդակության անարգել առաքումը հատկապես տուժած շրջանները թեթեւացնելու համար քաղաքացիական բնակչության տառապանքը: Խորհրդակցելով ԵԱՀԽ նախագահի եւ Մինսկի խմբի ղեկավարի հետ՝ ՄԱԿ-ի Ասխ-ն դիմում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին ստեղծված կացությունը, հատկապես Քելբաջարի շրջանում, գնահատելու եւ Ասխ զեկույց ներկայացնելու խնդրանքով: Որոշում է հարցը պահել ուշադրության կենտրոնում[5].

Միջազգային հանրության հակամարտող կողմերին հաշտեցնելու հաջորդ հիշարժան փորձը ձեռնարկվեց Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի կողմից: Մայիսի 3-ին հակամարտության խաղաղ կարգավորման միջնորդական նախաձեռնությամբ ԱՄՆ, Ռուսաստանը եւ Թուրքիան ծրագիր ներկայացրեցին Հայաստանի եւ Ադրբեջանի իշխանություններին, ըստ որի մայիսի 9-14-ը հայկական ուժերը պետք է դուրս բերվեին Քելբաջարից, մայիսի 12-ից հրադադար հաստատվեր, մայիսի 17-22-ը Ժնեւում Ռուսաստանի, ԱՄՆ-ի եւ Թուրքիայի հովանավորությամբ բանակցություններ պետք է անցկացվեին Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, մայիսի 24-25-ին Հռոմում ԵԱՀԽ Մինսկի խմբի շրջանակներում բանակցություններ վերսկսվեին եւ մինչեւ հունիսի 1-ը մշակվեր հակամարտության կարգավորման ընդհանուր ծրագիր: Ծրագրի հիմքում դրված էր «ամեն ինչ կամ ոչինչ» սկզբունքը, որը բացառում էր հիմնակետերի մեկնաբանման որեւէ հնարավորություն[6].

Ադրբեջանի իշխանություններն անվերապահորեն ընդունեցին ներկայացված առաջարկությունները, իսկ ՀՀ պաշտոնական շրջանակները դրական գնահատեցին ՄԱԿ-ի Ասխ բանաձեւը[7].

Ի տարբերություն ՀՀ իշխանությունների դիրքորոշմանը, Արցախում հարնադրված էին ավելի իրատես լինելու: Այդ առնչությամբ ԼՂՀ Գխ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը նամակ եղեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիին, որ մասնավորապես նշեց. «...Միջազգային կազմակերպությունների եւ միջնորդ երկրների գործունեության ակտիվացման առնչությամբ կուզենայի մեկ անգամ եւս հայտնել ՄԱԿ-ի, ԵԱՀԽ-ի, Ռուսաստանի եւ այլ պետությունների խաղաղարար ջանքերին աջակցելու մեր պատրաստակամության մասին, ջանքեր, որ ուղղված են ԼՂՀ եւ Ադրբեջանի միջեւ երկկողմ բանակցություններ սկսելուն, կրակի դադարեցմանը, եւ հակամարտության տարածաշրջանում գտնվող բոլոր փախստականներին մարդասիրական օգնություն ցուցաբերելուն:

Ասվածից զատ կուզենայի նաեւ արտահայտել մեր հանրապետության ղեկավարության մտահոգությունը Ասխ 1993թ. ապրիլի 30-ի որոշման առթիվ, որում, մեր կարծիքով, հաշվի չեն առնվել քաղաքական իրողությունները, կոնկրետ՝ անկախ ԼՂՀ-ի գոյությունը եւ մեր հանրապետության հետ կապված մեր շահերը:

Մենք կուզենայինք բոլոր շահագրգիռ երկրներին հավաստիացնել այն բանում, որ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի ցանկացած տեղաշարժերը ունեն ԼՂՀ տարածքում Ադրբեջանի զինված առաջխաղացումը կանխելու կամ չեզոքացնելու նպատակ միայն:

Օգտվելով առիթից կուզենայի Ձեզ հավաստիացնել ԼՂՀ ղեկավարության կողմից ՄԱԿ-ի մարդու իրավունքի միջազգային անվտանգության պահպանմանը նպաստող բոլոր

սկզբունքները հարգելու մեջ եւ հույս հայտնել առ այն, որ ԼՂՀ-ն կդառնանա միջազգային ընկերակցության լիիրավ անդամ»[8]:

Մինչդեռ, չնայած միջազգային խաղաղարարական ջանքերին, ռազմաճակատում ադրբեջանական բանակային կազմավորումները շարունակում էին մարտական գործողությունները: Թեեւ լայնածավալ հարձակողական ռազմագործողություններ չէին վարվում, սակայն տեղի ունեցող մարտերը ազատագրում էին, որ դեռ վաղ է խոսել հարցը խաղաղ բանակցային ճանապարհով լուծելու մասին, այն էլ՝ զիջումային ճանապարհով: Փաստորեն, միջազգային հանրությունը, Հայաստանի եւ ԼՂՀ-ի վրա ճնշումներ գործադրելով, փորձ էր անում հայկական կողմին միակողմանի զիջումների պարտադրել, այն է թողնել ԼՂՀ-ի անվտանգության համար վիթխարի նշանակություն ունեցող Քելբաջարը եւ էապես վտանգել մեր ազգային շահերը տարածաշրջանում: Փոխարենը մեզ ոչինչ չէր առաջարկվում, նվազագույնի էին հասցվում հայկական ինքնուրույն բաղաքականություն վարելու հնարավորությունները:

Մայիսի 18-ին Հայաստանի եւ ԼՂՀ իշխանություններին հանձնվեց ԼՂ հակամարտությանը վերաբերող վերջին նախաձեռնության վերամշակված տարբերակը, որն ընդունվել էր մայիսի 14-15-ին Մոսկվայում ՌԴ նախագահի անձնական ներկայացուցչի, Թուրքիայի, ԱՄՆ հատուկ ներկայացուցիչների հանդիպման ժամանակ: Եռակողմ հանդիպմանը մասնակցեց նաեւ ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի նախագահի ներկայացուցիչը[9]:

Նախաբանում նշվում է, որ փաստաթուղթ հիմնված է ՌԴ նախագահ Բ.Ելցինի միջնորդական նախաձեռնության եւ Անկարայում իրենց առաջին հանդիպման ժամանակ ԱՀ նախագահ Ա.Էլչիբեյի եւ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի բարի կամքի վրա: Երեք պետությունները ԵԱՀԿ Մինսկի խորհրդաժողովի նախագահի ներկայացուցչի հետ միասին կոչ են անում հակամարտող բոլոր կողմերին իրենց վերաբերող բոլոր մասերով անհապաղ կատարել ՄԱԿ-ի Ասվ ապրիլի 30-ի N 822/93 որոշումը, որը պարտադիր է բոլորի համար: ՄԱԿ-ի Ասվ-ի այդ որոշումը կենսագործելու համար որոշվեց առաջարկել ճշտված «Անհետաձգելի միջոցառումների ժամանակացույցը»[10]:

Ի վերջո հայկական կողմից միակողմանի զիջումներ պահանջող «3+1» նախաձեռնությունը մայիսի 26-ին ընդունվեց Հայաստանի իշխանությունների կողմից: ՀՀ նախագահի մայիսի 26-ի հայտարարության մեջ ասվում է. «ՀՀ-ն, տալով իր համաձայնությունը «3+1» նախաձեռնության մայիսի 18-ի տարբերակին եւ պարտավորվելով լիովին իրագործել իրեն վերաբերվող կետերը, մեկնում է այն համոզումից, որ նշված նախաձեռնությունը ընձեռում է տարածաշրջանում խաղաղության պայմաններ ստեղծելու առաջին լուրջ հնարավորությունը, որն իր հերթին հնարավոր է դարձնում բանակցությունների միջոցով ԼՂ-ի հարցի խաղաղ կարգավորումը:

Այս դիրքորոշումը Հայաստանը նկատի է առնում ՄԱԿ-ի Ասվ-ի 822 բանաձեւը, որի անհապաղ ամբողջական կիրառումը պարտադիր է բոլոր պետությունների ու կողմերի համար, ինչպես նաեւ պատերազմի ծավալումից ու խորացումից խուսափելու անհրաժեշտությունը տարածաշրջանի երկրների անվտանգության տեսակետից...»[11]:

Մայիսի 26-ին Հայաստանում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Մ.Սարգսյանը Հայաստանում Ռուսաստանի եւ ԱՄՆ դեսպաններին հանձնեց, նաեւ ԵԱՀԿ գործող *նախագահ տիկին Մ.Ռուգլասին ուղարկեց ԼՂՀ իշխանությունների պաշտոնական* պատասխանը, որը ստորագրել էին ԼՂՀ Գլխ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը եւ ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը: ԼՂՀ իշխանությունները մերժեցին նոր առաջարկները բավականին հիմնավորված պատճառաբանությամբ[12]:

Հունիսի 3-ին առանց Հայաստանի, ԼՂՀ եւ Ադրբեջանի մասնակցության Հռոմում կայացած ԵԱՀԿ խորհրդաժողովը հանդես եկավ մի նոր, այսպես կոչված «9+1» նախաձեռնությամբ: Հայաստանին, ԼՂՀ-ին, Ադրբեջանին ներկայացվեց երկու փաստաթուղթ. մեկը Մինսկի խմբին երկրների հանձնարարությամբ ԼՂ հարցով Մինսկի խորհրդաժողովի նախագահ Մ.Ռաֆայելիի «Նամակն» էր, մյուսը այդ «Նամակին կից» գրությունը, որն այլ կերպ կոչվում էր «Անվտանգության խորհրդի 822 բանաձեւի իրագործման անհապաղ միջոցառումների ժամանակացույց»: Ըստ նախաձեռնության հեղինակների, երկու փաստաթուղթն էլ «ունին միանոյն արժեքը»: Նամակում նշված էր. «Ներեւյալ երկրները՝ Գերմանիան, ԱՄՆ, Բելգիան, Իրանը, Իտալիան, Հանրապետությունը,

Իտալիայի Հանրապետությունը, ՌԴ, Չեխիան, Զնյոտ-Սլովակիայի Հանրապետությունը եւ Թուրքիան, խնդրել են ինձ, որպես ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովի նախագահի, փոխանցել Ձեզ կից առաջարկությունը:

Նրա նպատակն է ՄԱԿ-ի Անվտանգության բոլոր կետերի կատարումը եւ հատկապես ռազմական ու թշնամական գործողությունների դադարեցման ձեռքբերումը երկարաժամկետ գինադադար հաստատելու նպատակով, ինչպես նաեւ զորքերի դուրս բերումը Քելբաջարի ու Ադրբեջանի վերջերս բռնազավթած այլ շրջաններից, եւ ԵԱՀԽ Մինսկի խորհրդաժողովի շրջանակներում հակամարտության կարգավորմանն ուղղված բանակցությունների վերսկսումը:

Առաջարկությունը ներկայացված է նամակում եւ նրան կից Անվ N822 բանաձեւի կատարմանն ուղղված անհետաձգելի միջոցառումների ժամանակացույցում, որոնցից յուրաքանչյուրն ունի հավասար ուժ:

Ես կցանկանայի նաեւ ընդգծել, որ առաջարկության մեջ նշված վերահսկողության առաքելության նախապատրաստումը գործնականում ավարտված է եւ ԵԱՀԽ գրասենյակի նախագահը պատրաստ է այն ուղարկել առաջարկությունն ընդունվելուն պես:

Կից ժամանակացույցի եւ խաղաղարար գործընթացի կարգավորմանն ուղղված այլ միջոցառումների կատարման ժամանակ առաջացած տեխնիկական ռազմական խնդիրների եւ այլ տեխնիկական հարցերի լուծմանն աջակցելու նպատակով Մինսկի խումբը կստեղծի միացյալ համակարգող հանձնաժողով: Հանձնաժողովը հանդիպում կանցկացնի ԵԱՀԽ առաքելության կենտրոնակայանում առաքելության ղեկավարի նախագահությամբ:

822 բանաձեւի համաձայն, կողմերը պետք է դադարեցնեն բոլոր ռազմական եւ «թշնամական գործողությունները»: Այն նախատեսում է նաեւ տրանսսպորտային հաղորդակցությունների եւ կապի նորմալ գործունեության համար խոչընդոտների վերացումը: Այս գործողության մասին կհայտարարվի, եւ այն կսկսվի Հռոմում Մինսկի խմբի խորհրդաժողովի բացմանը նախորդող մեկ շաբաթվա ընթացքում:

Ռազմական գործողությունների դադարեցմանը նախատեսված է հասնել 60 օրվա ընթացքում սկսած հունիսի 18-ից, այն հաշվառումով, որ այդ ժամանակահատվածը բավական կլինի Մինսկի խորհրդաժողովի բացումն ապահովող բոլոր գործողությունների կատարման համար: Վաղուց արդեն Մինսկի խմբի շրջանակներում համաձայնություն է ձեռք բերվել առ այն, որ մինչեւ Մինսկի խորհրդաժողովը ռազմական գործողությունների դադարեցումը կձեւափոխվի ռազմական գործողությունների մշտական դադարեցման: Այն դեպքում, եթե Մինսկի խորհրդաժողովը չսկսի գործել 80 օր սկզբնական ժամկետի ավարտից հետո, ռազմական գործողությունների դադարեցումը մեխանիկորեն կվերսկսվի հաջորդ 60 օր ժամանակահատվածում:

ԵԱՀԽ առաքելությունը անհապաղ կտեղեկացնի խախտումների մասին ԵԱՀԽ-ին անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու հնարավորություն ընձեռելու համար:

Ռազմական գործողությունների դադարեցման մասին հայտարարելու հետ մեկտեղ կողմերը պետք է հրապարակայնորեն հավաստեն, որ խախտման դեպքում իրենք կպատժեն մեղավորներին:

822 բանաձեւի համաձայն, կողմերը պետք է բոլոր, հատկապես «հակամարտության» շրջաններ անարգել մուտք գործելու հնարավորություն ստեղծեն միջազգային մարդասիրական օգնության ցուցաբերելու համար եւ «հետեւեն մարդասիրական օրենքի սկզբունքներին ու կանոններին»:

822 բանաձեւի համաձայն, կողմերը պարտավոր են «ձեռնպահ մնալ հիմնահարցի խաղաղ լուծմանն ու Մինսկի խաղաղ գործընթացին խոչընդոտող ցանկացած գործողություններից»:

Խնդրում եմ Ձեզ հաստատել այս առաջարկության ընդունումը՝ ստորագրելով վերոհիշյալ նամակն ու ժամանակացույցը, եւ դրանք ինձ վերադարձնել մինչեւ 1993թ. հունիսի 11-ի ժ. 12.00-ը»[13]:

Նման պայմաններում «ներքին» եւ «արտաքին» ճնշումներ գործադրվեցին ԼՂՀ օրենսդիր մարմնի վրա ստիպելով ստորագրել նշված փաստաթուղթը:

Հունիսի 9-ի կեսգիշերին կարճատեւ աշխատանքային այցով Երեւան ժամանեց ՌԴ սի շարք կարեւորագույն գերատեսչություններից բարձրաստիճան անձանցից բաղկացած պատվիրակությունը: ՌԴ ԱԳ նախարար Անդրեյ Կոզիրեւի եւ ՌԴ անվտանգության

նախարար Վիկտոր Բարաննիկովի գլխավորած պատվիրակության կազմում ընդգրկված էին նաեւ ՌԴ պաշտպանության առաջին փոխնախարար Բորիս Գրոմովը, ԱԳ փոխնախարար Բորիս Պաստուխովը, ԼՂ հիմնախնդրի կարգավորման Ռուսաստանի ներկայացուցիչ Վլադիմիր Կազիմիրովը եւ Ռուսաստանի ստիմանապահ զորքերի հրամանատար Վլադիմիր Շլյախտինը:

Կառավարության ընդունելությունների տանը տեղի է ունեցավ ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի, ՀՀ ԱԳ նախարար Վ.Փափազյանի, ԱԳ փոխնախարար Ժ.Լիպարիտյանի եւ արտակարգ հանձնարարությունների գծով դեսպան Դ.Շահնազարյանի 15 րոպեանոց հանդիպումը Ա.Կոզիրեւի, Վ.Բարաննիկովի, եւ Վ.Կազիմիրովի հետ: Դրան անմիջապես հաջորդեց վերջիններիս՝ շուրջ 1ժամ 40րոպե տեւած հանդիպումը ԼՂՀ Գլխ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի ու ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանի հետ[14]: Հանդիպման նպատակն էր ԼՂՀ իշխանություններին համոզել դրական պատասխան տալ Ռաֆայելիին[15]:

Հանդիպումը հետաքրքիր է նաեւ նրանով, որ Ռուսաստանի բարձրաստիճան ներկայացուցիչները այդպիսի տեսական գրույցի էին նստել մի պետության ներկայացուցիչների հետ, որը իրենց իսկ կողմից ճանաչված չէր: Ի՞նչն էր շահագրգռում Ռուսաստանին գնալ այդ քայլին: Գուցե Ադրբեջանի ներքին կացությունն ու այստեղ կատարվող իշխանափոխությունը, որը ձեռնատու չէր Ռուսաստանին: Եւ ռուսական դիվանագիտությունը, գտնվելով տեսողության մեջ, ճիգեր էր գործադրում փրկել Ա.Էլչիբեյի հեղինակությունը:

Եթե փորձենք Արցախի «դրական» պատասխանից հետո մոդելավորել իրադրությունը, ապա այն կարող է զարգանալ հետեւյալ կերպ. Քելբաջարի դատարկվելով Ադրբեջանի ներկայիս կառավարությունը լուծում էր երկու հարց՝ խուսափում է ռազմական եւ բարոյական պարտությունից եւ լրացուցիչ կռվան է ստանում հեղինակությունը բարձրացնելու եւ իշխանությունը պահելու համար:

Իսկ վերջին բանակցային գործընթացների դրական հատկանիշներից մեկն էլ այն է, որ Ստեփանակերտն իրականում ընդունվում էր որպես հակամարտող կողմ, նրա մերժումները եւ ձգձգումները չէին անտեսվում եւ միջազգային հասարակությունն արդեն վարժվել էր Արցախից պատասխան ակնկալել:

Իրերի տարբերությունից ելնելով՝ Արցախի իշխանություններին մնում է ձգձգել բանակցությունների գործընթացը, որպեսզի Ադրբեջանում տիրող ներքաղաքական ճգնաժամը ավելի խորանա եւ Քելբաջարի հարցը, գոնե առժամանակ, ծածկվի նոր իրադարձություններով ու կորցնի իր սրությունը: Այս տարբերակի համար բավարար հիմքեր կան՝ ելնելով նրանից, որ որպես պատճառ կարելի է առաջ քաշել նաեւ Ադրբեջանի ներքին իրադրության անկայունությունը, որը կարող էր հանգեցնել բարդացիական պատերազմի ու կասկածի տակ էր դնում Ադրբեջանի բանակի կառավարելիությունն ու ադրբեջանական կառավարության տված երաշխիքների հուսալիությունը, հատկապես, որ խռովության մեջ գտնվող շրջանների մեծ մասը Քելբաջարի շրջանին սահմանակից էին:

Հունիսի 11-ին ԼՂՀ Գլխ նախագահության պաշտոնակատար Գ.Պետրոսյանը նամակ հղեց Մ.Ռաֆայելիին, ուր ասվում էր. «Հարգարժան պարոն Ռաֆայելի, Ձեր նամակի «ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի N 822/93 բանաձեւի իրականացման ժամանակացույցի» քննարկումը ԼՂՀ Գլխ նախագահության ընդլայնված նիստում լուրջ տարաձայնություններ առաջացրեց ԼՂՀ ղեկավարության եւ ԼՂՀ պաշտպանության բանակի հրամանատարական կազմի միջեւ, ինչը, փաստորեն, վերաճեց ներքաղաքական ճգնաժամի: Իրավիճակը կարող է դառնալ անվերահսկելի:

Մենք անում ենք հնարավոր ամեն ինչ՝ առճակատումը կանխելու եւ բացատրելու քննարկման ներկայացված փաստաթղթերի դրական կողմերը: Առարկությունները հիմնված են ԼՂՀ ժողովրդի հերթական անգամ խաբված լինելու մտավախության վրա:

Անհրաժեշտ են ժամանակ եւ ջանքեր համոզելու մարդկանց, որոնց հոգեբանությունը ձեւավորվել է Ադրբեջանի ագրեսիայի պայմաններում, որ նպատակահարմար եւ խելամիտ են կրակի դադարեցմանն ուղղված առաջարկները: Քանի որ վերջնական որոշում ընդունված չէ, անհրաժեշտություն առաջացրել Ձեր ներկայացված փաստաթղթերը լրացուցիչ քննարկելու:

Մենք ապավինում ենք Ձեր եւ ինչպակի անդամ երկրների ներկայացուցիչների կողմից ԼՂՀ ներքաղաքական իրավիճակի ողջ բարդության ընկալմանը եւ դրա կայունության համար Ձեր շահագրգռվածությունը:

Գոնում եմ, որ մոտ օրերս հնարավոր է ԼՂՀ վերջնական դիրքորոշման որոշակիացում»[16]:

Երեւի Ստեփանակերտն իր պատասխանը պայմանավորում էր Ադրբեջանի պատասխանով՝ օգտվելով «ժամանակացույցի» ստորագրման ժամկետի ընձեռած ժամանակային խուսանավումների հնարավորությունից: Ադրբեջանի մերժողական պատասխանի դեպքում հնարավոր էր նախաձեռնությանը դրական պատասխան տալ՝ հաշվի առնելով դրա վտանգավորությունը:

Սակայն Երեւանում այս պատասխանը բացահայտ դժգոհություն առաջացրեց, բայց ՀՀ ԱԳ առաջին տեղակալ Ժ.Լիպարիտյանը պայմանավորվածություն ձեռք բերեց Իտալիայի Մինսկի խմբի նախագահ Մարիո դե Սիկայի, իսկ հետո Մ.Ռաֆայելլիի հետ դարաբաղյան պատասխանի հետաձգման վերաբերյալ[17]:

Նման պայմաններում արտաքին ճնշումների ազդեցության տակ ՀՀ իշխանությունները փորձում էին ամենց գնով ստանալ Ղարաբաղի դրական պատասխանը, եւ ահա Երեւանը հանդես եկավ հանկարծակի պահանջով, ըստ որի ԼՂՀ ղեկավարները, Գխ նախագահության բոլոր անդամների հետ, պետք է ժամանեին Գորիս հանդիպելու Հայաստանի ղեկավարության հետ: Գորիս ժամանեցին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը, ՀՀ Գխ նախագահ Բ.Արարքցյանը, ՀՀ նախագահի հատուկ հանձնարարությունների գծով անձնական ներկայացուցիչ Դավիթ Շահնազարյանը, ԼՂՀ Գխ եւ ՊՊԿ ղեկավարներ: Հանդիպումը կայացավ 1993թ. հունիսի 12-ին[18]. Հանդիպման հիմնական նպատակն էր ամենց գնով սիրաշահել ԼՂՀ Գխ նախագահության անդամներին. որպեսզի նրանք ստորագրեն նշված փաստաթուղթը:

Սակայն ՀՀ նախագահի հույսերը չիրականացան՝ Գորիսում ԼՂՀ ղեկավարներից նա դրական պատասխան չստացավ: Հանդիպման ժամանակ ԼՂՀ Գխ նախագահի պաշտոնակատարը բանավոր համաձայնություն տվեց ստորագրել փաստաթուղթը, բայց վերջում կտրուկ հրաժարվեց եւ ուղեւորվեց Ստեփանակերտ:

Հունիսի 12-ի երեկոյան Ժիրայր Լիպարիտյանը տեղեկացրեց ՌԴ դեսպան Վ.Ստուպիշինին, որ դարաբաղյան երկու ղեկավարներն էլ համաձայնվել են ստորագրել «ժամանակացույցը», բայց որոշել են այդ անել Ստեփանակերտում[19]:

Մինչդեռ Ադրբեջանում արդեն սկսվել էին լայնածավալ ներքին խռովություններ՝ գնդապետ Ս.Հուսեյնովի գլխավորությամբ: Ապստամբելուն շարժման արդյունքում Ադրբեջանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում. հունիսի 15-ին խորհրդարանի նախագահ ընտրվեց Հ.Ալիեւը, իսկ հունիսի 30-ին վարչապետությունն ստանձնեց 34-ամյա խռովարար գնդապետ Հուսեյնովը[20]:

Հունիսի 12-ին օգտվելով Ադրբեջանում ստեղծված կացությունից, ԼՂՀ ԻՊՈՒ ստորաբաժանումները միաժամանակ մարտական գործողություն սկսեցին Ասկերանի եւ Մարտակերտի շրջանների ուղղություններում եւ հասան նկատելի հաջողությունների[21]:

Անհրաժեշտ է նշել, որ Գորիսում ունեցած անհաջող հանդիպումից հետո մարտի 14-ին ՀՀ նախագահը հանդես եկավ ԼՂՀ իշխանություններին քննադատող հետեւյալ հայտարարությամբ. «ՀՀ-ն իր խորին մտահոգությունն է հայտնում վճռական պահերին որոշում կայացնելու, պատասխանատվություն ստանձնելու հարցում ԼՂ իշխանությունների դրսեւորված անկարողության, ինչպես նաեւ զինադադար հաստատելու բացառիկ պատեհությունը չիրագործելու համար:

ՀՀ-ն վստահ է, սակայն, որ ԼՂ իշխանությունները կկարողանան բարձր կանգնել երկրորդական ու նախաձեռնության հետ չառնչվող նկատառումներից՝ դրսեւորելով իրենց իբրեւ իսկական ղեկավարներ, եւ, քանի դեռ ուշ չէ, անհրաժեշտ որոշում կայացնել ի շահ ԼՂ ժողովրդի անվտանգության ու խաղաղության՝ գիտակցելով սեփական ժողովրդի ճակատագրի նկատմամբ ու պատմության առջեւ իրենց պատասխանատվությունը»[22]:

Այնուհետեւ նույն օրը կնոջից հետո ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը հանկարծակի ուղղաթիռով ժամանեց Ստեփանակերտ: Դա նրա առաջին պաշտոնական այցն էր ԼՂՀ: Նախագահը պահանջեց շտապ հրավիրել Գխ նախագահության նիստ[23]: Նա իր հետ բերել էր մի կարեւոր գաղտնի քաղաքական փաստաթղթի նախագիծ, որը կոչվում էր «Պայմանագիր ՀՀ եւ ԼՂՀ միջեւ»[24]: Այն պետք է ստորագրեին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանը, ԼՂՀ Գխ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը եւ ԼՂՀ ՊՊԿ նախագահ Ռ.Քոչարյանը: Վերջինս կողմնակից էր փաստաթղթի ստորագրմանը, իսկ ինչ վերաբերում էր բանակի

հրամանատարությանը, ապա այն հայտարարել էր, որ կընդունի իշխանության ցանկացած որոշում[25]:

Հունիսի 14-ի երեկոյան տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահության եւ ՊՊԿ անդամների համատեղ նիստ: Նախկին ԼՂՀ ԳԽ մամլո քարտուղար Գ.Բաղդասարյանի եւ ԼՂՀ ԳԽ նախագահության որոշ անդամների տեղեկությունների համաձայն ՀՀ նախագահ փորձել է համոզել ԼՂՀ ԳԽ նախագահության անդամներին, որ Քելբաջարից հայկական ուժերի դուրս բերումը Ռուսաստանի դիվանագիտական ճնշման հետեւանք է եւ այն չիրականացնելու դեպքում Հայաստանը կկորցնի Ռուսաստանին որպես դաշնակից, ինչը կարող է ճակատագրական լինել եւ Ղարաբաղի, եւ Հայաստանի համար: ԼՂՀ ղեկավարության վրա ազդելու համար օգտագործվել են նաեւ այնպիսի փաստարկներ, որոնք դուրս են դիվանագիտության եւ բանավեճերի ընդունված սահմաններից[26]: Տարօրինակ էր ՀՀ իշխանությունների պահվածքը, որոնք փաստորեն փորձում էին Քելբաջարի հանձնման պատասխանատվությունը ամբողջովին գցել Ղարաբաղի իշխանությունների վրա: Ինչպես վկայում է ԼՂՀ նախկին ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը, Հայաստանը հետ էր քաշվում Քելբաջարից եւ հանձնելու դերը դնում Ղարաբաղի վրա[27]:

Նիստի ժամանակ արձանագրվեցին հարցի վերջնական քննարկման հետեւյալ արդյունքները. ԼՂՀ ԳԽ նախագահության 5 անդամներ, որոնցից 4-ը ՀՅԴ անդամներ էին, դեմ քվեարկեցին նշված փաստաթղթի ընդունմանը, իսկ նախագահության մյուս մասը հավատալով ՀՀ նախագահի խոստումներին, կողմ քվեարկեցին: Այդ տհաճ ներկայացումն ունեցավ հետեւյալ վախճանը. չդիմանալով Լ.Տեր-Պետրոսյանի ճնշումներին, ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը հրաժարվեց ստորագրել եւ հրաժարական տվեց: Նախագահությունը ընդունեց նրա հրաժարականը, եւ «ԼՂՀ ԳԽ մասին» օրենքի համաձայն ԳԽ նախագահի պարտականությունները մինչեւ ԳԽ նստաշրջանը դրվեցին նախագահի առաջին տեղակալի պաշտոնակատար Կարեն Բաբայանի վրա[28]:

ԼՂՀ ԳԽ նախագահի նոր պաշտոնակատարը ստորագրեց «Անհապաղ միջոցառումների իրականացման ժամանակացույց»: Այնուհետեւ այդ փաստաթղթին կից նամակով դիմեց ԵԱՀԿ Մինսկի խմբի խորհրդաժողովի նախագահ Մ.Ռոֆալելլիին, որ ասվում էր. «Նախ եւ առաջ կցանկանայի մեկ անգամ եւս հավատալ ԼՂՀ ղեկավարության խաղաղության ձգտումը եւ հավատարմությունը միջազգային ընկերակցության խաղաղարար նախաձեռնությանը: Հաշվի առնելով 9 երկրների նախաձեռնության առնչությամբ ԼՂՀ-ում սրված իրավիճակը, ինչպես նաեւ դրանով թելադրված իշխանության փոփոխումը հանրապետությունում, որի հետեւանքով մի քանի ստորաբաժանումներ դուրս են եկել վերահսկողությունից, առաջարկում ենք միջոցառումների ներկայացված ժամանակացույցի ժամկետը երկարաձգել մեկ ամսով: Այդ երկարաձգումը մեզ հնարավորություն կտա կայունացնել իրավիճակը եւ ապահովել ստանձնած պարտավորությունների կատարումը: Դրա հետ մեկտեղ, մտահոգության տեղիք է տալիս խիստ պայթուցավտանգ իրադրությունը, որը կարող է հանգեցնել անկանխատեսելի հետեւանքների: Նկատի առնելով, որ ԼՂՀ հարակից Ադրբեջանի շրջանները վերահսկում են զինված ընդդիմության կողմից, որը մարտական գործողություններ է վարում կառավարական գործերի դեմ, խնդրում եմ ԵԱՀԿ հավատարիմ, որ Ադրբեջանի ղեկավարությունը պատրաստ է, եւ ի գոր է, ապահովել Մինսկի 9 երկրների նախաձեռնության իրականացման ուղղությամբ իր ստանձնած պարտավորությունների կատարումը: Հույսով եմ, որ համատեղ ջանքերով մենք կհասնենք երկար սպասված խաղաղությանը»[29]:

Այսպիսով, երկարատեւ պայքարից հետո, օգտագործելով հարմար այահր եւ լծակները ՀՀ նախագահը կարողացավ ԼՂՀ-ում վերջնականապես կատարել իշխանափոխություն եւ բերել իր համար բարենպաստ ուժեր:

Ամփոփում

ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի կողմից Քելբաջարի ազատագրումից հետո դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված միջնորդական ջանքերն ավելի աշխուժացան, եւ թվում էր, որ միջնորդները կկարողանան հասնել որոշակի հաջողությունների: Այնուամենայնիվ, վերջիններիս կողմից ձեռնարկված քայլերը դրական ազդեցություն չունեցան ինչպես դարաբաղյան հակամարտության, այդպես էլ հիմնահարցի կարգավորման գործընթացների վրա: Մեր կարծիքով, ձախողման գլխավոր պատճառն այն էր, որ միջնորդները, հիմնականում հետեւանքելով աշխարհաքաղաքական շահեր, հետաքրքրված էին միայն հակամարտության հետեւանքների վերացումով՝ անտեսելով

հիմնախնդրի բուն էությունը: Բանակցային գործընթացի այդպիսի տարօրինակությունը առաջ բերեց տարաձայնություններ ԼՂՀ օրենսդիր մարմնի եւ ՀՀ նախագահի միջեւ, որոնք նպաստեցին երկկողմ հարաբերությունների վատթարացմանը: Սակայն ՀՀ նախագահը կարողացավ օգտագործել ընձեռված հնարավորությունը եւ ԼՂՀ-ում իրականացնել վերջնականապես իշխանափոխություն՝ բերելով իր համար բարենպաստ ուժեր:

Резюме

После освобождения Кельбаджара Силами самообороны НКР посреднические усилия, направленные на мирное разрешение карабахского конфликта, активизировались, и, казалось, посредникам удастся достичь определенных успехов. Тем не менее, шаги, предпринятые последними, не имели положительного влияния как на карабахский конфликт, так и на процессы разрешения проблемы. По нашему мнению, главная причина неудачи заключалась в том, что посредники, в основном преследуя геополитические цели, были заинтересованы только в ликвидации последствий конфликта, игнорируя саму суть конфликта. Такая странность переговорного процесса вызвала ряд противоречий между законодательным органом НКР и президентом РА, которые привели к ухудшению двусторонних отношений. Однако президенту РА удалось использовать предоставившуюся возможность для осуществления окончательной смены руководства НКР и приведения к власти удобных для себя сил.

Մատենագրություն

1. Վ.Բալայան, Արցախի պատմություն, Երեւան, 2002, էջ 402:
2. «Երկիր», 10.04.1993թ.:
3. «Երկիր», 30.04.1993թ.:
4. Տ.Բալայան, Ղարաբաղյան հիմնահարցը եւ միջազգային դիվանագիտությունը. 1991-1994թթ., Երեւան, 2004, էջ 73:
5. «Երկիր», 01.05.1993թ.:
6. «Երկիր», 13.05.1993թ.:
7. «Երկիր», 13.05.1993թ.:
8. «Արցախ», 08.05.1993թ.:
9. «Երկիր», 19.05.1993թ.:
10. Բ. Ուլուբաբյան, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երեւան, 1997, էջ 678:
11. «Երկիր», 27.05.1993թ.:
12. «Արցախ», 01.06.1993թ.:
13. В.Б.Арутюнян, События в Нагорном Карабахе. Хроника. Часть V, Январь 1993г. – июль 1995г. Ереван, 1997, стр. 103-105, (այնուհետեւ՝ Վ.Բ.Հարությունյան):
14. «Երկիր», 11.06.1993թ.:
15. В.Ступишин, Моя миссия в Армению. Москва, 2001, стр. 218 (այնուհետեւ՝ Վ.Ստուպիշին):
16. «Երկիր», 12.06.1993թ.:
17. Վ.Ստուպիշին, նշվ. աշխ., էջ 219:
18. Հ.Աբրահամյան, Ճակատագրին ընդառաջ, Երեւան, 2001, էջ 202:
19. Վ.Ստուպիշին, նշվ. աշխ., էջ 219:
20. Վ.Հարությունյան, նշվ. աշխ., V մաս, էջ 102: Հ.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 203:
21. Վ.Բալայան, նշվ. աշխ., էջ 402-403:
22. «Երկիր», 15.06.1993թ.:
23. Հ.Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 203:
24. ԼՂՀ առաջին գումարման Գխ քարտուղար, պատմական գիտությունների թեկնածու հանգուցյալ Վ.Հակոբյանի անձնական արխիվ:
25. «Երկիր», 15.06.1993թ.:
26. «Երկիր», 15.06.1993թ.:
27. ԼՂՀ նախկին առաջին գումարման Գխ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանի հետ հեղինակի զրույցի գրառում, 17.06.2006:
28. «Արցախ», 17.06.1993թ.:
29. Բ.Ուլուբաբյան, նշվ. աշխ., էջ 694:

ՀՏԴ 371

ԱՊԱԳԱ ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁԻ՝ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ռ.Զ. Աղաբեկյան
մանկավարժության և հոգեբանության ամբիոն

Մտնելով 21-րդ դար՝ ակնհայտեն ենք լինում կյանքի բոլոր բնագավառներում տեղի ունեցող փոփոխություններին, որոնց շարքում իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում ազգային դպրոցի վերակառուցման հարցը՝ որտեղ գլխավոր գործող անձն ուսուցիչն է՝ իր անձնային և մասնագիտական որակներով, իր պատասխանատվությամբ, ուսումնադաստիարակչական գործընթացի նկատմամբ ինքնուրույն մոտեցումներով ու լուծումներով: Այսօր մեր կրթական համակարգում դեռ լուծված չեն բազմաթիվ հարցեր ու խնդիրներ, ուստի, այդ առումով կարևորվում է ապագա ուսուցչի անձի՝ կառավարման և ինքնակառավարման հատկանիշների ձևավորման մանկավարժական պայմանները ԲՈՒՀ-ում:

Ապագա ուսուցչի ուսումնա-իմացական գործունեության կառավարման գործընթացը կազմակերպելիս կարևոր է հիշել, որ Բուհում դասախոսների գլխավոր խնդիրը պետք է լինի նրանց անձի սուբյեկտիվային որակների ձևավորումը: Անձի վերափոխումն իր գործունեության սուբյեկտի նշանակում է նրա ինքնակազմակերպման և ինքնակարգավորման ընդունակությունների զարգացում: Նշված ընդունակություններն իրենց հերթին կարևոր տեղ են գրավում անձնային որակների ստորակարգություններում հանդիսանալով ցանկացած գործունեության հաջող կառավարման հիմք: Առավել ևս, հասարակության անցումային շրջանի վերակառուցման ու բարեփոխման ներկա փուլում նշած գործընթացն անհրաժեշտաբար պահանջում է, որպեսզի առաջին հերթին համապատասխանորեն վերափոխումների ենթարկվի կրթադաստիարակչական համակարգը թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ, թե՛ գործունեության ոճով, մեթոդներով և թե՛ կառավարման և ինքնակառավարման մեխանիզմներով: Նորովի իմաստավորումը հանդես է գալիս, որպես մանկավարժական գործունեության անհատակողմնորոշման մոդելի վճռորոշ պայման, այդ առումով նախ փոքր ինչ կանգ առնենք կառավարումը, իբրև մանկավարժական գործունեության կազմակերպման խնդիր:

Ասենք, որ այդպիսինը նոր չէ: Նա գիտության մեջ առաջացավ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սահմանագծում: Կառավարման հարցը առանձնահատուկ հրատապություն ստացավ կիբեռնետիկայի և ուսումնական գործընթացի ծրագրավորված կառավարման տեսության զարգացման հետ: Կառավարման հիմնահարցին անդրադարձել են շատ գիտնական-հոգեբաններ՝ Վիգոտսկին, Ռուբինշտեյնը, Լեոնտևը, Գալպերինը, Տալիզինան, Մենչինսկայան, Կոստյուկը և ուրիշներ:

Կառավարման գաղափարին կարելի է հանդիպել դեռևս Հերբարտի և նրա հետևորդների աշխատություններում: Հերբարտի նշանավոր հետևորդ Ցիլերը կառավարումը դիտարկեց որպես մանկավարժական աշխատանքի հատուկ բնագավառ, որը կոչված է կարգավորելու մանկան գործունեությունը և սահմանափակելու նրա վնասակար և ոչ օգտակար որակները: Կառավարման հիմնահարցի տարբեր տեսանկյուններին անդրադարձել են Բլոնսկին, Ցացսկին, Եդիլյանը և ուրիշներ:

Մանկավարժական գործընթացի կառավարման տեսության հարցերը հատուկ և համալիր հետազոտության առարկա դարձան մեր դարի 60-70-ական թվականներին դիդակտիկներ Եսիպովի, Դանիլովի, Օգորոդնիկովի, Սկատկինի կողմից: Նրանք իրենց աշխատություններում արձարձեցին դպրոցականների ուսումնաիմացական գործունեության կառավարման հարցը:

Դաստիարակության գործընթացի կառավարման հարցերը ընդարկվեցին Բաբանսկու, Կուրակինի, Նովիկովայի, Վիհոդրատդովի, Մովսիսյանի և ուրիշների հետազոտություններում: Շատ նյութեր հրատարակվեցին դպրոցի, աշակերտական կոլեկտիվի և աշակերտների հասորդակցման կառավարման հարցերի վերաբերյալ՝ Վասիլև, Կոնդակով, Կոնոնիկովա,

Սոլիկովա և ուրիշներ: Իսկ հոգեբաններից՝ վյուրցբուրգյան դպրոցի ներկայացուցիչները հիմնական ուշադրությունը դարձրին մտածողությանը, այսինքն կառավարել մտածողության գործունեությունը նշանակում է կառավարել ինչ-որ խորհրդավոր գործընթացի նկատմամբ հարաբերության ըմբռնման գործընթաց: Մտածողության կառավարման հարցերը պատրաստվեցին հետագծողող հոգեբանների հայեցակետերում: Նշենք, որ նրանց մոտ նկատվում է մեծ զգուշավորություն, երբ խոսքը վերաբերում է կառավարման և ինքնակառավարման մանկավարժական գործընթացների պայմաններին, այսինքն վերը նշված և չնշված շատ տեսություններում խոսքը վերաբերում է մտածողությանը, սակայն ըստ էության չի քննարկվում կառավարման և ինքնակառավարման հարցերը: Ուստի կարելի է հավաստել, որ կառավարումը և ինքնակառավարումը որպես գիտություն, և հատկապես, որպես սոցիալական հոգեբանության ինքնուրույն բնագավառ, գտնվում է իր ստեղծման ու ձևավորման սկզբնափուլում *(Ռ.Ջ. Արաքելյան)*: Եթե կառավարման սոցիալական, տնտեսական և իրավական բովանդակությունն ու մեխանիզմները Ժողովուրդների մեջ ինչ-որ մակարդակով սահմանված ու գործում են, ապա մանկավարժական գիտության (անձի, խմբի, կոլեկտիվի, հասարակության) կառավարման մեջ մանկավարժահոգեբանական բովանդակությունն ու օրինաչափությունները դեռևս ոչ միայն շատ քիչ ուսումնասիրված, այլև այդ երևույթները դեռևս մանկավարժորեն ընկալված ու իմաստավորված չեն: Այդ է վկայում այն փաստը, որ կառավարումը և ինքնակառավարումը հաճախ նույնացվում է ղեկավարման հետ:

Մեր նպատակն է բացահայտել ապագա ուսուցչի անձի կառավարման ձևավորման մանկավարժական պայմանները համալսարանական, կրթության պայմաններում, այսինքն ուսանողների ուսումնա-իմացական գործունեության կառավարման և ինքնակառավարման գործընթացում, իմանալով, որ կառավարումը տարբեր (կենսաբանական, սոցիալական, տեխնիկական և այլն) գոյություն ունեցող կազմակերպված համակարգերի բաղադրամասը կամ գործառույթն է, որը ապահովում է նրանց որոշակի կառուցվածքը, գործունեության ռեժիմի պահպանումը, ծրագիր, գործունեության նպատակի իրականացումը:

Այսպիսով, ապագա ուսուցչի անձի սուբյեկտային դիրքորոշման ձևավորման մեր հետազոտության առաջադիր հիմնահարցի լուծման բարդությամբ անհրաժեշտ ենք համարում սահմանել ուսանողների ինքնակառավարման ակտիվության ախտորոշման վրա, որի հիմքը կազմում են երեք բաղադրիչներ (ինտելեկտ, կամք, հույզեր) և ապահովվի դրանց աստիճանական դուրս բերումը ինքնակառավարման զարգացման մակարդակ, դրանով իսկ նաև անձի զարգացման ավելի բարձր մակարդակ: Եվ այսպես, կարևորում ենք ենթադրել, որ ուսանողների ուսումնա-իմացական գործունեության արդյունավետ ղեկավարման կարելի է հասնել այն դեպքում, որ եթե կառավարման ներգործությունների համակարգը կառուցվի ինքնակառավարման զարգացման առանձնահատկությունների հաշվառմամբ: Միայն այս դեպքում կլուծվի ուսուցման հիմնական խնդիրը՝ ուսանողի վերածվելը իր կենսագործունեության և գործունեության տարբեր տեսակների ակտիվ սուբյեկտի:

Այս դեպքում հատուկ նշանակություն է ստանում անհատական-շեղտավորված մոտեցումն ուսանողի անձին, որի նպատակը կառավարչական ներգործությունների ստրատեգիայի և աստիճանի սահմանումն է ինքնակառավարման տարբեր մակարդակների (բարձր, միջին, ցածր) վրա: Մեր ուսումնասիրման վարկածագույն նպատակը այն մանկավարժական պայմանների որոնումն ու հայտնաբերումն է, որոնք թույլ կտան ձևավորել ուսումնական և պրոֆեսիոնալ գործունեության ակտիվ սուբյեկտին: Ինչպես արդեն նշել ենք, այդ պայմաններից գլխավորը մենք տեսնում ենք ուսուցման այնպիսի կազմակերպումը, նրա հուզակամային դրդոտի, ինքնակարգավորման և ինքնակազմակերպման որակների զարգացմանը, այլ կերպ ասած բուհական ուսումնադաստիարակչական աշխատանքի հիմքում դրվի անձնակողմնորոշիչ, անձնազարգացնող սկզբունքը: Իր հերթին, նշված որակների զարգացման բարձր մակարդակի առկայությունը թույլ կտա ուսանողին իր գործունեության, այդ թվում ուսումնական գործունեության իրական սուբյեկտի վերածման մասին: Իսկ ինչպես հայտնի է ակտիվ ուսուցման մեթոդներից մեկը, որի կիրառման դեպքում ուսանողը ձեռք է բերում

սուբյեկտի այնպիսի դիրքորոշում, որը թույլ է տալիս նրան կառավարելու իր գործունեությունը մենք առաջարկում ենք գործարար մանկավարժական խաղեր: Ակտիվ ուսուցման այս մեթոդի իրացման ընթացքում կլուծվի ոչ միայն սոսկ դիդակտիկական խնդիրներ, այլև առավելագույն չափով կզարգացնի անձի սուբյեկտային բնութագիրը:

Մանկավարժական գործարար խաղերի համակարգի հետ միաժամանակ մեր առաջադիր խնդրի լուծմանը մեծապես կնպաստի մի շարք ուսումնական առարկաների (պրոֆիլային) գծով անհատական- շերտավորված առաջադրանքների համակարգի ստեղծումը և կիրառումը: Մեր կարծիքով, ուսուցման նման մեթոդների կիրառումը մանկավարժ-դասախոսների կողմից հնարավորություն կտա առավել արդյունավետությամբ լուծել ուսանողների ինքնակառավարման ձևավորման ու զարգացման, նրանց, որպես ուսումնա-դաստիարակչական ու գործունեության այլ տեսակների սուբյեկտների ինքնլիության գործընթացը:

Այսպիսով, որքան միասնական ու նպատակամետ լինեն դասախոսների և ուսանողների ուսուցողական, ուսումնառական գործողությունները, մանկավարժական կառավարման ու ուսանողների ինքնակառավարման գործընթացները, այնքան բարձր կլինեն մանկավարժական ողջ գործընթացի արդյունքները ԲՈՒՀ-ում:

Ամփոփում

Սույն գիտական հոդվածը մի յուրահատուկ ուսումնասիրություն է ուղղված ապագա ուսուցչի սուբեկտային դիրքորոշման ձևավորմանը ու նրանց կառավարման և ինքնակառավարման ակտիվության անհրաժեշտությունը:

Ուսումնասիրման կարևորագույն նպատակը նաև այն մանկավարժական պայմանների որոնումն ու հայտնաբերումն է, որոնք թույլ կտան ձևավորել ուսումնական և պրոֆեսիոնալ գործունեության ակտիվ սուբյեկտին ԲՈՒՀ-ում:

Резюме

Данная научная статья – особое исследование, направленное на формирование позиций будущего учителя и активизацию их управления и самоуправления.

Важнейшей целью исследования является выявление условий, которые позволят сформировать активного субъекта в учебной и профессиональной деятельности в вузе.

Գրականություն

1. Ա.Ա. Ղուկասյան, Լ.Ֆ. Ասատրյան, Ս.Ա. Կարապետյան, Մանկավարժական բուհի կառավարման տեխնոլոգիան և զարգացման միտումները, Երևան, «Մանկավարժ», 2005թ.:
2. Վ.Եդիգարյան, Կառավարում. սոցիալ-հոգեբանական ասպեկտ, Երևան, «Դար», 2004թ.:
3. Վ.Եդիգարյան, Կառավարման և ինքնակառավարման տեխնոլոգիաներ, Երևան, 2006թ.:
4. Վ.Եդիգարյան, Կառավարման և ինքնակառավարման տեխնոլոգիաներ, Երևան, 2005թ.:
5. Ա. Բալայան, Մանկավարժական վարպետության հիմունքներ, Երևան, 1988թ.:
6. Օ.Ա. Աբդուլինա, Ուսուցչի համամանկավարժական պատրաստումը բարձրագույն մանկավարժական կրթության համակարգում, Մ., 1990թ.:
7. Ա.Պլատոն, Ուսուցչի անձի ձևավորումը պրոֆեսիոնալ պատրաստման գործընթացում, Մ., 1990թ.:

ՀՏԴ 159.9

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԹՐԵՅՆԻՆԳԻ /ՎԱՐԺԵՑՄԱՆ/ ԾԱԳՈՒՄԸ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԹԵՐԱՊԻԱՅԻ ԽՄԲԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ա.Մ.Ալոյան

մանկավարժության և հոգեբանության ամբիոն

Հոգեբանական խնդիրների, շփման ու փոխհարաբերությունների ընթացքում ծագող դժվարությունների հաղթահարման և նման այլ թեմաների վերաբերյալ հարցեր մարդկանց հուզել են միշտ, անկախ այն քանից, թե ո՞ր դարում կամ տարածքում են ապրել ու ապրում նրանք: Եվ ամեն անգամ գիտությունը, կարծես, փորձում է տալ այդ հարցերի պատասխանները, ավելացն, նոր անհրաժեշտները՝ գիտական նոր ձեռքբերումներով միասնում են դրանք և նորից բռնում մարդու հոգեկանի գաղտնիքների բացահայտման ճանապարհը: Հենց այդ ճանապարհին է, որ ծնվեց հոգեբանությունը, որն իր ուսումնասիրություններով ապացուցեց, որ յուրաքանչյուր անձ՝ անցնելով ինքնահիմացության ուղին, պետք է առաջին հերթին, ինքն իր համար բացահայտի իրեն հուզող հոգեբանական որոշ կարևոր հարցերի պատասխանները, ավելացն, նոր անհրաժեշտները՝ գիտական նոր ձեռքբերումներով միասնում են դրանք և նորից բռնում մարդու հոգեկանի գաղտնիքների բացահայտման ճանապարհը: Հենց այդ ճանապարհին է, որ ծնվեց հոգեբանությունը, որն իր ուսումնասիրություններով ապացուցեց, որ յուրաքանչյուր անձ՝ անցնելով ինքնահիմացության ուղին, պետք է առաջին հերթին, ինքն իր համար բացահայտի իրեն հուզող հոգեբանական որոշ կարևոր հարցերի պատասխանները, քանի որ դրանք, շատ հաճախ թաքնված են մարդկային հոգեկանի խոր անկյուններում: Հոգեբանական թրեյնինգային խմբերը, որոնց ծագման մասին խոսք կգնա այս հոդվածում, այսպիսի անձեր են ստեղծում անձնային փորձ ստանալու համար և այդ կերպ առավել դյուրին են դարձնում ինքնագիտակցման, ինքնաբացահայտման ու ինքնահասկացման գործընթացը: Սա կարելի է համարել մարդկային հոգեկանի մշտական հարցերի պատասխանները ստանալու նորագույն միջոցներից մեկը: Այս փաստի գիտակցմամբ էլ գնալով աճում է հոգեբանական թրեյնինգների հանդեպ հետաքրքրությունը՝ նույնիսկ հոգեբանությունից հեռու մարդկանց շրջանում: Օրինակ, եթե ժամանակներ առաջ Կուրտ Լևինը նոր սենդամներ օգտագործելու իր գիտափորձը կատարեց հոգեբանության բնագավառում և այն անվանեց թրեյնինգ /մանրամասները հոդվածի էջերում/, սակայն այսօր դեղագործական խոշոր կազմակերպություններ այդ մեթոդիկան օգտագործում են բժիշկներին ու նրանց այցելուներին նոր դեղամիջոցների հետ ծանոթացնելու համար: Ուսումնասիրելով թրեյնինգների ծագման պատմությունը կարելի է հետաքրքիր դիտարկում կատարել՝ հոգեբանական իմացության այս մեթոդի ծնունդը նման է հոգեբանական գիտության ծագմանը: Եթե հոգեբանությունը, որպես ինքնուրույն գիտություն, ծագել է բնագիտական գիտությունների, մասնավորապես փիլիսոփայության ընդերքից և ստանալով մեծ ճանաչում՝ իր արմատները խրել բազմաթիվ այլ ոլորտներում /տոնտեսագիտություն, մանկավարժություն, սոցիոլոգիա, իրավագիտություն, բանաբանություն և այլն/, ապա այսօր տարբեր բնագավառներում լայն տարածում ստացած հոգեբանական վարժեցումները, որպես գործնական հոգեբանության ժամանակակից ինքնուրույն մեթոդ, ծագել են հոգեբանական, ինչպես նաև հոգեթերապևտիկ խմբային մեթոդների զարգացման ճանապարհին, թեև առաջին հայացքից թվում է, թե գործնական հոգեբանության այս մեթոդն իր կիրառման նպատակով ու միջավայրով տարբերվում է հոգեթերապևտիկ մեթոդներից: Ի տարբերություն վերջինների, թրեյնինգային խմբերում մարդիկը գործ ունի առավելապես առողջ հոգեկան ունեցող մարդկանց հետ և «թրեյնինգ» տերմինն իր ծագումնաբանությամբ կրում է սոցիալ-հոգեբանական բնույթ: Այնուամենայնիվ թրեյնինգի ժամանակակից հասկացումը, որն իր մեջ ներառում է նաև խմբային հոգեթերապիայի շատ ոլորտներ՝ մեթոդներ, մասնագոյց է անում, որ թրեյնինգի ծագման արմատները պետք է փնտրել համաշխարհային հոգեբանական գիտության հիմնական ուղղություններում՝ հոգեվերլուծություն, բիհեյվիորիզմ, գեշտալտ հոգեբանություն, հումանիստական հոգեբանություն, կամ տարբեր տեսական մոտեցումների միավորման մեջ /ինչպես, օրինակ՝ Ֆ. Պեռլզի գեշտալտթերապիան կարելի է համարել հոգեվերլուծության, գեշտալտհոգեբանության, ֆենոմենոլոգիական մոտեցման միավորման և զարգացման արդյունք/: Բիհեյվիորիզմի ակունքներից առաջացել են կարողությունների թրեյնինգային

խմբերը՝ ուղղված ուսուցման վարքային մոդելների վրա: Այդ խմբերի վարողները, որպես կանոն, հակված են ալգորիթմացնել խմբային գործընթացները: Վ. Ռայսի մարմնա-կողմնորոշողական թերապիան արմատավորվում է դասական հոգեվերլուծությունից, նեյրոլինգվիստիկական ծրագրավորումը՝ ժամանակակից նեոբիհեյվիորիզմից: Սակայն նախքան հոգեբանական գիտությունը՝ հանձինս հիմնական տեսությունների, կարևորություն տար խմբային աշխատանքի մեթոդներին, պահանջվեց որոշակի ժամանակ: Որպես արդյունք ապացուցվեց այդ մեթոդների արդյունավետությունը: Այսօր խմբային մեթոդները «... դարձել են իրական դրոշմներ, ինչպես իրենց խնայողականությամբ, այնպես էլ իրենց արդյունավետության ուժով, որը մի շարք դեպքերում անհատական աշխատանքից էլ բարձր է»[3]: Բացի այդ խումբը դիտարկվում է որպես անհատի զարգացմանը նպաստող կարևոր օղակ, քանի որ մարդը, որպես անձ կայացման ճանապարհին քայլում է մի խմբից մյուսը, հետևաբար չի կարող հոգեբանորեն անկախ լինել դրանցից: Նա միայնակ չէ: Եվ հենց անհատի կյանքում խմբի նման նշանակությունն էլ գործնական հոգեբանության բնագավառում առանձնահատուկ ասպեկտի վրա է դնում խմբային աշխատանքի մեթոդները: Ակտիվ խմբային մեթոդների հիմքում ընկած են այնպիսի հայտնի հոգեբանների աշխատանքներ, ինչպիսիք են Կ.Լևինը /«թրեյնինգ-խմբեր»/[5], Կ.Ռոջերսը, Ռ.Ճոնսոնը /«հանդիպման խմբեր»/, Յ. Մորենոն /«հոգեդրամա»/, Ֆ.Պերլզը /«գեշտալտթերապիա»/ և այլն: Հոգեբանական գիտության զարգացմանը համընթաց ընդլայնվեց խմբերի և խմբային մեթոդների ուսումնասիրության ու կիրառման ասպարեզները: Համաշխարհային գրականության մեջ խմբերի խնդիրներին վերաբերող հրատարակությունների թիվը 1897-1959թթ.. հատվածով կազմել է 2112 անուն, բայց 1959-1969թթ.. այն աճել է մինչև 2000, իսկ 1967-1972 նս 3400 ուսումնասիրությունով: Արժե նշել, որ բոլոր հրատարակությունների ավելի քան 90%-ը բաժին է հասնում ԱՄՆ-ին /8/:

Խմբային մեթոդների, նրանց ֆունկցիաների և մեխանիզմների սոցիոլոգիական առաջին ուսումնասիրությունների սկզբնակետում կանգնած էին Է. Դյուրկհեյմն ու Ջ. Ջիմմելը: Նրանց կատարած հետազոտական աշխատանքների արդյունքներն այս կամ այն ձևով սկսեցին օգտագործվել հոգեթերապիայում, թեև անհիմաստ է ժխտել, որ առողջ մարդկանց խմբերի և հոգեթերապևտիկ խմբերի հոգեբանական մեխանիզմների ու գործունեության առանձնահատկությունների միջև կան զգալի տարբերություններ: Իսկ սակայն թրեյնինգային խմբերը կարելի է նմանեցնել փոքր խմբերին, որոնք ուսումնասիրվում են մասնավորապես սոցիալական հոգեբանության կողմից:

ԱՄՆ- ում խմբային մեթոդների կիրառման առաջին փորձերը ստացել են բնպրեսիվ-ինսպիրացիոն/ չնչող- ներշնչող/ թերապիա անվանումը / Appley and Winder, 1973/ . Ջոզեֆ Պրատտը առաջիններից էր, ով սկսեց կիրառել այդ թերապիան: Նա իր այցելուներին սկսեց հավաքել 20 հոգանոց խմբերում: Սկզբնապես Պրատտը խումբը գլխավորում էր որպես աշխատանքի տնտեսման ձև, որը թույլ էր տալիս խնայել ժամանակը: Խմբային թերապիայով նա խորությամբ տարվեց միայն մի քանի տարի անց: Նա եկավ այն եզրակացության, որ հոգեթերապևտիայի հիմքը հանդիսանում է մի մարդու կողմից մյուսի վրա բարենպաստ ազդեցություն գործելու հանգամանքը: Հետևաբար աշխատանքը խմբում, որտեղ այդ ազդեցությունը կարելի է օգտագործել նպատակասլաց, անհատական աշխատանքի համեմատ ավելի արդյունավետ է:

Այն փաստը, որ խմբի միջոցով ազդեցությունը, մասնավորապես բուժման նպատակով, հաճախ շատ արդյունավետ է լինում, հայտնի է շատ վաղուց, թեև խմբում անհատի վարքի և խմբի ազդեցության հարցերը պարբերական հետազոտության առարկա դարձան միայն 19-20- դդ դարերում: Նույնիսկ շամանական պրակտիկան է ցույց տալիս, թե ինչ ազդեցություն կարող է ունենալ խումբն առանձին անհատների գիտակցության վրա:

Խմբի անդամներից մեկը՝ մյուսի վրա առողջարար ազդեցություն ունենալու վառ ապացույց կարելի է համարել սկանդալային ճանաչում ունեցող մարկիզ դե Սադայի /1740-1814թթ/ գործունեությունը: Երբ նա հայտնվեց Շարանտոնի՝ հոգեբուժարանում, նա սկսեց գրել և հենց սեղում բեմադրել պիեսներ, որոնցում խաղում էին հոգեկան հիվանդները: Ներկայացումների ժամանակ բեմադրիչը վկա էր լինում այնպիսի տեսարանների, որոնցում դերասանները իրենց մարմնավորած կերպարներով շերտ առ շերտ մերկացնում էին իրենց հոգեկան աշխարհը: Սադայի գլուխգործոցը նման «կենդանի թատրոնում», թերևս, կարելի է

համարել խմբային հոգեթերապիայի վաղ փորձերից /Corsini, 1973/: Սակայն հոգեկանի ուսումնասիրության և նրա վրա ազդելու նպատակով թատերական միջոցների սիստեմատիկ օգտագործումը սկսվեց միայն 20-րդ դարի սկզբներին ի շնորհիվ Յակոբ Մորենոի և նրա մշակած մեթոդի՝ հոգեդրամայի: Դե Սադաի գործունեությունը և նրա գիտափորձը կարելի է սկզբնակետ համարել նաև սոցիալ-հոգեբանական թրեյնինգի ծագման համար, քանի որ այս մեթոդի հիմքում նույնպես կարելի է տեսնել դերային խաղերը՝ դրամատիզացիայի տարրերով:

Խմբում տեղի ունեցող գործընթացներին գիտատեսական բացատրություն տալու առաջին փորձը կարելի է համարել 18-րդ դարի վերջում Ֆրանսիայում գործունեություն ծավալած ավստրացի բժիշկ Ֆրանս Անտուան Մեսմերի «կենդանական մեխանիզմ» տեսությունը: Վերջինիս էությունը կայանում էր նրանում, որ գոյություն ունի մագնիսական ֆլյուիդ, որն օրգանիզմում անհավասարաչափ բաշխվելու դեպքում առաջացնում է հիվանդություններ: Այս դեպքում բժշկի խնդիրն է հատուկ միջոցներով հավասարաչափ տարածել ֆլյուիդը և այդ կերպ բուժել հիվանդին /Л. Шерток, Р. Де Сосерор, 1991/: Խմբային բուժումը կազմակերպվում էր հետևյալ կերպ: Դահլիճի կենտրոնում տեղադրվում էր ջրով լի մեսմերյան տարա, որը լցված էր նաև քարերով, հայելու կտորներով և այլն: Ջրից դուրս կախված էին թոկեր, որոնցից բռնած կանգնած էին հիվանդները /հետևյալ կանայք/: Մասնակիցներն իրար կապված էին թոկով: Մեսմերը, միջնադարյան ալքիմիկի հագուստով մոտենում էր հիվանդներին և հատուկ հայելյա ձողով կատարում տարբեր շարժումներ: Պետք է նշել, որ մոգական մթնոլորտն, իրոք, բարերար ազդեցություն էր ունենում որոշ հիվանդների վրա: Սակայն գիտությունների Ակադեմիայի երկու հանձնաժողով, որոնք ստեղծվել էին Լյուդվիկ 16-ի հրամանով՝ Մեսմերի գործունեության գնահատման համար, բացասական կարծիք հայտնեցին «կենդանական մեխանիզմի» տեսության վերաբերյալ: Գիտնականներից ոչ մեկը ուշադրություն չդարձրեց Մեսմերի աշխատանքում սոցիալ-հոգեբանական էֆեկտների վրա, որոնք, մեծամասամբ, կապված էին բժիշկ-հիվանդ միջանձնային փոխազդեցության, մասնակիցների վրա խմբի ունեցած առողջարար ազդեցության հարցերի հետ:

Ժամանակակից հոգեբանությունում դիտարկելով հոգեբանական թրեյնինգի տարբեր մեթոդիկաներ, կարելի է որոշ նմանություններ նկատել մեսմերյան մեթոդիկայի և որոշ ժամանակակից թրեյնինգային տեխնիկաների միջև: Օրինակ, երբ մասնակիցները շրջան են կազմում իսկ նրանցից մեկը ստանձնելով համարգավար դեր՝ մոտենալով մասնակիցներից յուրաքանչյուրին՝ ձեռքի փայտիկի օգնությամբ՝ դիպչում է նրանց և ներգրավում իր նվագախմբի մեջ /1, էջ 34/:

1843 թվականին շոտլանդացի բժիշկ Ջ. Բրեյդը բուժման մեսմերյան տարբերակի հոգեբանական մեխանիզմները կապելով քնի հետ՝ «կենդանական մեխանիզմի» փոխարեն առաջարկեց հիպնոս /հուն. hipnos- քուն/ տերմինը:

Թեև ի սկզբանե հոգեվերլուծության հիմնադիր Զ. Ֆրեյդը խմբային աշխատանք չէր օգտագործում, այնուամենայնիվ, նրա հետևորդները՝ կարևորելով անձի ձևավորման սոցիալական ասպեկտները, սկսեցին կիրառել «խմբային հոգեվերլուծություն» տերմինը՝ նեղ է մուծել Տ. Բարրոուն/: Ալֆրեդ Ադլերը կարծում էր, որ հենց խումբն է նշանակալից ազդեցություն ունենում մարդու նպատակների ու արժեքների վրա և օգնում ձևակերպել դրանք:

Խմբային հոգեբուժության և թրեյնինգային խմբերի զարգացման համար նշանակալից ազդեցություն ունեցան Կ. Լևինի դպրոցի հայացքները:

Կ. Լևինը պնդում էր, որ մարդկանց վարքում և դիրքորոշումներում արդյունավետ փոփոխությունների մեծամասնությունը տեղի է ունենում խմբերում, այլ ոչ թե անհատական կոնտեքստում, այդ պատճառով, որպեսզի մարդը բացահայտի և փոխի իր դիրքորոշումները, մշակի վարքի նոր ձևեր, նա պետք է սովորի իրեն տեսնել այնպիսին, ինչպիսին իր անձն ընկալում են ուրիշները: Կ.Լևինը իր աշխատակիցների հետ միասին սկիզբ դրեց խմբային զարգացման /դինամիկայի/ ուսումնասիրությանը, որը փոքր խմբերի հոգեբանության կորիզն է: Նա մշակեց խմբերում մասնակցող դիտման մեթոդը /the participant-observation method/, որի շնորհիվ ծագեց մարզման խմբերի՝ T- խմբերի / անգլ. T-groups / տեսությունն ու պրակտիկան: Դրանց հիմքում ընկած էր հետևյալ միտքը. մարդկանց գերակշիռ մասն

ապրում և աշխատում է խմբերում, բայց հաճախ իրենք իրենց հաշիվ չեն տալիս, թե ինչպես են նրանք իրենց դրսևորում այդ խմբերում, ինչպիսին են նրանց տեսնում ուրիշները, ինչպիսի ռեակցիաներ է առաջացնում իրենց վարքը ուրիշների մոտ: Կ. Լևինին է պատկանում հետևյալ միտքը. «սովորաբար ավելի հեշտ է փոխել խմբում հավաքված անհատներին, քան թե փոխել նրանցից յուրաքանչյուրին առանձին- առանձին» [4, էջ 22]: Շատ հայտնի մասնագետներ, դրանց թվում և Կ. Ռոջերսը, նշում էին, որ Կուրտ Լևինին կարելի է համարել հոգեբանական թրեյնինգի նախահայր, ինչպես նաև, որ սենզիտիվ վարժեցումը հանդիսանում է 20-րդ հարյուրամյակի նշանակալից հայտնագործություններից մեկը:

Թրեյնինգային մեթոդի մշակման կարևոր նախադրյալներից կարելի է համարել Կ. Լևինի հայտնի գիտափորձը, որի նպատակն էր փոխել մարդկանց սովորությունները ու սենդի հանդեպ ստեղծված ստերեոտիպերը [1]: Այդ պրակտիկ հիմնախնդրի հետ ամերիկացիները բախվել էին երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, երբ բնակչությունը կանգնել էր նոր ու անծանոթ սննդամթերք օգտագործելու փաստի առջև: Ազգել մարդկանց գիտակցության վրա հմոզման մեթոդ ընտրելով ընդունված ու տարածված միջոցները զանգվածային լրատվամիջոցներ, հայտարարություններ, գովազդ, ցանկալի արդյունք չտվեցին: Լևինն առաջարկեց օգտագործել դիսկուսիոն խմբերի սկզբունքը: Գործողությունն ինքնին շատ պարզ էր: Վարողի կարճ ելույթից հետո մասնակիցները քննարկում էին այն հարցը, թե ինչպես կարելի է համոզել մարդկանց օգտագործել նոր սննդամթերք: Արդյունքները գերազանցեցին ակնկալիները: Այլ տեղեկատվությունից հետո ներկաներից միայն 3 %- ը համաձայնվեցին համտեսել նոր ուտեստներից գոնե մեկը, իսկ քննարկման մասնակիցներից՝ 30%-ը: Ելնելով այս և նման այլ գիտափորձերի արդյունքներից Կ. Լևինը հանգեց այն եզրակացության, որ խմբային քննարկման արդյունքում որոշում ընդունելու գործընթացը կարող է առավել երկար ազդել մարդու վարքի վրա: Դա պայմանավորված է նրանով, որ անհատը դիմադրում է փոփոխություններին, եթե դրանք նենտադրում են բնկում խմբային նորմաներից, և, ընդհակառակը, խմբային նորմաների փոփոխման ժամանակ առանձին անհատի հայացքների և տեսակետների փոփոխման գործը դառնում է ավելի դյուրին:

Ըստ Ն. վ. Գրիշնայի /3/, Կ. Լևինի հետազոտությունների արդյունք հանդիսացած թրեյնինգային խմբերի բացահայտման տարեթիվը կարելի է համարել 1946 թվականի ամառը՝ կոնենկտիկուտյան թրեյնինգների անցկացման ժամանակահատվածը: Նախապատմությունը հետևյալն է. Կոնենկտիկուտ նահանգի հանձնաժողովն օգնություն է խնդրել Կ. Լևինից լիդերների պատրաստման և հասարակությունում կրոնական և ռասսայական նախապաշարմունքների հետ պայքարի արդյունավետ միջոցների մշակման ուղղությամբ հետազոտություններ կատարելու գործում: Լևինը և նրա աշխատակիցները որոշեցին անցկացնել «փոփոխող գիտափորձ»: Երկշաբաթյա թրեյնինգային ծրագրին մասնակցելու համար ընտրվեցին 41 մարդ՝ մեծամասնությունը մանկավարժներ և սոցիալական բնագավառի աշխատողներ էին: Թրեյնինգներից հետո մասնակիցների մեծամասնությունը գնում էին տուն, իսկ նրանք ովքեր մնում էին, թույլատրություն խնդրեցին մասնակցելու նախագծի ղեկավարների և վարողների երեկոյան հանդիպումներին, որոնց ընթացքում քննարկվում էին այդ օրվա աշխատանքի արդյունքները: Հանդիպումների մեկի ժամանակ թրեյնինգի մասնակիցները չհամաձայնելով ղեկավարների կարծիքներին, հայտնեցին իրենց տեսակետները: Դագնց բանավեճ, որը Լևինը համարեց շատ արդյունավետ: Երեկոյան քննարկումները՝ մասնակիցների և ղեկավարների միջև համարվեցին կարևոր ուսուցանող փորձ և դարձան անհրաժեշտ պայման թրեյնինգների անցկացման ժամանակ: Այս կերպ գիտակցվեց թրեյնինգային խմբերում հետադարձ կապի կարևորությունը, որը մինչայսօր համարվում է թրեյնինգային աշխատանքի անբաժան մասը:

Կ. Լևինը թրեյնինգային խմբի արդյունավետ աշխատանքի կարևոր պայման էր համարում նաև «Մենք»-ի ուժեղ զգացումը, ինքնաարտահայտման ազատության մթնոլորտը, հանդիպումների ոչ ձևական բնույթը, հուզական պաշտպանվածությունը. խմբային պրոցեսում մասնակիցների ակտիվությունը: Կոնենկտիկուտում անցկացված «փոփոխող գիտափորձի» արդյունք հանդիսացավ նաև 1947 թվականին ԱՄՆ-ում թրեյնինգի Ազգային լաբորատորիայի ստեղծումը: Այն դարձավ մարդկային հարաբերությունների քննագավառում

անցկացվող հետազոտությունների կարևոր կենտրոն: Բայց ինքը Կուրտ Լևինը, չհասցրեց տեսնել իր աշխատանքի վերջնական արդյունքները և մասնակցել Ազգային լաբորատորիայի առաջին համաժողովին: Կոնֆլիկտության աշխատանքային խմբի գործունեության ավարտից 8 ամիս հետո՝ 1947 թվականի փետրվարի 11-ին, նա մահացավ սրտի հիվանդությունից:

Կուրտ Լևինի ամբողջ գիտական գործունեության առանցքը կազմում էր այն, որ նա խումբը դիտարկում էր որպես «դինամիկ ամբողջություն», որի հիման վրա էլ նրա ու նրա աշխատակիցների կողմից մշակվեցին այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են խմբային դինամիկան, խմբային կոմունիկացիան, խմբային որոշումների առանձնահատկությունները, խմբային նորմերը, խմբում ստեղծված սոցիալական մթնոլորտը, մարզիչի կենտրոնական դերը՝ հասկացություններ, որոնք այսօր էլ կազմում են խմբային ուսումնասիրությունների հետևաբար նաև թրեյնինգային աշխատանքի կորիզը:

20-րդ դարի 50- ական թվականներին Մ. Ֆորվերգը մշակեց նոր մեթոդ, որի հիմքում ընկած էին դերային խաղերը դրամատիզացիայի տարրերով: Այդ մեթոդը ստացավ սոցիալ-հոգեբանական վարժեցումներ անվանումը [4]: Այսօր կարելի է թվարկել թրեյնինգային խմբերի տարբեր տեսակներ՝ սոցիալ-հոգեբանական, անձնային աճի, շփման մեջ կարողունակության բարձրացման և այլն: Եվ սա խոսում է այն մասին, որ թրեյնինգային մեթոդներն անցնելով զարգացման երկար ուղի այսօր արդեն կայացել են որպես ինքնուրույն հոգեբանական մեթոդներ:

Ամփոփում

Հոդվածում հեղինակը ընթերցողին ծանոթացնում է այլ խմբային մեթոդների զարգացման հետևանքով առաջացած հոգեբանական թրեյնինգների պատմության հետ: Բացի դրանից ի հայտ է բերվում այն փաստը, որ թրեյնինգային մեթոդների որոշ ձևեր օգտագործվել են դեռևս 18-րդ դարում:

Резюме

В данной статье автор знакомит читателя с историей возникновения психологических тренингов вследствие развития других групповых методов. Кроме этого выявляется тот факт, что некоторые приемы тренинговых методов использовались еще в 18-ом веке.

Գրականություն

1. Бука Т. Л., Митрофанова М. Л., Психологический тренинг в группе,Учебное пособие. М., 2005, стр 141.
2. Вочков И. В., Основы технологии группового тренинга, М., Изд-во "Ось-89",1999 г.
3. Гришина Н.В., Курт Левин: жизнь и судьба,В кн.: Курт Левин. Разрешение социальных конфликтов, СПб.: Речь, 2000, 408 с.
4. Петровская Л.А., Компетентность в общении. Социально-психологический тренинг, М., изд-во МГУ, 1989г. стр. 5.
5. Рудестам К., Групповая психотерапия. Психокоррекционные группы: теория и практика, М., Прогресс, 1993, 368 с .
6. Семечкин Н.И., Социальная психология: Учебник для вузов Спб: Питер , 2004, с. 293.
7. Форверг М., Альверг Т., Характеристика социально-психологического тренинга поведения, Психологический журнал ,1984 г. Т 5, N 4.
8. Levin K., Field the ory and social science ,N 5, 1964, p. 346.

ՀՏԴ 358.4

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Վ. Բ. Յարամիշյան
նախագծողակոչային և ֆիզիկական պատրաստության ամբիոն

Հոդվածում հասանում քննարկվում է զինվորական ծառայության պայմաններին նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման հիմնախնդիրը: Պաշտպանության բանակի զորամասերում անցկացված սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքների վերլուծության հիման վրա ներկայացվում են ծառայության առաջին 1-4 ամիսներին նորակոչիկների դիրքորոշումները, ծառայության նկատմամբ ունեցած վերաբերմունքի, հոգեբանական հարմարվածության բնութագրերի փոփոխման դինամիկան:

Բանակաշինության գործընթացի հետագա կատարելագործման առումով կարևոր է նորակոչիկ զինծառայողների արագ ու արդյունավետ հարմարումը զինվորական ծառայության պայմաններին: Նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման հիմնախնդիրը նաև ժամանակակից ռազմական հոգեբանության ու սոցիոլոգիայի առջև ծառացած ամենաբարդագույն խնդիրներից է:

Նորակոչիկների հարմարման հիմնախնդիրն օբյեկտիվ է: Այն կարող է ծագել նույնիսկ իդեալականին մոտ պայմաններում, քանի որ հետևանք է միջավայրի պայմանների կտրուկ փոփոխության, ինչն օբյեկտիվորեն տեղ ունի զինվորական ծառայության գործակոչվելու առաջին ամիսներին:

Ըստ հրապարակի վրա առկա տվյալների (1, էջ 197), հարմարման գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երեք փուլերի.

- սկզբնական փուլ՝ տևողությունը մոտ 30 օր, երբ նորակոչիկը գտնվում է իր համար բարենպաստ սոցիալական միջավայրում այլ նորակոչիկների հետ միասին,
- հիմնական փուլ, որն ամենաբարդն է զինվորի համար: Այն սկսվում է նոր ստորաբաժանումում ծառայության նշանակվելիս, երբ նորակոչիկը հայտնվում է ծառայության ավելի մեծ ժամկետ ունեցող զինվորների շրջապատում: Այն տևում է 4-6 ամիս:
- վերջին փուլ՝ տևողությունը՝ 7-12 ամիս:

Ուսումնական ստորաբաժանումներում նորակոչիկները մնում են ոչ թե մեկ-մեկուկես, այլ մոտ վեց ամիս: Ուսումնական հատուկ ստորաբաժանումների ստեղծումն, ընդհանուր սոմամբ, դրականորեն է անդրադարձել նորակոչիկների պատրաստության որակի, զինվորական կարգապահության ու կանոնադրական կարգուկանոնի հաստատման, արտակարգ պատահարների կանխարգելման գործընթացի վրա: Բարելավվել է նաև նորակոչիկների ընդհանուր վերաբերմունքը ծառայության նկատմամբ, քանի որ ուսումնական ստորաբաժանումներում մարտական պատրաստության պարապմունքների արդյունավետ անցկացումը առավել լրիվ չափով է համապատասխանում ծառայության վերաբերյալ նրանց մոտ մինչև զորակոչվելը նախապես ձևավորված պատկերացումներին:

Պաշտպանության բանակի զորամասերում մեր կողմից կատարված հետազոտության նպատակն է նշել ուսումնասիրել բանակային կյանքի պայմաններին նորակոչիկ զինվորների սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացի առանձնահատկություններն ու օրինաչափությունները, գտնել դրանց հետ կապված դժվարությունների հաղթահարման արդյունավետ ուղիներ:

Բանակ զորակոչված զինծառայողների փաստաթղթերի վերլուծության արդյունքում պարզվել է, որ մեր հասարակական կյանքում կատարվող փոփոխությունները ու տնտեսական վիճականում բացասաբար են անդրադառնում զինված ուժերի երիտասարդ համալրման քանակական ու որակական որոշ բնութագրերի վրա: Ընտրատիպ մնալով զորակոչի և, հետևաբար, բանակի թվակազմը բացահայտող բանակային տվյալների հրապարակումից, նշենք, որ ֆիզիկական, հոգեբանական ու ինտելեկտուալ հատկանիշներով լավագույնս նախապատրաստված ու զինված ուժերի ներկայացրած պահանջներին բավարարող տվյալներով օժտված նորակոչիկներով բանակային լիարժեք սերնդափոխությունն ապահովելու իր գործառույթը մեր հասարակությունն առայժմ դժվարությամբ է կատարում: Այսպես, շարային ծառայության համար ոչ պիտանի

նորակոչիկների թիվը կազմում է գորակոչի ընդհանուր թվի մոտ 20 տոկոսը. այդ թվում 3.2 տոկոսը՝ 7.գ. հոդվածով՝ թեթև արտահայտված հոգեկան խանգարումներով. ներոզներով. Որոշակի դժվարություններ են առաջանում նշված կարգի նորակոչիկներին լիարժեք ծառայության մեջ ընդգրկելու տեսակետից, քանի որ. ինքնին հասկանալի է. որ նրանց չի կարելի նշանակել զենքի ու պայթուցիկ նյութերի հետ անմիջական շփում պահանջող պաշտոններում:

Հետազոտությունն անց է կացվել այնպես, որպեսզի հնարավոր լինի ստացված արդյունքները համեմատել հրապարակի վրա առկա ոչ այնքան հարուստ տվյալների հետ: Հարցաթերթիկի կառուցվածքը մշակելիս հաշվի է առնվել այն հանգամանքը, որ նորակոչիկները, հնարավոր է, երբեմն չեն մասնակցել սոցիալ-հոգեբանական հարցումների և նրանց համար առավել հեշտ կլինի պատասխանել «փակ» տիպի, այսինքն պատասխանների պատրաստի տարբերակներ պարունակող հարցաթերթիկի հարցերին: Հետազոտության մեջ ընդգրկել ենք հնարավորին չափ մեծ թվով նորակոչիկներ: Կիրառվել են նաև ստուգողական հարցաշարեր ու թեստեր, որոնք հնարավորություն են տվել հավաստիության բավական բարձր աստիճանով որոշել ծառայության պայմաններին նորակոչիկների հարմարվածության մակարդակը:

Հետազոտությունն անց է կացվել երկու փուլով՝ առանձին-առանձին 2004թ. գարնանային և աշնանային գորակոչերի գինծառայողների հետ համեմատելու համար ստացված տվյալները և գտնելու փոփոխման դինամիկան: Հետազոտության արդյունքները ներկայացված են ստորև:

1.Առողջական վիճակը - դատելով հարցվածների պատասխաններից, նրանց առողջական վիճակը (ավելի ճշգրիտ՝ առողջական վիճակի սուբյեկտիվ ինքնագնահատականը) գորակոչից-գորակոչ նկատելիորեն վատթարանում է*: Այսպես, ոչ մի բողոք առողջական վիճակից չի ներկայացրել հարցվածների 62.6 %-ը (79.5 %), «ոչինչ, մի կերպ կդիմանամ»՝ պատասխանել է 34.8 %-ը (19.3 %) և «վատ, դժվար թե դիմանամ»՝ 2.4 %-ը (1.2 %): Բոլոր դեպքերում, իրենց առողջական վիճակից բացարձակ դժգոհություն արտահայտած նորակոչիկների գրեթե կրկնակի աճած քանակը՝ 1.2%-ից մինչև 2.4 %. վկայում է, որ գորամասերում կանխատեսելի են հիմանախնդիրներ՝ նորակոչիկների առողջության պահպանման հարցում:

2.Ծագումը - բնականաբար, նորակոչիկների սոցիալական ծագումը, կենս տարվա կտրվածքով, որևէ էական փոփոխության չի կարող ենթարկվել:Գարնանային և աշնանային գորակոչերի ուսումնասիրման արդյունքները մանրակրկիտ համեմատելով՝ կարելի է միայն պատկերացում կազմել իրավիճակի փոփոխության միտումների մասին: Ինչպես գարնանը, աշնանային գորակոչի հիմնական «մատակարարողը» հասարակության գյուղական և քաղաքային աշխատավորական խավն է, տարբերությամբ. որ աշնան գորակոչի հարցաթերթիկում ավելացվել է «որևէ գբաղմունք չունեն» պատասխանի տարբերակը: Նկատելիորեն նվազել է իրենց ծնողներին «մտավորական» համարող նորակոչիկների քանակը՝ 5.1 %-ից իջնելով՝ 3.4 %-ի և ավելացել է նրանց թիվը, ովքեր իրենց ծնողներին անվանել են «գործարարներ»՝ 6 % (3.65%) և «զինվորականներ»՝ 2 % (1.3%): Ընդհանուր առմամբ, գյուղական և քաղաքային աշխատավորների ընտանիքներից գորակոչվել են նորակոչիկների 88.7 %-ը՝ գարնանային գորակոչի 90 %-ի դիմաց:

3.Ընտանիքի սոցիալական վիճակը գնահատում են - «շատ լավ»՝ հարցվածների միայն 3 %-ը, «լավ»՝ 22.4 %-ը և «միջին»՝ 64.6 %-ը: Հարցվածների 9.8 %-ը ընտանիքի սոցիալական վիճակը գնահատել է «վատ» կամ «շատ վատ»՝ դրանով իսկ գործունեության համապատասխան ուղղություն նախանշելով ստորաբաժանումների հրամանատարների և նրանց՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալների համար:

4.Ինչպիսի՞ն եք նոել երեխա ժամանակ - հարցն առաջադրվել է հիմնականում ինստիտուտների տված պատասխանների անկեղծության աստիճանը որոշելու նպատակով: Բոլոր մարդիկ միմյանցից տարբերվում են անկրկնելի անհատական հատկանիշներով՝ հույզերի արտահայտվածության աստիճանով. վարքի ակտիվությամբ, հոգեկան կայունությամբ և այլն: Ընդունված է խատնվածքին բնորոշ անհատական հատկանիշները դասակարգել չորս հիմնական տիպերում՝ սանգվինիկ (ուժեղ. ակտիվ). խոլերիկ (թռնկվող.

* Այստեղ և հետագայում առաջինը նշված է 2004թ. աշնան և երկրորդը (փակագծում) գարնան տվյալները:

անկայուն), ֆլեգմատիկ (ուժեղ, դանդաղաշարժ) և մելանխոլիկ (մելամաղձոտ, ինքնամփոփ): Եթե նորակոչիկներն անկեղծ են իրենց պատասխաններում, ապա նրանց ներկայացրած տարբերակներում այս կամ այն չափով պետք է արտացոլվեն խառնվածքի չորս տիպերին բնորոշ առանձնահատկությունները: Զարմանալի է, որ բնականից «մաքուր» խառնվածքի տիպեր չեն լինում կամ գրեթե չեն լինում և այն նորակոչիկները, ովքեր, այսպես կոչված «ուժեղ» և «թույլ» հատկանիշների համակցություններ ունեն, բնականաբար, ձգտելու են իրենց պատասխաններում, նախ և առաջ, ցուցադրել ուժեղ կողմերը և խնամքով թաքցնել թույլ կողմերը: Ընդունելով, որ չորս տիպերից հնարավոր է ստանալ առավելագույնը տասներկու համակցություններ (1-2, 2-1, 1-3, 3-1,1-4, 4-1, 2-3, 3-2, 2-4, 4-2, 3-4, 4-3) և դրան ավելացնելով համեմատաբար «մաքուր» չորս տիպերը՝ ընդամենը կունենանք տասնվեց տարբերակներ, որոնցում առաջինը նշված է գերակշռող տիպը: Բնական է, որ որոշ համակցություններ առավել հավանական են, ինչպես, օրինակ, սանգվինիկ-խոլերիկ, ֆլեգմատիկ-մելանխոլիկ, իսկ որոշները՝ քիչ հավանական, օրինակ՝ մելանխոլիկ-սանգվինիկ, ֆլեգմատիկ-խոլերիկ, այսինքն՝ նորակոչիկներից պետք է ակնկալել այնպիսի պատասխաններ, որոնցում տարբերակների քանակը կտատանվեն 100:16 = 6.25 (%)-ի բազմապատիկ թվերի սահմաններում: Բացի այդ, մեր կողմից առաջարկված պատասխանների տարբերակներն էլ ճշգրիտ չէին կարող բնորոշել խառնվածքի տիպերը, ինչը հիմք է տալիս թույլատրելի համարելու մինչև 2-3 % շեղումները: Հարցման արդյունքում ստացվել են հետևյալ պատասխանները.-«ծանոթ, դինջ երեխա» - 26.6 % (մոտ 4 համակցություն), «աշխույժ, ուրախ երեխա» - 52 % (մոտ 8), «չար, ներվային երեխա» - 14.2% (մոտ 3), «լռկոտ երեխա» - 7.4% (մոտ 1): Ստացված արդյունքներից կարելի է ենթադրել, որ նորակոչիկներն իրենց պատասխաններում բավականաչափ ազնիվ են եղել, որպեսզի ապահովվի հարցման օբյեկտիվությունը (հարցաթերթիկի վալիդություն) և նրա հիման վրա կատարվեն եզրակացություններ:

5.Պատրա՞ստ եք դիմանալու ծնողներից երկարաւոն բաժանմանը - «այո, ինչ էլ լինի, կդիմանամ»՝ վստահ է հարցվածների 76.9 %-ը (85%): Կարոտին չդիմանալու պատճառով փախչելու կամ ինքնախեղում կատարելու հակված նորակոչիկների քանակը մնացել է. գրեթե նույն մակարդակին՝ 1.1% (1.5 %), սակայն, դրա հետ մեկտեղ, շեղտակի աճել է նրանց թիվը, ովքեր պատասխանել են՝ «չգիտեմ, չեմ փորձել»՝ 22 % (13.5 %): Մեր կարծիքով, անորոշ պատասխանի տակ թաքնված է որոշակի անվստահություն սեփական անձի նկատմամբ՝ բանակում իրեն դրսևորելու առումով, որն էլ, իր հերթին, պայմանավորված է բանակային առօրյայի վերաբերյալ անբավարար տեղեկացվածությամբ: Մյուս կողմից, կարելի է ենթադրել, որ չկողմնորոշված երիտասարդության մեծ մասը երբեք ծնողներից տնական ժամանակով բաժանված չեն եղել և, իսկապես, ծանոթ չեն իրենց իսկ հնարավորություններին: Այստեղից կարելի է եզրակացնել, որ ավագ դպրոցի 9-րդ և 10-րդ դասարանների տղաների համար ամառային արձակուրդների օրերին ռազմական հավաքներ անցկացնելու պրակտիկան, որն այնքան հաջողությամբ կիրառվում էր խորհրդային կրթական համակարգում, վերականգնելու դեպքում, անհրաժեշտ կոփվածություն, դիմացկունություն, ծնողներից ու հարազատներից տնական բաժանման դեպքում հարմարվելու փորձ կտա երիտասարդ տղաներին, ովքեր պատրաստվում են բանակում ծառայելու:

6.Ի՞նչն է գրավում ծառայության մեջ - «Տղամարդ դառնալու հնարավորությունը»՝ 62.1% (66.5 %), «լավ աշխատանք ստանալու հեռանկարը»՝ 17.1 % (14.2 %), «զինվորական կարգուկանոնը»՝ 16.2 % (14.8 %) և «ոչինչ չի գրավում»՝ 4.7 % (4.5 %): Նկատենք, որ նորակոչիկների մոտ զինվորական ծառայությունն ավելի ու ավելի շատ դիտվում է որպես հեռագա կարիերայի համար անհրաժեշտ նախապայման, ավելի գրավիչ է դառնում զինվորական կարգուկանոնի շնորհիվ, իսկ «դժգոհ» զանգվածը մնում է հաստատուն մակարդակի վրա (այս հարցում՝ 4.5-4.7 %): Զինվորական ծառայությանը դժվար հարմարվող 5-8% քանակություն է նշվում նաև հրատարակված այլ հետազոտություններում (1.էջ 197):

7.Պատրա՞ստ եք անհրաժեշտության դեպքում մասնակցելու մարտական գործողություններին - անվերապահորեն մասնակցողների թիվը նկատելի նվազել է՝ 59.2 % (71.2 %), նույնչափ աճել է նրանց թիվը, ովքեր կմասնակցեն, բայց «մի քիչ վախենում են»՝ 23.9% (18.6 %), աննշան ավելացել է նրանց թիվը, ովքեր իրենց հասարում են անպատրաստ՝ մարտական գործողություններին մասնակցելու համար՝ 3.9 % (2.4 %) և զգալիորեն աճել է

նրանց թիվը, ովքեր որոշակիորեն չեն կողմնորոշվել՝ 13.2 % (7.8 %): Կարծում ենք, որ այս ուղղությամբ անելիքներ են «կուտակվում» զորամասերում և ստորաբաժանումներում՝ չկողմնորոշված զանգվածը ցանկալի ուղղությամբ ուղղորդելու և «մի քիչ վախեցողների» մարտական ոգին բարձրացնելու համար: Պետք է հաշվի առնել, որ հարցն առաջադրվել է մի պատեգորիայի, ովքեր ինչպես հարկն է դեռևս շփում չեն ունեցել ինքնաձիգի ու ռազմական տեխնիկայի հետ, չեն զգացել վառոդի հոտը, զինվորական կոլեկտիվի համախմբող ուժը, մարտական ընկերակցությունը և այլն: Նրանց զգալի մասը դեռևս անհաղորդ են մեր բանակի անցած մարտական ուղուն, մարտական հնարավորություններին, զորամասի ավանդույթներին: Բանակում իրականացվող նպատակային դաստիարակչական միջոցառումների շնորհիվ այդ բացը հետզհետ կլցվի:

8.Ո՞վ առաջինը օգնության կհասնի կռվի ժամանակ - հարցվածների մոտ 30% -ի կողմից հրամանատարներին ցուցաբերված վստահությունը ապայակազմի համար լավ նախադրյալներ է ստեղծում հետագայում նրանց գիտրորոշման վրա հենվելու և մյուս, անվստահ նորակոչիկների մոտ նույնպես վստահություն ձևոր բերելու համար: Նորակոչիկների մոտ 67 %-ը պատասխանել է, որ հույսը դնում է մարտական ընկերների վրա, իսկ 3,4 %-ը՝ պատասխանել է՝ «ոչ մեկը»:

9.Ի՞նչ եք համարում ձեզ ավելի հարազատ - ըստ էության, հարցին տրված պատասխանները պետք է, որ հաստատեն նախորդ հարցի պատասխանները: Իսկապես, հարցվածների 73,9 %-ն ավելի հարազատ են համարել իրենց հետ զորակոչված ընկերներին, 11,4 %-ը՝ հին ծառայողներին, 10 %-ը՝ հրամանատարներին և 4,4 %-ը պատասխանել է՝ «ոչ ոք, ազատվեմ, գնամ տուն»:

10.Ի՞նչ գնահատականի են արժանի ծառայությունից խուսափողները — Ամենախիստ գնահատականը՝ «հայրենիքի դավաճաններ», տվել է հարցվածների 39,8 %-ը (47,2 %), անտարբեր կեցվածք են ընդունել հարցվածների 36,1%-ը (31,1 %), նրանց «վախկոտներ» է համարել ընդհանուր թվի 21,8 %-ը (19,9 %) և «լավ տղերք»՝ 2,3 % (1,8 %): Կարծում ենք, որ վերաբերմունքի նկատելի «լիբերալացումը» պայմանավորված է հասարակական կարծիքի խայտաբղետությամբ և պետության կողմից այլընտրանքային ծառայության օրինականացմամբ: Նորակոչիկները ներքուստ ավելի ու ավելի բնական են համարում պարտադիր ժամկետային ծառայությունը այլ բնույթի գործունեությամբ փոխարինելու երևույթը:

11.Ի՞նչն է անհանգստացնում բանակում - նորակոչիկներին հուզող մտավախությունները դասավորվել են հետևյալ կարգով.

- նյութական միջոցների պակասը – 42, 7% (49,8%),
- զինվորի անպաշտպան լինելը – 24,8% (26%),
- սպաների վատ վերաբերմունքը - 8% (10,2%),
- «հեղինակավոր» զինվորների առկայությունը – 6,4% (13,9%),
- ոչինչ չի անհանգստացնում – 18,1 % (տարբերակը չէր առաջարկվել):

Ըստ երևույթին, ցուցանիշների համամասնական վատթարացումը պայմանավորված է աշնանային զորակոչին առաջարկված «ոչինչ չի անհանգստացնում» տարբերակի ավելացումով, որը (տարբերակը), համադրատասխան հարաբերակցությամբ ձայներ է «խլել» մյուս տարբերակներից, բացառությամբ, թերևս, «հեղինակավոր» զինվորներին վերաբերվող կետից, որտեղ արձանագրվել է ավելի բան կրկնակի նվազում: Համոզված ենք, որ այդ Պաշտպանության բանակի զորամասերում իրականացված արատավոր երևույթների դեմ պայքարի ու կանխարգելիչ միջոցառումների ուղղակի դրական արդյունքն է:

12.Մինչև զորակոչվելն ի՞նչ զենքից եր կրակել – հարցման արդյունքները զրնթե կրկնել են գարնանը ստացված տվյալներն ու արված եզրակացությունը, այն է՝ նորակոչիկների միայն 31,5 % է (34,4 %) գործնականում ծանոթ ինքնաձիգին, 23,6%-ը (24,9 %) կրակել են որսորդական հրացանից, 10,7 %-ը (5,7 %) այլ զենքերից և 34,2 % (35 %) ոչ մի զենքից երբևէ չի կրակել: Համոզված կարելի է պնդել, որ ինքնաձիգի հետ «դու»-ով ծանոթ լինելը կարևոր հոգեբանական նախապայման կարող է լինել նորակոչիկների մոտ զինվորական ծառայության նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու գործում: Մինչդեռ յուրաքանչյուր 3-ից 1-ը ոչ մի զենքից և 3-ից 2-ը՝ ինքնաձիգից չի կրակել մինչև զորակոչվելը, ինչը հոգեբանական անհարմարավետության, սենիական ուժերի նկատմամբ անվստահության և վախվորածության զգացումների պատճառ է դառնում բանակ զորակոչվելու նախօրյակին և, ընդհակառակը, ինքնաձիգի հետ արդեն ծանոթ նորակոչիկների մոտ բաձր է լինում հարմարվողական հնարավորությունները:

13.Եթե ծառայությունը լիներ կամավոր, ապա, ըստ հարցման արդյունքների, նորակոչիկների 40,8 %-ը (51,8 %) կամավոր կծառայեր ազգային բանակում, 66,3 % (42,7 %) պատրաստ են իրենց պարտքը կատարել միայն պատերազմի դեպքում, և 12,9 %-ը (5,5 %) ոչ մի դեպքում չէին ծառայի: Այս արդյունքները ուղղակիորեն հաստատում են արդեն կատարած ենթադրությունն այն մասին, որ մեր հասարակությունում ժողովրդավարական գործընթացների խորացումը, այլակարծության և բազմակարծության տարածումը, այլընտրանքային զինվորական ծառայության օրինականացումը, եվրոպական արժեքների ներթափանցումը զգացնել են տալիս նաև զինվորական ծառայության նկատմամբ երիտասարդության վերաբերմունքի փոփոխության հարցում: Պարտադիր զինվորական ծառայության անհրաժեշտության զգացումը զորակոչից-զորակոչ նվազում է:

14.Ի՞նչ կանեք, եթե բանակում որևէ մեկը Ձեզ վիրավորանք հասցնի - «անմիջապես կպատասխանեմ» ագրեսիվ դիրքորոշում է ընդունել 28,1-%-ը, «արագ կմոռանամ վիրավորանքը» խաղաղասիրական-ներողամիտ դիրք է գրավել 35,7 %-ը, 10 %-ը կմնա հիշաչար՝ երբեք չմոռանալով վիրավորանքը և 26,3 %-ը դեռևս հստակ պատկերացում չունի, թե ինչ պետք է անել նման դարձվածում: Վերլուծելով այս թվերը՝ կարելի է պատկերացում կազմել, թե միջանձնային փոխհարաբերությունների կարգավորման առումով աշխատանքի ինչ ծավալ է նախանշվում բոլոր կարգի հրամանատարների համար: Այսպես, օրինակ, եթե 28 % ակնհայտ ագրեսիվ դիրքորոշում ունենցող նորակոչիկների քանակին ավելացնենք ևս 10 % »հիշաչար« նորակոչիկների քանակը և չկողմնորոշված նորակոչիկների 26,3 %-ից նաև նրանց, ովքեր համապատասխան կանխարգելիչ աշխատանքների ոչ արդյունավետ կազմակերպման դեպքում նույնպես կլրացնեն պոտենցիալ «կոնֆլիկտայինների» շարքերը, արդյունքում կստանանք, որ երկուսից մեկը ագրեսիվ կեցվածք ունի:

15.Իսկ եթե դա լինի հրամանատա՞ր, - նորակոչիկները քիչ ավելի զգուշավոր կեցվածք են դրսևորել հրամանատարների կողմից հասցված վիրավորանքներին հակազդելու հարցում. նրանց 39,3 %-ը պատրաստ է համբերությամբ տանելու վիրավորանքը (համեմատելի է նախորդ հարցի 35,7% համբերատար նորակոչիկների թվի հետ), 50,9 %-ը ընտրել է «վնասդրեմ, որ թաղարավարի լինի» տարբերակը և 9,9 %-ը, հավատարիմ մնալով իրենց իրավունքները զանկացած իրավիճակում պաշտպանելու մտադրությանը, պատասխանել է, որ կպատժի ծառայությունից հետո: Կարծում ենք, որ եթե նորակոչիկը հայտարարում է, որ անվայել արարքի համար պատրաստ է «պատժել» հրամանատարին (թեկուզ ծառայությունից հետո), ուրեմն՝ ստորաբաժանումներում կանխատեսելի են զժտություններ նաև «պետ-ենթակա» փոխհարաբերությունների՝ հրավիճակների 1:10 հարաբերակցությամբ:

16.Առաջին տպավորությունը բանակից. - ընդհանուր առմամբ, դրական տպավորություն են ստացել նորակոչիկների 92,2 %-ը (93,3 %), այդ թվում՝ լավ է՝ 44,8 % (50,1 %) և ինձ բավարարում է՝ 47,4 % (43,2 %): Անհշան աճել է նրանց քանակը, ովքեր ստացել են առաջին վատ տպավորություններ՝ զարնան 6,7 % ցուցանիշից մինչև աշնան 7,8 %-ը:

17. Ի՞նչ զգացումներով եք այժմ ծառայում բանակում - զինվորական ծառայության վարկանիշը (престижность) այս հարցում զգալի անկում է ապրել: Հարցման արդյունքները հաստատում են մեր ենթադրություններն այն մասին (հարց 15), եվրոպական «բաց պատուհաններն», այնուամենայնիվ, իրենց ազդեցությունն են ունեցել ծառայության նկատմամբ նորակոչիկների վերաբերմունքի ձևավորման և գաղափարական արժեքների փոփոխության գործընթացի վրա: Այսպես, զինվորական ծառայությունից հոգեկան բավարարվածություն են ստանում և ծառայում են հաճույքով նորակոչիկների 64,8 %-ը, ինչը զարնան ցուցանիշներից ցածր է. ամբողջ երկու տասնյակ տոկոսով (զարնան ցուցանիշը՝ 84,1 %), դժգոհությամբ ծառայողների քանակը 2,3 %-ից աճել է մինչև 5,6 % և նրանց քանակն է նշանակալիորեն աճել, ովքեր պատասխանել են «ուրիշ ճար չկա» 13,6 %-ից հասնելով մինչև 29,6 %-ի: Կարելի է պատկերացնել, թե ինչ ոգևորությամբ կկատարեն իրենց ծառայողական պարտականությունները նորակոչիկների 35,2 %-ը, ովքեր ծառայության են ներկայացել դժգոհությամբ կամ «ճարահատյալ»:

18. Որևէ էական փոփոխություն չի կրել նորակոչիկների կարծիքն այն մասին, թե *կհաղթե՞նք, արդյոք, ադրբեջանցիների հետ հավանական պատերազմում՝* բացի, թերևս, հաղթանակի նկատմամբ հավատի որոշակի անկումից: Հաղթանակի նկատմամբ հավատը հարցվածների 80,7 %-ից նվազել է մինչև 78 %-ը, հոռետեսների քանակը մնացել է գրեթե նույն

մակարդակին՝ 0,4 % (0,5 %) և համապատասխանաբար աճել է նրանց թիվը, ովքեր որոշակի կարծիք չեն կարողացել հայտնել՝ 21,6 % (18,6 %):

19.Ինչպե՞ս եք գնահատում բանակում մարդասիրությունը - այս հարցում նույնպես նորակոչիկների կարծիքը համարյա անփոփոխ է: Մարդասիրությունն անելը որպես զինվորի պարտավորություն են ընդունել հարցվածների 81,6 %-ը (80,9 %), 16,1 %-ը (18,1 %) գտնում են, որ դրա համար հատուկ մարդիկ պետք է նշանակվեն և ընդամենը 1,1 %-ը (1,0 %) դա համարում է «ամոթալի գործ»:

20.«Կարելի է ասել, որ հարմարվել եք զինվորական ծառայությանը» ընդհանրացնող հարցին տված պատասխաններում նկատելի է նորակոչիկների մոտ ձևավորված վերաբերմունքի «ազատականացումը»: Հարմարվողականության հարցում ոչ մի հիմնախնդիր չեն տեսնում հարցվածների 59,5%-ը (63,5 %, նվազում 4 %-ով), կարոտը որպես հարմարվողականությանը խանգարող հանգամանք են նշել 35,4 %-ը (31,3 %, աճ 4 %-ով), դժվարությամբ են հարմարվում 3,7 %-ը (4,7%, նվազում 1 %-ով) և չեն կարողանում հարմարվել 1,4 %-ը (0,6 %, աճ 0,8 %-ով): Այսպիսով, կարելի է ընդհանրացնել, որ դժվար են հարմարվում նորակոչիկների 5.1%-5.5%-ը:

Ինքնազգացողության, ակտիվության և տրամադրության օպերատիվ գնահատման հատուկ մեթոդիկայով (5) (թեսթ САН - Самочувствие, Активность, Настроение) հետազոտվել են թվով մոտ 300 նորակոչիկներ: Ստացված արդյունքները վկայում են, որ ծառայության նախնական շրջանում նորակոչիկների տրամադրության, ինքնազգացողության և ակտիվության անխուսափելի անկումները ծառայության առաջին ամսվա ընթացքում հիմնականում հաղթահարվում են և ձեռք է բերվում նորմային մոտ մակարդակ: Այսպես, բոլոր երեք հատկանիշներով, 7 բալանոց համակարգով նորակոչիկների կողմից ինքնազգահատման պարագայում, նորակոչիկներն ունեցել են բավականին բարձր ինքնազգացողության 5.47 ցուցանիշ /նորման ըստ թեսթի՝ 5.0-ից 5.5/, ակտիվության 5.1 մակարդակ /նորման ըստ թեսթի՝ 4.6-ից 5.3/ և տրամադրության 5.24 մակարդակ / նորման ըստ թեսթի՝ 4.9-ից 5.5/: Այսպիսով, ըստ հետազոտության արդյունքների, կարելի է հաստատել, որ նորակոչիկների մոտ ինքնազգացողության, տրամադրության և ակտիվության կորուստները, որոնք բնորոշ են զորակոչի նախնական շրջանի համար, այժմ արդեն հիմնականում հաղթահարված են և ձեռք է բերվել նորմայում տեղավորվող միջին մակարդակ: Տարբեր զորամասերում անց է կացվել սոցիալ-հոգեբանական հետազոտություն «Լ. Ռոջերսի և Ռ. Դայմոնդի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման մեթոդիկա» (3. էջ 66): Հարցվողներին առաջադրվել են արտահայտություններ, որոնք վերաբերում են զինվորների ապրելակերպին, մտքերին, սովորություններին, վարքագծին: Հարցվողները պետք է 0-ից մինչև 6-ը (7 բալանոց համակարգով) գնահատական նշանակեն այն պնդումներին, որոնք առավել լրիվ են համապատասխանում իրենց անձը բնորոշող հատկանիշներին: Թեսթի հատուկ բանալու օգնությամբ, մոտ 90 տոկոս հավատիության աստիճանով, հնարավոր է որոշել նորակոչիկների հարմարվածության, հուզական բարեհարմարության, ինքնազահատման աստիճանը, համակրանքն այլ մարդկանց նկատմամբ, լիցենզության հակվածությունը և այլ հատկանիշներ: Ուստի սույն հոդվածում ներկայացված են միայն ընդհանրացված արդյունքները՝ յուրաքանչյուր զորամասից պատահական ընտրությամբ 10-ական տվյալով:

հ/հ	Զորամասը	Նորակոչիկների հարմարվածության ցուցանիշները										Միջին ցուցանիշը
		1	2	3	4	5	6	7	8	9	10	
1.	N	58.6	65.5	65.7	60.5	79.5	61.2	68.9	61.4	70	64	65.5
2.	N	69.6	70	58.6	64.4	52.1	63.5	64.8	58.6	61.3	58.3	62.1
3.	N	66.1	71.6	57.7	69.8	54.1	67.3	56.3	57.6	61.2	70	63.1
4.	N	64	69.7	59.3	71	54.5	56.6	64.4	62.7	69	71.2	64.2
5.	N	61.6	75	74	62	88	84	68	73	77	70	73..3
6.	N	74.6	67.4	56.2	53.1	56.7	56.3	53.4	47.7	53.8	55.8	57.5
7.	N	75.4	86	75.5	74.7	67.7	66.9	62.5	63.6	60.1	72.6	67.5
8.	N	64.5	77.5	62.6	60.3	57.5	59.8	60	57.3	69.1	65.4	63.4
ՄԻՋԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԶՈՐԱՄԱՍԻՄ 64.6												

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ հետազոտված զորամասերում զինվորական ծառայության 1-4 ամիս ժամկետ ունեցող նորակոչիկների՝ բանակային պայմաններին հարմարվածության աստիճանը տատանվում է 57.5-ից մինչև 73.3 տոկոսի սահմաններում (միջին ցուցանիշը՝ մոտ 65 տոկոս): Անհրաժեշտ է չմոռանալ, որ հարմարումը անընդհատ-շարունակական գործընթաց է և երբեք բացարձակ ցուցանիշի հասնել չի կարող:

Ամփոփում

Բանակաշինության հետագա կատարելագործման գործընթացում բացառիկ կարևոր նշանակություն ունի զինվորական ծառայությանը նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման հիմնախնդրի արդյունավետ լուծումը: Այն նաև ռազմական հոգեբանության ու սոցիոլոգիայի առաջնահերթ խնդիրներից է: Պաշտպանության բանակի զորամասերում անցկացված հետազոտությունների արդյունքում առանձնացված են այդ կարևորագույն հիմնախնդրի լուծման ուղղությամբ իրականացվող մի շարք միջոցառումներ, բացահայտված է նորակոչիկների դիրքորոշումների, կողմնորոշումների, ծառայության նկատմամբ ունեցած վերաբերմունքի փոփոխման դինամիկան՝ 2004թ. գարնան և աշնան նորակոչիկների օրինակով: Հետազոտությունն անց է կացվել ինչպես հեղինակի կողմից մշակված հարցարթերթիկի, այնպես էլ կիրառական հոգեբանության տրամադրության տակ գտնվող կոնկրետ մեթոդիկաների, մասնավորապես «Ինքնազգացողության, ակտիվության, տրամադրության» գնահատման և «Դայմոնդ-Ռոջերսի սոցիալ-հոգեբանական ադապտացիայի ախտորոշման» մեթոդիկաների կիրառմամբ: Հաստատված է 2-4 ամիս ծառայած նորակոչիկների հարմարվածության միջին 65 տոկոս ցուցանիշը:

Резюме

В деле дальнейшего совершенствования военного строительства исключительно важное значение имеет решение проблемы социально-психологической адаптации молодого пополнения к условиям военной службы. Решение данной проблемы является одним из первоочередных задач, решаемых военной психологией и социологией. В результате исследований, проведенных в частях Армии Обороны НКР, выделены некоторые мероприятия, направленные на решение этой важнейшей проблемы, раскрыты особенности позиций и ценностных установок, динамика изменений отношения новобранцев к военной службе, на примере весенней и осенней призывов 2004 года. Исследования проводились с применением специального вопросника, разработанного автором, а также конкретных методик, имеющихся в распоряжении прикладной психологии, в частности, теста САН- Самочувствие, Активность, Настроение и методики Диагностики социально-психологической адаптации Даймонда и Роджерса. Установлена 65- процентная средняя величина адаптации военнослужащих, имеющих стаж службы от двух до четырех месяцев.

Գրականություն

1. Հայրենիք և ծառայություն, Եր., Ոսկան Երևանցի, 2001, 576 էջ:
2. Զինվորական կարգապահության ղեկավարման համակարգը, հիմնախնդիրները և արդյունավետության բարձրացման ուղիները, մեթոդական ձեռնարկ, Եր., Ոսկան Երևանցի, 2002, 152 էջ:
3. Ս.Զ. Արզումանյան և ուրիշ. կիրառական հոգեբանության պրակտիկում. Եր. Զանգակ-97. 2002թ. 392 էջ:
4. Ռազմական սոցիոլոգիա, ուս. նյութերի ժողովածու, Լ. Հարությունյանի խմբ. Եր. ԵրՊՀ հրատարակչություն, 2005թ. 232 էջ:
5. Վ.Բ.Յարամիշյան, Գաղափարա-դաստիարակչական պատրաստություն, մեթոդական ձեռնարկ, Ստեփ., «Ազատ Արցախ», 2004թ. 188 էջ:
6. Դ. Զամալյան և ուրիշ. Ռազմական հոգեբանության խնդիրները, ձեռնարկ, Եր., Զանգակ-97, 192 էջ:
7. Военная психология и педагогика, Учебное пособие, М., “Совершенство”, 1998, 384 с.
8. Справочник офицера-воспитателя, М., За право военнослужащих, 2003, 368 с.
9. Рабочая книга психолога внутренних войск, под редакцией С. Ф. Кавуна, М., “Совершенство”, 1997г, 226 с.

УДК 06.063

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ НАУЧНЫХ ИССЛЕДОВАНИЙ В ОБЛАСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ ИНФОРМАЦИОННЫХ И КОММУНИКАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В СИСТЕМЕ НЕПРЕРЫВНОГО ОБРАЗОВАНИЯ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ

И.В.Роберт

академик-секретарь Отделения профессионального образования Российской академии образования, директор Института информатизации образования РАО, чл.-корр. РАО, д.п.н., профессор

Общество начала третьего тысячелетия характеризуется рядом особенностей, к которым следует прежде всего отнести возросшую значимость интеллектуального труда, ориентированного на использование информационного ресурса глобального масштаба, потребность в осуществлении оперативной коммуникации между отдельными специалистами, группами или сообществами людей, стремление к взаимному приятию и уважению культур различных народов, необходимость решения глобальных экологических, технологических и производственных проблем совместными усилиями специалистов различных стран или общественных организаций.

Эти особенности современного социума характеризуются процессом информатизации. В настоящее время уже установилось определенное понимание того, что ***информатизация общества*** – это глобальный социальный процесс, особенность которого состоит в том, что доминирующим видом деятельности в сфере общественного производства является сбор, обработка, передача, использование, продуцирование информации, осуществляемые на основе современных средств микропроцессорной и вычислительной техники, а также разнообразных средств информационного взаимодействия и обмена. Информатизация общества обеспечивает: активное использование постоянно расширяющегося интеллектуального потенциала общества, сконцентрированного в печатном фонде, в научной, производственной и других видах деятельности его членов; интеграцию информационных технологий с научными и производственными; интеллектуализацию трудовой деятельности; высокий уровень информационного обслуживания, доступность любого члена общества к источникам достоверной информации; визуализацию представляемой информации; существенность используемых данных. Эти процессы влекут за собой необходимость в постоянном повышении профессионального уровня как отдельного человека, так и групп специалистов или целых коллективов. Более того, они побуждают каждого индивида к определенной активизации его жизнедеятельности в области владения средствами информационных и коммуникационных технологий (ИКТ), которые выступают, прежде всего, в качестве поддержки интеллектуальной деятельности.

При этом под ***средствами ИКТ*** будем понимать программные, программно-аппаратные и технические средства и устройства, функционирующие на базе микропроцессорной, вычислительной техники, а также современных средств и систем транслирования информации, информационного обмена, обеспечивающие: операции по сбору, накоплению, хранению, обработке, передаче, продуцированию информации; доступ к информационным ресурсам компьютерных сетей (в том числе и глобальной).

К средствам ИКТ в технико-технологическом аспекте относятся: ЭВМ, ПЭВМ; комплекты терминального оборудования для ЭВМ всех классов; локальные вычислительные сети, современные средства связи всех видов, обеспечивающие информационное взаимодействие пользователей как на локальном, так и глобальном уровнях; устройства ввода-вывода информации всех видов; средства и устройства манипулирования и транслирования текстовой, графической, аудиовизуальной информацией; средства архивного хранения информации; устройства для преобразования данных из графической или звуковой

форм представления данных в цифровую и обратно; системы компьютерной графики; системы представления и использования аудиовизуальной информации; программные системы и комплексы (языки программирования, трансляторы, компиляторы, операционные системы, инструментальные пакеты разработки прикладного программного обеспечения, в том числе и реализованного в сетях, пакеты прикладных программ и пр.); системы искусственного интеллекта; инструментальные и прикладные средства и системы, реализующие потенциал технологий Мультимедиа, Гипертекст, Гипермедиа, Телекоммуникации, «Виртуальная реальность», а также Геоинформационной технологии.

В отечественных научных разработках реализацией возможностей средств ИКТ в сфере образования, в том числе профессионального, занимается отрасль педагогической науки - ***информатизация образования***, которая рассматривается как целенаправленно организованный процесс обеспечения сферы образования методологией, технологией и практикой разработки и оптимального использования средств ИКТ, используемых в комфортных и здоровьесберегающих условиях, ориентированный на реализацию целей обучения, развития индивида, включающий в себя подсистемы обучения и воспитания.

Вместе с тем, информатизация образования рассматривается в настоящее время как новая область педагогического знания, которая ориентирована на обеспечение сферы образования методологией, технологией и практикой решения следующих проблем и задач:

- научно-педагогические, методические, нормативно-технологические и технические предпосылки развития образования в условиях массовой коммуникации и глобализации современного информационного общества;
- методологическая база отбора содержания образования, разработки методов и организационных форм обучения, воспитания, соответствующих задачам развития личности обучаемого в современных условиях информационного общества массовой коммуникации и глобализации;
- методологическое обоснование и разработка моделей инновационных и развитие существующих педагогических технологий применения средств ИКТ в различных звеньях образования, в том числе форм, методов и средств обучения;
- создание методических систем обучения, ориентированных на развитие интеллектуального потенциала обучаемого, на формирование умений самостоятельно приобретать знания, осуществлять деятельность по сбору, обработке, передаче, хранению информационного ресурса, по продуцированию информации;
- разработка исследовательских, демонстрационных прототипов электронных средств образовательного назначения, в том числе программных инструментальных средств и систем;
- использование распределенного информационного ресурса Internet и разработка технологий информационного взаимодействия образовательного назначения на базе глобальных телекоммуникаций;
- продуцирование педагогических приложений в сетях на базе потенциала распределенного информационного ресурса открытых образовательных систем телекоммуникационного доступа;
- разработка средств и систем автоматизации процессов обработки учебного исследовательского, демонстрационного, лабораторного эксперимента как реального, так и "виртуального";
- создание и применение средств автоматизации для психолого-педагогических тестирующих, диагностирующих методик контроля и оценки уровня знаний обучаемых, их продвижения в учении, установления интеллектуального потенциала обучающегося;
- реализация возможностей компьютерной психолого-педагогической диагностики при определения интеллектуального уровня и развития обучающегося;
- осуществление оценки средств вычислительной техники, информационных и коммуникационных технологий, используемых в сфере образования;

- совершенствование механизмов управления системой образования на основе использования автоматизированных баз и банков данных научно-педагогической информации, информационно-методических материалов, телекоммуникационных сетей, а также совершенствование процессов информатизации управления образовательным учреждением (системой образовательных учреждений).

В настоящее время наметились основные направления научных исследований в области информатизации образования, описание которых занимает существенное место в современных отечественных научно-педагогических исследованиях. Кратко остановимся на раскрытии их содержания.

1. Развитие теории образовательных технологий на базе средств информатизации и коммуникации предполагает проведение фундаментальных исследований педагогической науки в области научных основ развития профессионального образования в условиях информатизации, массовой коммуникации и глобализации современного общества. В исследованиях рассматриваются понятийно-философские (в области процессов информатизации, коммуникации, автоматизации в сфере образования), научно-педагогические, физиолого-гигиенические, инженерно-программистские, эргономические, социально-экономические аспекты современного образования, исследуются его общие закономерности и особенности в связи с использованием средств ИКТ, разрабатываются также концептуальные модели и проектируются исследовательские прототипы средств профессиональной подготовки, функционирующие на базе ИКТ.

2. Совершенствование методологии и стратегии отбора содержания образования, методов и организационных форм обучения, воспитания обусловлено прежде всего необходимостью развития интеллектуального потенциала будущего специалиста, умений самостоятельно извлекать профессиональные знания в условиях активного использования возможностей современных технологий информационного взаимодействия, таких как Мультимедиа, Телекоммуникации, Геоинформационные технологии, в перспективе - "Виртуальная реальность". Возможности этих технологий позволяют включать новые аспекты профессиональной тематики, отражающие современные научные достижения, изучение сути которых до недавнего времени не представлялось возможным из-за трудностей, связанных с необходимостью обработки больших объемов информации для ее учебной интерпретации. Современные подходы в области формализации знания, структуризации учебного материала позволяют снять самое главное ограничение, обуславливаемое перегрузкой обучаемого. В отличие от традиционно представляемого учебного материала в виде линейных структур, современное гипертекстовое и/или гипермедийное представление учебной информации позволяет значительно увеличить объем материала, расширив как тематику, так и спектр его представления, облегчая поиск, интерпретацию, выбор нужного аспекта.

Таким образом, *в перспективе* данное направление научных педагогических исследований в российской педагогической науке предполагает, во-первых, выявление условий переструктурирования содержания обучения в соответствии с отходом от линейных форм представления учебного материала; во-вторых, включение тематики, отражающей современные достижения науки, техники, технологии; в-третьих, разработку содержания и структуры корпоративных информационных систем и сетей образовательных учреждений системы профессионального образования, а также распределенных информационных ресурсов профессиональных образовательных систем, функционирующих на базе телекоммуникаций. При этом важной инновацией является использование распределенного информационного ресурса образовательного назначения, обусловливающее тенденцию развития открытого профессионального образования.

3. Совершенствование методических систем обучения характеризуется созданием педагогических технологий, методических систем обучения, ориентированных на формирование умений осуществлять учебную деятельность в следующих областях: поиск информации, представленной в электронном виде (литературные первоисточники, научно-

